

100 տարի արագ

1915թ. հունվարի 9-ին, ծնվեց հայ նշանավոր արձակագիր Սուրեն Այվազյանը

ՀԻՍՏՈՐԻԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 6 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700: Գինը՝ 100 դրամ



Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՀԻՆԳՇԱԲԹԻ • 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015Թ. • № 25 (368)

...Այվազյանի ընտանու ճեղքներ դասական գրականությունն է:

ՀԱՄՍ ՍԱՀՄԱՆ

Խոսք՝ հոբելյանի առիթով

2015 թ. հունվարին լրացավ նորագույն շրջանի մեր լավագույն արձակագիրներից մեկի՝ Սուրեն Այվազյանի ծննդյան 100-ամյակը, եւ խիստ տարօրինակ է, որ ոչ մի արձագանք չեղավ, ոչ մի միջոցառմամբ չնշվեց այն: Ցավալի է, անշուշտ, որ ժամանակի ընթացքում մոռացության են մատնվում մեր գրողներից, արվեստի ու մշակույթի գործիչներից շատերը, ովքեր հարուստ ժառանգություն են թողել, որոշակի դերակատարություն են ունեցել գրական-գեղարվեստական առաջընթացի գործում ու մշակութային կյանքում: Գլուխգործոցներ չի ստեղծել Սուրեն Այվազյանը, բարձր կոչումների ու պարգևների չի արժանացել, բայց այն, ինչ ժառանգություն է մնացել նրանից, արժանի է համակողմանի ուսումնասիրության, ինչը մի կողմից կընդլայնի մեր պատկերացումները նախապատերազմական ու հետպատերազմյան տարիների գրական գործընթացների վերաբերյալ, մյուս կողմից նախադեպ կհանդիսանա մոռացությունից փրկելու մեր մի շարք արժանավոր գրողների:

Կյանքի ու գրական գործունեության դժվարին, խոչընդոտներով լի ճանապարհ է անցել Սուրեն Այվազյանը եւ գրականություն է բերել մի ուրույն աշխարհ, որն ինչ-որ չափով շարունակում է Ա.Բակունցի՝ լեռնաշխարհի մարդկանց կենսապատումը, նոր գույներով ու երանգներով հարստացնում զանգեզուրյան բնապատկերները:


Հայրենի եզերքին արմատներով կապված մարդիկ են Ս.Այվազյանի փոքր արձակի հերոսները: Ա.Բակունցի հերոսների շարունակություններն են նրանք՝ նոր ժամանակներում, մարդու ու ժամանակի, մարդու ու հասարակության, բնության վերաբերյալ իրենց ուրույն պատկերացումներով, դրամատիկ ապրումներով, հոգսերով ու մտահոգություններով:

Ծնվել ու մանկության տարիներն անցկացրել է Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում՝ ճաշակելով որբության դառնությունները. երեք անգամ հասանքներին կերակրող դեռատի մայրն էր, ով հաց էր թխում ու լվացք անում գյուղի հարուստների տներում՝ աչքերում միշտ թախիծ ու արցունք, հոգում՝ կարոտի անմոռանալի կսկիծ ու ցավ:

Մանկության օրերի դառը հուշերին ու Բոխչա մայրիկին հետագայում բազմիցս է անդրադարձել Ս.Այվազյանը՝ ցավով ու կարոտով, որդիական անպարփակ սիրով. «Մայր իմ, այս անգամ ես քեզ պետք է զրկեմ ինձ լսելու հաճույքից: Պետք չէ, որ դու նորից վերապրես քո ապրածը, տառապանքը հիշելն էլ տառապանք է: Թող այս իմ գիրքը կարդան քո թոռնիկներն ու իմանան, թե

էջ 4

Համարը տպագրվում է Խնձորեսկի գյուղապետ Սերյոժա Հայրապետյանի հովանավորությամբ:



Փոքր արձակի մեծ վարպետը

Մեր մեծ հայրենակիցները՝ Այվազյանի մասին


Հուշեր, հուշեր...



Գուսան Աշոս

Սուրեն Այվազյանին ճանաչում եմ 29 թվականից, երբ Սերուն եւ Սուրենը

Այվազյանի վրձին-գրիչը



Համո Սահյան

Իսկական գեղագետի գրչին արժանի էջեր կան Սուրեն Այվազյանի ծավալուն ստեղծագործությունների մեջ՝ վեպերում: Կան նաեւ մարդկային բնավորություններ-

սովորում էին Գորիսի մանկավարժական տեխնիկումում, ես էլ այդ ժամանակ երաժշտության դասեր էի տալիս:

Մեր սիրելի Սուրենը շատ էր սիրում երգն ու նվագը, նա լավ սագ էր նվագում, մեկ-մեկ էլ՝ իր լավ տրամադրության ժամանակ, երգում էր Սայաթ-Նովայի երգերից:

Մենք երեքով մտերիմ ընկերներ էինք, եւ այդ մտերմությունը հարատեւեց պարզ ու անկեղծ:

Հուշեր, հուշեր, հազար հուշեր, ա՛խ, որ մի հուշն ասեմ:

Այս քառասուղը պիտի ասեմ.

*Խորածորից դու վեր ելար,
Մորեր շարժող գրիչ առար,
Ահառու-ափառու իմ լավ ընկեր,
Միրով վարար դարար-դարար,
Քո խոհերի շարը փարար:*

1981 թվական

րի՝ մինչ այդ չհայտնագործված նրբագծեր, ժողովրդական մտածելակերպի տարրեր, ժողովրդական լեզվի համ ու հոտ: Ինչ որ է, այդ վեպերը ժամանակին գտել են իրենց ընթերցողին եւ այսօր էլ՝ վերահրատարակվելու դեպքում, ընթերցողներ կունենան:


Իմ կարծիքով Այվազյանն ուժեղ տաղանդի տեր էր, բանաստեղծական-նկարչական-գեղանկարչական զգացողությամբ եւ հարուստ նրա պատմվածքները:

«Խնձորեսկը», որն ասես հեռավոր արծազանքն է Բակունցյան «Միրավի», կարող է պատիվ բերել ամեն մի գրականության:

Մեր բարձր ու խոր բնաշխարհում ծերպ ու ծալքերի ինչքան բաքուն, չնկատված պատկերներ կմնային, եթե չլիներ Սուրեն Այվազյանի վրձին-գրիչը: Ցավալի է Սուրեն Այվազյանի հեռացումը...

Կուզենայի, որ ապրեր եւ ինքն էլ իր ձեռքով կազմեր իր երկերի ընտրանին: Բայց ինչ արած, ով էլ կազմի, այդ ընտրանու տեղը մեր դասական գրականությունն է:

Հարված Ս.Այվազյանի հուղարկավորության ժամանակ հնչած խոսքից



21 մայիսի 1981թ.

Մեր Խանգաղյան

Սուրեն Այվազյանն արդի հայ արձակի լավագույն ներկայացուցիչներից է, թողեց հարուստ ժառանգություն, կարելուր դեր խաղաց մեր գրական-գեղարվեստական առաջընթացի ճանապարհին: Ստեղծագործություններից շատերը, անշուշտ, հայ արձակի մնայուն նվաճումներից են եւ իրենց տեղն ունեն հայ դասական գրականության մեջ:

Սուրեն Այվազյանը գրականություն բե-

րեց մեր լեռնաշխարհի անկրկնելի գույները, որոնք ներշնչանքի աղբյուր էին գրողի համար:

Մեծ աշխարհի անցուղարձին առնչվում էր հարազատ երկրամասի պատկերներով, մեր լեռնաշխարհի մարդկանց ապրումներով, սովորույթներով:

Նրա հերոսներն «արյունակից» են Ակսել Բակունցի հերոսներին՝ Դիլան դայուն, Աթա պարոզ, Արթին պապին, Մինա բիրուն...

Անզուգական պատկերներ, հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագների գեղարվեստական արծարծումներ, հայրենի քարափների երգ, մեծ սեր, նաեւ մեծ ցավ, մարդկային խոր դրամաներ՝ ծնված կյանքից. ահա թե ինչ են բերում Սուրեն Այվազյանի վեպերն ու պատմվածքները:

Մի շարք ստեղծագործություններում կյանքի փիլիսոփայության այնպիսի ընդհանրացումներ են արված, որոնք արդիական են ու լինելու են այդպիսին նաեւ վաղը: Ինքն էր ասում. «Եթե ուրիշ արտասուքներն արտասուք չեն առաջացրել քո աչքերում, նշանակում է քո հոգում դեռես չի ապրում մարդը, եւ դու դժբախտ ես...»: Մարդու այդ տեսակի կողմն էր Սուրենը, եւ աշխարհընկալման այդ չափանիշներով են հյուսված նրա հերոսների կերպարները: Եվ այդ հերոսներն ապրում են արդարության ու բարու հաղթանակի համոզեալ խոր հավատով:

Գրողը մտահոգված էր իր հայրենիքի ճակատագրով՝ հայոց ճակատագրով: Իր հերոսներից մեկի շուրթերով է ասում. «Լքում եք այս պապական հողերը ու փախչում... Ես կմնամ այստեղ ու կքայլեմ մեր հանդերձի ճանապարհներով, կածաններով, որ չծածկվեն խոտով, որ անտեր չմնան մեր հողերը»:

Նա կամեցավ իր մահվանից հետո եւս մնալ հայրենի բնօրրանում, որպեսզի չկորչեն մեր հանդերձի կածանները: Դրա համար էր պատգամել. «...Ուր էլ մեռնեմ աշխարհում, ինձ կթաղեք Ձանգեղություն»:



Հովհաննես Ծիրազի հետ



Համո Սահյանի եւ Գարեգին Սեւունցիի հետ



Վախթանգ Անանյանի հետ



Գեղամ Սարյանի եւ Սրբեդան Զորյանի հետ

Խնկարկունի արժանի անուն՝ Սուրեն Այվազյան



Սուրեն Խաչատրյան
Սյունիքի մարզպետ

Նախ գողթան չքնաղ երգիչներն էին Սյունիքում. Գողթն գավառն ի սկզբանե մեր աշխարհի մաս էր կազմում: Չետո Շաղատի վարդապետարանի, ապա Տաթևի վարդապետարանի և ամբողջ միջնադարի իմաստուններն էին, հռչակաճանճն անտառներն ու գրիչները, որոնց թվում էին քաջ ռաբունապետ Հովհան Ռոտունցի, տիեզերահռչակ փիլիսոփա Գրիգոր Տաթևացին և Հայոց երկրորդ լուսավորիչ Մովսես Տաթևացին (Խոտանանցի): Չետո հայոց երկնակամարում ճառագեց հավերժական մի լուսատու՝ Ավսել Բակունց: Չետո իրենց կանթեղներով եկան նրանց լույսը վերստին ու նորովի սերմանողները՝ Հանո Սահյանն ու Սերո Խանգաղյանը, Նիկողայոս Աղոնցը, Գուսան Աշոտն ու Սուրեն Այվազյանը...

Երախտապարտ սյունեցիների համար նրանցից յուրաքանչյուրի անունը խնկարկունի արժանի է, հիշելի ու պաշտելի: Եվ նրանցից յուրաքանչյուրի հետ կապված անեմ մի իրադարձություն անմոռանալի է մեզ համար ու տոնելի:

Սուրեն Այվազյանի 100-ամյակն է լրացել:

Խոնարհվում ենք նրա հիշատակի առ-

ՍԵՐՅՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. «Սուրեն Այվազյանը Խնձորեսկի բուլոր ժամանակների ամենամեծ ու ամենանշանավոր դեմքն է»

Գրողի հորեղանի առիթով «Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Խնձորեսկի գյուղապետ Սերյոժա Հայրապետյանը



– **Պարոն Հայրապետյան, նախ՝ Սուրեն Այվազյանը Ձեզ համար, Խնձորեսկի ու Խնձորեսկցու համար:**

– Սուրեն Այվազյանը մեր հպարտությունն է, Խնձորեսկի պատմությունը, Խնձորեսկի սովորույթներն ու ավանդույթները գեղարվեստականացրած գրողը, իր գյուղի, իր երկրամասի, իր հայրենիքի մեծ նվիրյալը: Նման մարդկանց մասին երբեմն նաեւ վատ ու հակասական բաներ են պատմում, բայց Սուրեն Այվազյանի մասին, հավատացե՛ք, ոչ մի վատ բան չեմ լսել: Աշխարհի ամենաբարի, ամենամաքուր մարդկանցից մեկն էր, հունամիստ էր՝ բառի ամբողջ իմաստով:

Նրա ստեղծագործություններից հայրենասիրություն է ծորում, նրա հերոսների, գրական կերպարների օրինակը մեզ համար՝ դեռեւս պատանեկության տարիներից, ոգեշնչման աղբյուր է եղել և շարունակում է մնալ այդպիսին:

Սուրեն Այվազյանն այս հողից ծնված անհատականությունն է, ով կարողացավ 20-րդ դարի երկրորդ կեսին իր համեստ ներդրումն ունենալ հայ արձակի, մեր գրա-

կան-մշակութային կյանքի զարգացման գործում:

Սուրեն Այվազյանը Խնձորեսկյան ծագումով այն նշանավորների բույլի հանրահայտ ներկայացուցիչն է, ունով ոչ միայն Խնձորեսկը, այլև Գորիսն ու Սյունիքը ներկայանում են հոգեւոր Հայաստանին և արժանավոր մաս կազմում նույն հոգեւոր Հայաստանի: Ահա՛ Աշոտ և Արամ Սաթյաններ, Տաթևիկ Սազանդարյան, Գարեգին Սեւունց...

Բայց ես, այդ բոլորով հանդերձ, համաիտ չեմ այն շեշտադրումին և մոտեցումին, որ Սուրեն Այվազյանին փորձում են ներկայացնել ավելի շատ Խնձորեսկի համապատկերի վրա, որքան էլ այդ մղումը պայմանավորված լինի տեղական հայրենասիրությամբ:

Սուրեն Այվազյանն ամբողջ հայ ժողովրդին է, և, ինչպես Հանո Սահյանն է ասում, նրա «ընտրանու տեղը մեր դասական գրականությունն է»:

– **Ինչպե՞ս է հիշում Խնձորեսկն իր նշանավոր գավակին՝ Սուրեն Այվազյանին:**

– Քայլեր, խնդրեմ, Խնձորեսկի փողոցներով, գրուցե՛ք մեծ ու փոքրի հետ և հարցե՛ք՝ ո՞ւմ գիտեք հայ ժողովրդի նշանավոր գավակներից: Տարբեր մարդկանց անուն կլսեք: Բայց բոլորն առաջինը Սուրեն Այվազյանի անունը կտան:

Նրա ծննդյան օրը, առանց չափազանցության, մեր տոնացույցի կարելի է օրերից է: Ամեն տարի հունվարի 9-ին համագյուղացիներն այցելում են նրա շիրմին, հարգանքի տուրք մատուցում, վերհիշում գրողի ստեղծագործությունները, հուշեր պատմում, քննարկում գրողի ստեղծագործություններին առնչվող նոր հրապարակումները:

Այդ օրը միջոցառումներ են կազմակերպվում դպրոցում, մշակույթի տանը:

– **Չե՞ք կարծում, որ Սուրեն Այվազյանի հիշատակն ինչ-որ կերպ հավերժացնելու խնդիր ունենք դեռ:**

– Մեծ իմաստով Սուրեն Այվազյանի հիշատակը չի էլ հավերժացվել ըստ պատշաճի:

Խնդիր ունենք, նախելառաջ, գյուղի կենտրոնում կան գրողի առանձնատան բակում՝ շիրմի վրա, հուշարձան կանգնեցնել: Ինչո՞ւ Գորիսում, նաեւ մայրաքաղաքում նրա հիշատակը հավերժացնելու մասին նույնպես չմտածել: Ավելի քան համոզված եմ: Սուրեն Այվազյանն արժանի է նման վերաբերմունքի:

– **Գրողը կենդանության օրոք ցանկություն էր հայտնել, որ գյուղի իր առանձնատունը վերածվի տուն-թանգարանի:**

Շենքի կարգավիճակի հարցում էլ ինչ-որ անորոշություն կա: Բայց Այվազյանի եղբորորդին՝ Վանիկ Այվազյանը, պատրաստակամություն է հայտնում շենքը նվիրաբերել համայնքին՝ պայմանով, որ այն դառնա տուն-թանգարան: Հիմա ի՞նչն է խանգարում, ինչո՞ւ զոնե որոշակիություն չմտցնել շենքի հարցում. չէ՞ որ պահպանության խնդիր էլ կա: Կամ՝ որքանո՞վ է սազական գյուղի կենտրոնից դեպի այդ առանձնատուն



Ամեն տարի Ս.Այվազյանի ծննդյան օրը՝ հունվարի 9-ին, և մահվան օրը՝ մայիսի 19-ին, հայրենակիցները, գրչակից ընկերներն ու ստեղծագործությունների երկրպագուներն այցելում են նրա շիրմին և հարգանքի տուրք մատուցում գրողի հիշատակին:

խոսք հոբելյանի առիթով

Խոսք հոբելյանի առիթով

Փոքր արձակի մեծ վարպետը



Սարսին Գիսլայան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Էջ 1

Ինչպես դու աշխարհում մնացիր մե՞նակ ու անօգնական եւ քո դեռ չթելավորված ճուտերն առած թելերիդ տակ եւ, աչքերիդ մեջ կորած մի հույս՝ սպասեցիր փրկության»:

Նախնական կրթությունը հայրենի գյուղում ստանալուց հետո Այվազյանը սովորում է Գորիսի մանկավարժական տեխնիկումում, որն ավարտելուց հետո, որպես հայրց լեզվի եւ գրականության ուսուցիչ, աշխատում է տարածաշրջանի մի շարք գյուղերում:

1942թ. Այվազյանն ավարտում է հարեւան հանրապետության մայրաքաղաքի համալսարանի բանասիրական ֆակուլտետում ու մեկնում ռազմաճակատ: Պատերազմից հետո՝ մինչեւ 1952թ., աշխատում է այդ հանրապետության «Կոմունիստ» հայերեն թերթում: 1953թ. վերջնականորեն տեղափոխվում է Երեւան ու մինչեւ կյանքի վերջը (1981թ. մայիսի 19-ը) զբաղվում է գրական գործունեությամբ: Գրողի աշյունն ամփոփված է հայրենի հնձորեսկ գյուղի՝ իր ձեռքով տնկած այգում:

Այվազյանի առաջին պատմվածքները, ակնարկներն ու քննարկական մանրապատումները տպագրվել են «Նորհարկ»-ի գրող» եւ «Հոկտեմբեր» ամսագրերում: Նրա գրական մուտքը նշանավորվեց «Անավարտ գորգը» (1947) գրքով:



որին հաջորդեցին «խորածորցիք», «Լեռնցիներ» (1955), «Խիղճը» (1955) պատմածքների ժողովածուները, «Տուր ձեռքը, կյանք» (1962), «Անշեջ կրակների կղզին» (1966) վիպակները, «Բարի առավոտ» (1964), «Ճակատագիրն հայրց» (1967), «Առավոտ լուսո» (1977) վեպերը: Այվազյանի պատմվածքների «ավազանը» հայրենի հնձորեսկ գյուղն է՝ իր նահապետական վարք ու բարքով, սովորություններով ու ավանդույթներով, մարդկային յուրահատուկ հարաբերություններով: Նրա պատմվածքների հերոսները իրական մարդիկ են, որոնցից շատերին գրողը ճանաչում էր մանկության տարիներից: Նրանցից մեկն է Շափաղաթ պապը, ով ռազմաճակատում զոհված յուրաքանչյուր որդու հիշատակը հավերժացնում է աղբյուր-հուշարձանով: Հինգ հուշարձան-աղբյուր է կառուցել Շափաղաթ պապը եւ բոլորի վրա էլ թողել է նույն տապանագիրը՝ «Խմեցիր, հալալ լինի, թե հալալ ես ու պարզ, ինչպես այս աղբյուրը»:

Ժողովրդական իմաստության մարմնացումն է Շափաղաթ պապը, եւ նրա փիլիսոփայական պարզ ու այդ պարզության մեջ անչափ խորիմաստ մտասելեռումները՝ մարդու, մարդկայինի, հայրենիքի ու

հողի, սիրո ու ատելության վերաբերյալ կյանքի համար անհրաժեշտ դասեր են:

Իրենց լեռների պես հպարտ են խորածորցիք՝ պատմական հնձորեսկի մարդիկ՝ Ունանաց Ունանը, Մուսուրանց Խաչի ապերը, Սուկլունց Լեւոնը, Գիլվանց Աթան, Թովաչի Խաչանը («Փրթոսի ընկուզեհին»), համանուն պատմվածքի հերոս Լուռ Լալազարը, Շամոն, Թեոսը, Սաղաթելը («Թխկուտի ծորում»), Մեհրին («Վիշտը»), Վարդազարը, Ջավաղը («Գողը»), ծերունի Հակոբյանը («Հեղիք»), Օհանը («Մարդը»), ովքեր ընդգծված անհատականություններ են, ապրել են հասարակական-քաղաքական ցնցումների տարբեր ժամանակներում՝ Առաջին համաշխարհային, կոլեկտիվացում, Հայրենական մեծ պատերազմ, հետպատերազմյան ծանր տարիներ, ենթարկվել են հալածանքների, բռնությունների, բայց չեն կորցրել անհույս արժանապատվությունը: «Կյանքը շատ դառն էր, ամեն օր արյուն, սպանություն, ամեն օր մայրերի սուգ, մայրերի ճիչ» («Իմ մանկությունը»), մի կտոր հացի համար տաժանակիր աշխատանք. «Եղել է, որ իմ տերն ինձ կանչել է. «Այ գյադա, ձին բեր, դե կռացիր» ու ծանր ոտքը դնելով մեջքիս բարձրացել է ձիու վրա: Ոտքի տակ չըթացել է մեջքս, աչքերս մթնել են... Եղել է, որ ես օրն ամբողջ աշխատել եմ իմ փոքրիկ ուժերով, բայց մնացել եմ քաղցած... («Որդուս»): Հայրենի լեռներն են մեցուկ եղել խորածորցիներին. «Հազար լեռներ, քանի-քանի անգամ դուք պահել եք ինձ ձեր մութ ու ապահով գրկի մեջ եւ թույլ չեք տվել, որ մայրս շաղ տա մագերը մի կտոր հացի համար քարկոծ արված իր որդու դիակի վրա: Լեռներ հայրենի, դուք իմ երկրորդ մայրն եք եղել» («Որդուս»):

Այվազյանը բնապատկերներ կերտելու մեծ վարպետներից մեկն է մեր գրականության մեջ: Անկրկնելի են նրա խորածորցի գույները՝ մերթ քանձոր ու խիտ, մերթ քանձոր ու տաք՝ մարմնագույնի եւ կարմիրի նուրբ երանգներով: «Չորերից ամպի քուլաներ են ելնում, բարձրանում են, հավվում լեռնալանջերին, դառնում ցողիկներ, որոնք վաղորդյան արելի տակ շողում են ծաղիկների վրա, ծաղիկների ու արելի գույներով» («Չորերի ձայնը»): Չորերից առկայծող գույները ձայնային ելեւթներ ունեն, համ ու հոտ ու խիստ համահունչ են մայրության թրթիռը կրծքի խորքում առաջին անգամ զգացող Աթազի ապրումներին, Թխկուտի ծորում դարբնի աղջկան սպասող Շամոյի հոգու ելեւթներին, առաջին համբույրից խենթացած Շուշանի սրտի թրթռոցներին:

Այվազյանը պատմվածքի դասական կառուցվածքը վարպետորեն հարստացնում է նուրբ ներթափանցումներով, հերոսների ներաշխարհի խորքային բացահայտումներով: Այս տեսանկյունից նրան կարելի է համարել Ալսեի Բակունցի ավանդույթների լավագույն շարունակողներից մեկը մեր գրականության մեջ: Կարծում ենք՝ ժամանակն է նրա ժառանգությունը ենթարկելու գրականագիտական հիմնավոր քննության:

«Գրական թերթ», 10 հուլիսի 2015թ., N24 (3257)

Հարցազրույց՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ
6 սեպտեմբերի 2015թ.
գ. Խնձորեսկ

Հարցազրույց համարին

ՍԵՐՅՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. «Սուրեն Այվազյանը Խնձորեսկի բոլոր ժամանակների ամենամեծ ու ամենանշանավոր դեմքն է»

Էջ 3

ձգվող ճանապարհի վիճակը:

– Հիմն այդ փողոցը համայնքի ուժերով բարեկարգում ենք եւ մոտ մեկ ամսում ավարտին կհասցնենք: Գյուղի մուտքի մոտ էլ՝ վահանակի միջոցով, այցելուներին կհիշեցնենք գրողի տան մասին եւ ցույց կտանք ճանապարհը, մանավանդ որ քիչ զբոսաշրջիկներ չեն այցելում հին գյուղ:

Գրողի առանձնատան հարցն ինքս էլ քննարկել եմ Վանիկ Այվազյանի հետ, ուրախ եմ, որ շենքը նվիրաբերում է համայնքին: Կարելի է ասել միայն տեխնիկական խնդիր է մնացել, բայց...

Եթե շենքը մեզ հանձնելուց հետո դարձյալ մնալու է նույն անմխիթար վիճակում, ապա դա կլինի կարգավիճակի սոսկ ձեւական փոփոխություն: Ներկայումս ֆինանսական միջոցներ ենք հայթայթում, ներդրող փնտրում՝ շենքը հիմնանորոգելու համար:

Ինչ վերաբերում է տուն-թանգարան դարձնելուն, ապա ակնկալում ենք հանրապետության մշակույթի նախարարության աջակցությունը: Գրողի տուն-թանգարանն այն հաստատությունը չէ, որ հիմնադրենք՝ ձեւավորենք առանց մասնագիտական մոտեցումների: Սա այն դեպքը չէ, որ կարելի

է սիրողական մոտեցում ցուցաբերել: Պատրաստվում են այդ հարցով դիմել ՀՀ մշակույթի նախարարին:

– **Գրողի 100-ամյակն էլ, կարծեք, չի նշվում ըստ պատշաճի: Բայց դեռ ժամանակ կա, միզուցեք բայլե՞ր ձեռնարկվեն այդ ուղղությամբ:**

– Սուրեն Այվազյանի պես նշանավոր մարդու հոբելյանը, անտարակույս, պետք է նշվի հանրապետության մասշտաբով, հանրապետության բարձր ղեկավարության նախաձեռնությամբ ու ակտիվ դերակատարմամբ: Եվ մենք հավատում ենք, որ մինչեւ տարեվերջ Սուրեն Այվազյանը մեզն ազնապատվական կարժամանա:

Իսկ Խնձորեսկը... Մեր հնարավորության սահմաններում մշել ենք եւ նոր միջոցառումներով կնշանավորենք գրողի հոբելյանը:

– **Գրողի գրական ժառանգության արժեւորման, նորովի գնահատման խնդիր նույնպես կա: Իհարկե, դա գրականագիտության, գրաքննադատության ոլորտի հարց է, բայց դե չնոռանանք նաեւ հայտնի ասացվածքը՝ «Խաչը տերով է գորավոր»:** Գիտության բնագավառում էլ, խոստովանենք,

Կերպվել են հայ հերոսներ՝ պատմական հոգեբանության թանձր նստվածքով



Ղափիթ Գաստարյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Հայոց լեզու և գրականություն» գիտամեթոդական ամսագրի գլխավոր խմբագիր

Սուրեն Այվազյանը (1915-1981) ծնվել է Խնձորեսկում: 1934-ին ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը ու որպես ուսուցիչ աշխատել Խանաձախ և Տեղ գյուղերում: 1942-ին ավարտել է Բաքվի համալսարանի բանասիրական բաժանմունքի հայկական բաժինը: 1942-1945 թթ. մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին: Պատերազմից հետո աշխատել է «Կոմունիստ» թերթի խմբագրությունում: 1953-ից բնակություն է հաստատել Երեւանում:

Ս. Այվազյանն արձակագիր էր, գրել է պատմվածքներ, վիպակներ, վեպեր, մանրապատումներ: Տպագրվել են հետեւյալ գրքերը՝ «Անավարտ գործը» (պատմվածքներ, 1947), «Խորածորցիք» (պատմվածքներ, 1951), «Լեռնցիներ» (վեպ, 1955), «Խիղճը» (պատմվածքներ, 1957), «Տուր ձեռքը, կյանք» (վիպակ, պատմվածքներ), «Անշեշ կրակների կղզին» (վիպակ, պատմվածքներ, 1960), «Տուր ձեռքը, կյանք» (2-րդ մաս, 1962), «Հովիվը» (պատմվածք, 1963), «Բարի առավոտ» (վեպ, 1964), «Տրաղացի ճանապարհին» (պատմվածք, 1964), «Ճակատագիրն հայոց» (վեպ,

Պատմվածքների փառանդավոր հեղինակը



Սերգեյ Սարինյան

Առանց ընդհանուր խորագրի, առանց հեղինակի անվան հիշատակության մի թղթապանակ՝ բոլորովին էլ ոչ խնամքով մեքենագրված արձակ էջերի պարունակությունը: Բայց եթե նույնիսկ այստեղ չլինեն մանուկուս տպագրված «Կերպի օրը» պատմվածքը, գրական ինքնատիպությունը կռահող աչքը չէր կարող չգուշակել, որ այդ էջերի հեղինակը՝ պատկերման իր յուրօրինակությամբ, ոճի առանձնահատկությամբ և կյանքի իր ընկալմամբ, ոչ այլ ոք է, քան պատմվածքների տաղանդավոր հեղինակ Սուրեն Այվազյանը: Այդ արդեն գրողի համար լուրջ արժանիք է, յուրաքանչյուր գրողի համար ցանկալի նպատակ, որին, ի դեպ, Ս.Այվազյանը հասել է ոչ այնքան

1966), «Բարձունքի վրա» (պատմվածք, 1969), «Կա եւ ետմահու կյանք» (վիպակներ, պատմվածքներ, 1971), «Գարունս ծյունների տակ» (մանրապատումներ, 1972), «Առավոտ լուսո» (վեպ, 1976), «Խնձորեսկ» (վեպ, 1982), «Ասուր, հե՛յ, Ասուր...» (վիպակ, 1985):

Այվազյանը գրականություն բերեց թե՛ իր բնաշխարհի ու հատկապես ծննդավայր Խնձորեսկի կյանքն ու կենցաղը, թե՛ ժամանակակից կյանքը, թե՛ պատմական անցյալը:

17-18-րդ դարերի ազատագրական պայքարն առանձնահատուկ տեղ ունի հայ պատմավիպասանության մեջ, ինչն արտահայտվել է նաեւ Այվազյանի «Ճակատագիրն հայոց» և «Առավոտ լուսո» վեպերում: Առաջինում ազգային գործիչ Իսրայել Օրու, երկրորդում՝ մեծագույն լուսավորիչ, նոր ժամանակների ազգային ոգու վերածննդի խոչորագույն ներկայացուցիչ Խաչատուր Աբովյանի կյանքի ու գործունեության պատկերումով գեղարվեստորեն յուրացվում է հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմությունը: Օրին, Եվրոպայից գալով Ռուսաստան և բանակցելով Պետրոս Մեծի հետ, Աբովյանն իր ամբողջ գործունեությամբ ջանում էին օգտակար լինել իրենց ժողովրդին՝ նրա փրկության հույսը կապելով հյուսիսի հզոր հարեւանի հետ: Հայացքի այս ուղղությունը պայմանավորված էր պարսկաթուրքական ծանր ճնշումներով, ինչն էլ ժողովրդի մեջ բորբոքել էր ազատագրական պայքարի բոցը: Վեպերը հարուստ են 17-18-րդ դարերի արեւելքի ու արեւմուտքի դիվանագիտական հարաբերությունների պատմությամբ, հայ եւ հարեւան ժողովուրդների կենցաղի, սովորությունների նկարագրություններով: Ամենակարեւորը՝ կերտվել են հայ հերոսներ՝ պատմական հոգեբանության թանձր նստվածքով:

«Սյունյաց երկիր», N10, 2011թ. Հատված «Գրական Գորիս» հոդվածից

գրական մաքառման ճանապարհով, որքան գրողի իր բնածին շնորհով: Սոսկ գրական ազդեցությամբ կարելի է արդյոք հասնել այնպիսի բնականության, այնպիսի թրթռուն անկեղծության, ինչպիսին առկա է «Տուր ձեռքը, կյանք» վիպակում:

Գրախոսվող ժողովածուի առանցքը «Տուր ձեռքը, կյանք» վիպակն է, որն ունի ինքնակենսագրական բնույթ և վերաբերում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին գյուղում կատարվող սոցիալ-կենցաղային տեղաշարժերին: Վիպակը պատմվում է առաջին դեմքով՝ 10-12 տարեկան պատանեկի հայեցակետով: Այսպես, վիպակի առանձնահատկություններից մեկն այն է, որ հեղինակը պահպանել է հերոսի հոգեբանական և մտավոր հնարավորությունը, որը եւ նկարագրված դեպքերը դարձնում է գեղարվեստորեն համոզիչ ու ճշմարտացի:

Նկարագրվող ժամանակաշրջանի իրադարձությունների և կյանքում կատարվող տեղաշարժերի մասին շատ է գրվել մեր գրականության մեջ, բայց քչերն են կարողանում պահպանել չափի զգացումն ու ներկայացնել ճշմարտացի: Ոմանց երկերում ուղղակի այն պատկերն է ստացվում, թե սովետական կարգերի հաստատման հենց հաջորդ օրը կյանքը արմատապես փոխվում է և ստեղծվում է սոցիալական բարեկեցության եւ իրավունքի մի կատարյալ ներդաշնակություն: Այդ ճիշտ է, այդ-

ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ. դիմանկարի փորձ



Էմմա Նիկոյան

ՀՀ ԳԱԱ Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՅՅՈՐԴ

Սկսած 1950-ական թվականների կեսերից, պայմանավորված հասարակական-քաղաքական մթնոլորտի առողջացման միտումներով, գրական-գեղարվեստական զարգացումները մտան նոր հուն, սկսվեց առաջընթացի նոր շրջափուլ: Թվում էր, թե նոր շրջափուլը պետք է սկսվեր պատերազմի հաղթական ավարտից հետո, որովհետեւ պատերազմի տարիներին համեմատաբար ազատություն ձեռք բերած գրականության ընթացքն այդպիսի հույսեր էր ներշնչում: Բայց այդպես չէր լինում:

1946թ. օգոստոսի 14-ի ՍՄԿԿ կենտկոմի որոշումը՝ «Չվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին, այնուհետեւ 1946թ. օգոստոսի 26-ի («Դրամատիկական թատրոնների խաղացանկի և նրա բարելավման միջոցառումների մասին»), նույն թվականի սեպտեմբերի 4-ի («Մեծ կյանք» կինոնկարի մասին»), ապա 1948թ. փետրվարի 10-ի («Վ.Սուրաբյուրի «Մեծ բարեկամություն» օպերայի մասին») որոշումները գրական զարգացումները վերադարձրին 30-ական թվականներ. պատերազմի տարիները՝ գրողների նկատմամբ ցուցաբերած որոշակի ազատությունը նորից սահմանափակվեց թեմատիկ ու գաղափարախոսական զսպաչապիկներով: Գրողները նորից ստիպված էին խուսափել իրականության կոնֆլիկտային իրադարձությունների, անձնական ու հասարակական բախումների բացահայտումներից:

Առաջընթացի նոր շրջափուլը սկսվեց «Չճիակ» տարիներին, երբ մթնոլորտային փոփոխությունները հատկանշվեցին գեղարվեստական մտածողության նոր վերելքով:

Գրողների ստեղծագործական որոնումները, որոնք միտված էին դեպի գրականության տեսադաշտի ընդլայնում, անցյալի թեմատիկ ու գաղափարական սահմանափակումների հաղթահարում, պակասեցին արգասավորությամբ: Բացվեց ավագ սերնդի ներկայացուցիչների «երկրորդ շնչառու-

թյունը», ասպարեզ եկան նոր ու կարող ուժեր՝ աշխարհընկալման նոր եղանակներով ու մոտեցումներով, մարդու, ժամանակի, բարոյահոգեբանական արժեհամակարգերի վերաբերյալ իրենց յուրահատուկ պատկերացումներով: Դասականների կողքին գրական առաջին հաջողված փորձերն էր անում 40-ականների սերունդը: Խիստ ուսանելի է այդ տարիների գրաքննադատության փորձը: Գրական ոչ մի նշանակալից երեւոյթ դուրս չէր մնում նրա ուշադրությունից: Ծավալվում էին բուռն բանավեճեր ու քննարկումներ, անաչառ քննադատությամբ արձանագրվում էին նվաճումներն ու բացթողումները, անզիջում պայքար էր մղվում գրական խոտանի դեմ...

Տասնամյակների հեռավորությունից, արժանին մատուցելով այդ տարիների քննադատությանը, պետք է նշել, սակայն, որ ոչ բոլոր գրողներն են արժանացել պատշաճ ուշադրության, նույնիսկ այնպիսի արձակագիրներ ու բանաստեղծներ, ովքեր որոշակի դերակատարություն են ունեցել գրական շարժման ընդհանուր համապատկերում:

Գրականության պատմությունը միայն անվանի գրողների պատմությունն չէ, եւ պատշաճ ուշադրության չարժանացնել, ինչու չէ, նաեւ առանձին ուսումնասիրություններով չարժեւորել, օրինակ, Գ.Սեւունցի, Լ.Հուրունցի, Բ.Սեյրանյանի, Ռաֆայել ու Վալտեր Արամյան երթայրների, Գ.Երիկյանի, Սկր.Սարգսյանի, Լ.Պուրյանի եւ այլոց թողած գրական ժառանգությունը, արդարացի չի լինի, որովհետեւ «նրանց ստեղծագործությունների համակարգված ուսումնասիրությունն, անկասկած, խորապես կընդլայնի նորագույն շրջանի գրականության վերաբերյալ մեր պատկերացումներն ու իմացությունը շրջանակները, կամբողջացնի գրապատմական ժամանակաշրջանի գրական-գեղարվեստական զարգացումների համապատկերը, նախադեպ կհանդիսանա մոռացությունից փրկելու մեր մի շարք արժանավոր գրողների»(1): Ուսումնասիրողների կողմից հանդիսավոր անտեսվել է նաեւ Սուրեն Այվազյանը՝ հետաքրքիր ու սեփական ձեռագիր ունեցող մի գրող, ում վեպերից ու վիպակներից շատերը, հատկապես պատմվածքները, խոհափիլիսոփայական ու քնարական մանրաքանդակներն իրենց հետաքրքիր հարցադրումներով, կերպարաստեղծման ու պատկերավորման յուրահատկություններով, ինքնատիպությամբ, հուզական լիցքավորումներով ու լեզվառճակման մի շարք յուրահատկություններով այսօր էլ, անշուշտ, հետաքրքիր կարող են լինել ընթերցողի համար:

Յուրաքանչյուր գրող գրականություն է բերում իր ծննդավայրի անկրկնելի գույ-

էջ 20

պիսի ուռա-ագիտացիան մեզ պետք չէ: Ս.Այվազյանն այս բնագավառում ամենից ավելի ճշմարտացի է, եւ այստեղ առկա է գրողի անկեղծության զգացումը: Այվազյանի վիպակը ցույց է տալիս նոր կյանքի կառուցման դժվարությունները, բայց այն տեմպերով, որ հինը կործանվում է նորը հաղթանակում է անխուսափելիորեն, որ սոցիալիզմի գաղափարը մուտք է գործում գյուղ քայլ առ քայլ, բայց հիմնավորապես: Եվ կյանքի փոխանցման այդ բարդ հանգույցներում դեռեւս հավանական է Շարմաղի ողբերգությունը:

Վիպակում կան դեպքեր ու դեմքեր, որոնք հիմնականում տպավորիչ են, հերոսների հոգեբանական աշխարհը ներկայացված է նուրբ զգացումով: Թվում է, թե ընկալում են կյանքի ավելի մեծ բովանդակություն, վերապրում են ավելի շատ մարդկանց տարբեր ճակատագրեր, քան հնարավոր էր ներկայացնել շուրջ հարյուր էջի

սահմաններում: Պատմող հերոսը՝ Շոմիկ, նրա մայրը՝ Շարմաղը, Շահմարը, Վելիխանը, Առաքելը, Կուքանը, Եղսան և ուրիշները լավ վրձնով գծագրված պորտրետներ են՝ իրենց բնավորությամբ, արտաքինով: Մի փոքրածավալ վիպակի համար շատ չէ՞ արդյոք այսքանը եւ այդ չի՞ խոսում արդյոք կերպավորելու հեղինակի ակնհայտ տաղանդի մասին:

Չափի զգացում, նյութի ընդգրկում՝ առանց որեւէ ավելորդաբանության. այս է վիպակի մյուս արժանիքը: Կարելի է, իհարկե, շատ խոսել վիպակի կերպարների, սյուժեի եւ այլ հարցերի մասին, բայց այժմ դրա անհրաժեշտությունը չկա: Նշենք միայն, որ բնության զգացողությունը, լիրիկական անմիջականությունը, միջավայրի կոլորիտը եւ ոճի շիժմոսային իրենց հերթին առանձին գեղարվեստական հմայք են տալիս երկին:

14.05.59

Գրականագիտություն

Գրականագիտություն

Սեւակ Արզումանյանը Սուրեն Այվազյանի ստեղծագործություններից մի քանիսի մասին



Սեւակ Արզումանյան

Կարապի երգ... այն էլ անավարտ: Այսպիսին է Սուրեն Այվազյանի վերջին ստեղծագործության ճակատագիրը: Ժամրային նկարագրով՝ վիպակ է, վերնագրված՝ «Ասուր, հե՛յ, Ասուր»: Արձակ բանաստեղծություններից մեկում, մոր ու աշխարհի «հարաբերությունը» պարզելու համար, գրողը մոր շուրթերով ասում է. «Ասուր, հե՛յ, Ասուր, ա անտեր, անտիրական բալա...»: Սա եւ ցավ է, եւ տառապանք. եւ բողոքի ճիչ: Իսկ ամենից առաջ՝ մայրական ծով սրտի չափ, ծով սրտից բխած սեր ու կարոտ: Սուրեն Այվազյանը, սակայն, հառաչանքի պես թռած ու իմաստային քանի՜ շերտեր կուտակող այդ խոսքից շեշտել է նրա սոցիալական ու հայրենասիրական հնչեցումը:

«...Տարիներ են անցել, բայց իմ ակամեջում դեռ հնչում է մորս ժայռեղեն ձայնը. «Ա՛ անտեր, անտիրական բալա...»: Եվ այդ ձայնի արձագանքը երբեք ու երբեք չի մարի մեր լեռներում, քանի աշխարհում դեռ որք կա ու անտեր:

Սիրիի, որդիս, մեր լեռները եւ ավանդիկ այդ սերը քո որդուն:»

Այս տողերը գրվել են շուրջ երեսուն տարի առաջ՝ 1956 թվականին:

Որքա՞ն պայծառ տողեր, պայծառ էջեր է նա մկիրել մորը դրանից հետո, փոքրակամ ու ծավալուն քանի՜ գործերում է նորից ու նորից վերադարձել մոր կերպարին: Հառաչանքի ու ցավի հնչեցումը միշտ պահպանվել է, բայց զարմանալի ձևով հեղինակային հայացքից անպակաս են եղել լույսն ու լավատեսությունը: Ասեմք ով մոտիկից գիտեր, ճանաչում էր Սուրեն Այվազյանին, նրա համար զարմանալի չպիտի լինի այդ հայացքը: Որբության, դառնության քարեղեն դիմադրություններ է հաղթահարել, բայց միշտ «հավատի կրակով է դիմացել կրակների»: Քիչ փորձություններ չեն անցել գլխով. «Վիրավոր սիրտը քեզնու է լինում, բայց չանհիծեցի ես կյանքը ու միշտ բարի աչքով նայեցի բախտին»:

Եվ բախտը սեւերես չորոջեց. «Ճակատագիրն հայոց», «Առավոտ լուսու», «Տուր ձեռքը, կյանք», «Բարի առավոտ», «Խնձորեսկ» վեպերի, բազմաթիվ բարձրարվեստ պատմվածքների, տասնյակ մեծ ու փոքր ուրիշ ստեղծագործությունների հեղինակը՝ Սուրեն Այվազյանը, դարձավ ետպատերազմյան սովետահայ արձակի անվանի դեմքերից մեկը, իր բազմաժանր երկերով՝ վեպ, վիպակ, պատմվածք, նովել, արձակ բանաստեղծություն, մանրաքանդակ, ակնարկ, նոթագրություն եւ այլն, լուրջ ավանդ բերեց արդի հայ գեղարվեստական շարժմանը:

Ամժամանակ եղավ կորուստը, սակայն գրողը վաստակած հեռացավ աշխարհից: Ու ահա նրա կարապի երգը՝ անավարտ «Ասուր, հե՛յ, Ասուր» վիպակը:

Վիպասանի գրական ուղեծրի շղթայում այս ստեղծագործությունը եւ բնական է, եւ հավանալի: Հայրենի բնաշխարհից՝ Չանգեզուրից, մանկության ու պատանեկության տարիներից քաղած հուշերն ու տպավորությունները հորձանք-հորձանք, գեղարվեստական հիանալի պատկերակերպների փոխարկված՝ վերակեն-

դանացել են նախորդ շատ գործերում, սակայն չեն սպառվել: Վերջին վիպակը վերստին մեզ տեղափոխում է գրողի վաղ շրջանի կյանքի արահետները, ինքնակենսագրական նյութի հենքով բացում մարդկային հոգու շատ հետաքրքիր ծայրեր:

Այո, մանկապատանեկան թեման Սուրեն Այվազյանի գրական «հոգսերից» էր: Մի շարք հոգեբանական պատմվածքներում, արձակ բանաստեղծություններում եւ մանրաքանդակներում նա հուզական անկեղծ շեշտերով է պատկերել մանկության ու պատանեկության տարիների հուշ-եղելությունները: Պատկերել է գերազանցապես թախծախառն տրամադրությամբ կամ, ինչպես ինքն է հաճախ խոստովանում, «դառնաբաղդ» մտորումներով:

Հույզերի ու տրամադրությունների այդ ընկալումները տեսական զգացումներ են եղել գրողի համար: Պատճառը՝ կենսափորձն էր, տեսած ու ապրած կյանքի դասերը:

Այդ կենսափորձից ու դասերից է ծնունդ առել նաեւ. «Տուր ձեռքը, կյանք» վեպը, ուր գրողի նման հույզերն ու տրամադրությունները դարձել են սոցիալ-հոգեբանական բանձրացումներ եւ ռեալիստական ճշմարտացիությամբ վեր հանել մեր կյանքի մի ամբողջ ժամանակահատվածի պատկերը:

«Ասուր, հե՛յ, Ասուր» վիպակը գաղափարական ու գեղարվեստական սկզբունքներով հիշեցնում է «Տուր ձեռքը, կյանք» վեպը: Երկու ստեղծագործություններում էլ իբրեւ գլխավոր գործող անձ հանդես է գալիս ինքը՝ հեղինակը: Սյուժետային զարգացման հանգույցում եական դեր է խաղում մոր կերպարը, եւ, որ ամենից կարեւորն է, վիպակում երկու գործերում աշխարհաճանաչողության ու աշխարհավերաբերմունքի դիտակետ է դառնում մեծ կյանքի շենքը դեռ հաստատորեն ոտք չդրած նախ՝ մանկան, այնուհետեւ՝ պատանու աչքերով աշխարհին նայող Ասուրի հայացքը:

Մանկության ու պատանեկության թեման Սուրեն Այվազյանը զարգացնում է մարդ-անհատի ձեւավորման բարդ ընթացքը ցույց տալու համար: Դա ինչ-որ ֆիզիոլոգիական պարզ պրոցես է, այլ մարդու լինելության, իբրեւ հասարակական անհատի կազմավորման անչափ դժվարին մի ճանապարհ, որի խաչուղիներում բախվում են սուր կրքեր, դասակարգային տարբեր շահեր, բազմաթիվ բնավորություններ:

Վիպակը բացվում է «Իմ պարտեզում» մուտքով, որը յուրովի ծրագրային արժեք ունի եւ խտացնում է գրողի սերն ու հավատը, նրա համոզմունքները կյանքի ու մարդու վերաբերյալ: Գեղարվեստական ու հոգեբանական շատ գեղեցիկ մի կտոր է դա, ուր այնքան զուլայված երեսում է հեղինակը՝ բարի, մաքուր ու անմիջական, պարզ ու պայծառ: «Երբ ես փոքր էի, - գրում է Սուրեն Այվազյանը, - ուզեցի, որ մեր տան առաջ պարտեզ ունենանք: Պարտեզում ծաղիկներ լինեն, ծառեր եւ մի մեծ ընկուզենի, որ ընկերներիս հետ պահանոցի խաղան՝ թաքնվեն նրա թանձր սաղարթների արանքում: Որ ամռանը, լուսնյակ գիշերներին, նստենք նրա տակ եւ, ծաղիկների հոտը շնչելով, նայենք աստղերին, երազենք ու զարմանանք: Որ այդ ընկուզենու տակ մեզ հետ նստի եւ ջրաղացայան Ներսեսը՝ պատմություններ անի, մենք էլ լսենք ու չհագենանք»:

Լուսավոր այս երազին փոքրիկ Ասուրը փորձում է մարմին տալ. մի պարկ հող է բափում կտորի մի անկյունում, այս ու այն տեղից կանաչ ճյուղեր գտնում, մեկն էլ՝ ընկուզենու, դաշտային ծաղիկներ բերում, տնկում, ջրում, ինքն էլ զարմացած ու հիացած սպասում, որ ահա շուտով մեծանալու են ծառերն ու ծաղիկները, եւ պարտեզ

է ունենալու: «Մյուս օրը վեր կացա, տեսա ծառերս թառամել են, ծաղիկներս մեռել՝ գլուխները հողին դրած: Ես շատ տխրեցի, ինչպես տխրել էի իմ հոր մահով, որ մի ամիս առաջ էր տեղի ունեցել»:

Երեք-չորս տարեկան երեխայի հրաշքերազը ամբողջ կյանքում ուղեկցում է նրան, եւ երբ շատ տարիներ հետո՝ երագի հեւքով, ծորի կարողը սրտում՝ Ասուրը տնակ է կառուցում, պարտեզ ունենում, արդեն շատ ուշ էր պահանոցի խաղալու համար... Սակայն սրտի խորքում անթելված պատրանքները դեռ կենդանի շնչում էին, մանկության օրերի սիրտ առեղծվածը դեռ չէր լքել նրան, դեռեւս իր հետ էին մեռած ու ապրող խաղընկերները, գյուղի քաջերն ու իմաստունները: Նորոգվում է մանկության հրաշք երազը, դառնում մի ուրիշ լուսե ամուրջ, մի ուրիշ ուտոպիա: Ասուրը իր պարտեզն է հրավիրում դրանց՝ պարզելով իր հունամիստական իդեալը: Իսկ նրա երազ-պարտեզը հենց «Ասուր, հե՛յ, Ասուր...» վիպակն է: Սուրեն Այվազյանն ընթերցողին տանում է այդ «պարտեզի» թաքստոցները, բայց այս դեպքում, ավա՛ղ, նա ստիպված տեսցնում է ավելի շատ փշեր, քան ծաղիկներ: Մանկության անհոգ խաղերի փոխարեն նա պատկերում է կյանքի չար խաղերը, պատանեկան վառ երազների տեղ՝ դաժան իրականությունը:

Ստեղծագործության կառուցվածքը պայմանավորված է հենց երազի ու իրականության, վերհուշի եւ ռեալ առօրյայի հանդիպարումով: Հաջորդում են իրար վաղուց եղած ու անցած եւ այսօր, այս ժամին տեղի ունեցող դեպքերն ու իրադարձությունները: Մանուկ Ասուրին, բատրակ երեխային, հետո տեխնիկումի սովորողին մերթընդմերթ միջամտում է վաստակած հեղինակը՝ տարիների հեռվից մոր հուշումներով ու մեկնումներով լույս սփռում այս կամ այն փաստի, եղելության կամ կերպարի վրա: Ամբողջ սյուժեն էլ զարգանում է այսպես փոխմիջոցով, միմյանց լրացնող, իրար ծուլված երկու կյանքի ներդաշնակությամբ: Ավելի ճիշտ՝ նույն կյանքի երկու պատուհանից, կյանքի մանկության ու հասունության տարիների ծայրակետերից նայող հայացքների միասնությամբ:

Կառուցվածքային այս ձևը, ինչպես ակի մեջ, տեսանելի է դարձնում մի ամբողջ կենսագրություն՝ իր բարոյությամբ, տառապանքի եւ ուրախության պահերով: Ասել է թե՛ Սուրեն Այվազյանը պատուհնը ավանդական ձևով էլ իր տալիս, ինչպես իր շատ վեպերում, որոնց մեջ սյուժետային գծերը ներկայացվում են հետետողական հաջորդականությամբ: Կտրտված, հատված-հատված, կյանքի վաղ եւ ուշ շրջաններից քաղած դեպքերի գունարով է իր վերջին վիպակում Սուրեն Այվազյանը հասնում գեղարվեստական ընդհանրացումների, մի հանգամանք, որ հեղինակի ստեղծագործական որոնումների անընդհատականությունն է վկայում՝ ինչպես թեմատիկ-ժանրային, այնպես էլ կառուցվածքային հնարանքների առումով:

Գրողը ստեղծել է կերպարների մի պայծառ սրահ՝ գույների պեսպիսությամբ, խառնվածքների անհատականությամբ, կոլորիտով: Մանասարը՝ իր դրամայով, Մանուշակի հանդեպ երբեք չմարող սիրով, հերոսական բնավորությամբ: Սաղաթել Սաղաթելյանը՝ ուսուցչի իր պարտքի ու կոչումի կնիքով, որի երախտիքի առջև հեղինակի ծնրադիր խոնարհումը մեծ խորհուրդ ունի եւ ուսուցողական վարակիչ լիքը: Բաբկենը, Անտոնը՝ շարունակ քաղցած ու փռի շուրջը պտտվող, հացի հոտով «կշտացող» ընկերները: Լեոնորոջը՝ 20-30-ական թվականների «օրբողոքս կոմսոմոլներից» մեկը, որը ժամանակի ինչ-ինչ մտայնության կրողն է եւ անգիր արած տերմիններից այն կողմ չի տեսնում: Սրա «գոհը»՝ Սերոբ Բաբախանյանը, որն

այնուամենայնիվ հավատում է, որ արդարությունը կհաղթանակի:

Վիպակում հյուսվածքի միջով կարմիր թելի պես անցնում է մոր կերպարը, վշտակիր ու մխիթարող, բեգարած ու որբասատար, որդու եւ աշխարհի արանքում միշտ կանգնած, օրինանքը եւ մրմուռը իրենից անբաժան: «Որդիները պետք է պաշտեն ծնողների իշխանությունը: Օ՛, այդ իշխանության մեջ այնքա՛ն իմաստալից ազատություն կա...»: Ամբողջ վիպակը շնչում է այս կենսական փիլիսոփայությամբ, որը նույնպես ստեղծագործության արդիական երակներից մեկն է:

Գեղեցիկ է Ասուր-Սիրամույշ գիծը՝ սիրո կակնալի հուշերով: Մնայում է փոստատար Քոթու կերպարը: Սյուժետային որոշ դեմքեր ու հանգամանքներ էլ գալիս են «Տուր ձեռքը, կյանք» վեպից (մոր կերպարը, Շարմաղը, դաժան տերը եւ այլն): Շատ դեպքերում էպիգոնիկ են կերպարները, բայց թանձր նստվածք են տալիս: Ժամրի պարտադրանքն է. ինքնակենսագրական երկը մի տեսակ ստեղծում է կերպարների «հոսունություն»: Արագորեն իրար են հաջորդում օրերն ու տարիները, օրերի ու տարիների հետ փոխվում են դեպքերն ու մարդիկ: Գրողի խնդիրն է այդ ամենի միջից ջուկել կարեւորը, մի շարժումով, մի վրձնահարվածով «որոշել» նրա տեղը ընդհանուր համակարգում:

Սուրեն Այվազյանը վարպետորեն է օգտվում գրողից տրված եզակի այդ շնորհից: Ահա Քոթու կերպարը: Ընդամենը մեկ էջ տարողությամբ է հերոսը ներկայանում, բայց որքա՞ն կենդանի ու ամբողջական է: Քոթին փոստատար է, ծերացած, սակայն առույգ ու աշխույժ: «...Միասին սովորել ենք մինչեւ չորրորդ դասարան, հետո չուզեց սովորել, թեեւ ոչ մի առարկայից վատ չէր ստանում: Տարիներ անց հարցրի. «Քոթի, ինչո՞ւ չսովորեցիր»: «Սովորեի, կարող է մեր գյուղից տանեի՞ն ուրիշ գյուղ: Ուրիշ գյուղում կմեռնեի», - ասաց մի քիչ կատակով, մի քիչ լուրջ:

Ուշ ժամին փոստատարի հայտնվելը կամ ուրախացում է, կամ տխրեցնում է: Քոթին դա գիտի եւ իսկույն հանգստացնում է.

- Հեռագիր չէ, նամակ է, ասի շուտ տեղ հասցնեմ, իմ մեռնակ ընկերը մի քիչ էլ նամակով օրն անցկացնի:

- Դու միշտ խելոք ես մտածում, Քոթի:

Քոթին ամեն առավոտ աշխարհին խաղաղություն մաղթելով, մի բաժակ թթի օդի է խմում ու մինչեւ մյուս առավոտ թվում է այդ մի բաժակ օդու ազդեցությամբ է, որ աշխույժ է: Եվ որեւէ մեկը չի կարող երկրորդ բաժակը խմեցնել:

Ես խնդրում եմ.

- Քոթի, մի-մի բաժակ՝ մեր անցած օրերը հիշելով:

- Օ՛, Ասուր, ինչո՞ւ ես ուզում, որ հարթեմ անցած օրերը հիշելով: - Եվ մի կարճ պահ տխրում է Քոթին: - Սոված-ծարավ, սկլոր, դու սովորեցիր, ես չսովորեցի: Դու կզնաս... եւ կմնաս, ես կզնամ ու վերջ...

- Դատարկ բաներ են, Քոթի:

- Հա՛... Դե, որ ասում ես, բեր խմեմք աշխարհի դատարկության կենցաղ»:

Կերպարային այսպիսի նրբագծերը շատ են վիպակում, ու դրանք ինքնատիպ վարպետ գրչի արգասիք են: Արվեստի փայլուն կտորներ կան նաեւ բնության նկարագրություններում: Ահա մեկը. «Սեպտեմբերի երկրորդ կեսից խելագարվում է մեր լեռնաշխարհը... Ցերեկները ծորերը լցվում են մթին ամպերով ու լաց են լինում անվերջ հեռացող մի ձայնով: Գիշերները այնպես պայծառ են շողում աստղերն ու լուսինը, ասես ամպեր չեն եղել, չեն լինելու: Թվում է, մի խորունկ, արարող մտորումի մեջ է տիեզերքը:

Հաջորդ օրը նորից նույն մթին



Քամայերն են, այնպես որ երբ քայլում ես այդ ամպերի միջով՝ ինքը քեզ չես տեսնում...

Սուրեն Այվազյանի կարապի երգը մեկ անգամ ես մեզ տանում է գրողի աշխարհը, մասնակից դարձնում իր սիրուն ու տխուր հեքիաթին:

Սա հեքիաթ է: Հեքիաթը մարդուն նրբացնում է, քնքշացնում, քնքուշ սիրտ պետք է ունենան այս աշխարհում ապրողները...



Սուրեն Այվազյանի «խնձորեսկ» վեպը լույս տեսավ գրողի մահից հետո (1982): Այնքան երազած ու փայփայած «խնձորեսկը»: Այվազյանը երկար էր նախապատրաստվել, առանց վարանելու կարելի է ասել՝ ամբողջ կյանքում: Նյութեր է ամբարել, տարիներ շարունակ բազում դրվագներ ու պատմություններ մարմնավորել փոքր ծավալի առանձին գործերում, ստեղծել հայրենի բնաշխարհի անկրկնելի պատկերներ: Ու ամենից գլխավորը՝ մշտապես որոնել է բնաշխարհի մարդուն: Քանի՞ քանի՞ էքիզներ է գծել նրա ամբողջական դիմանկարը «հայտնաբերելու» ըղձամբով: Եվ երբ գրական վարպետությունն ու փորձը տարիների հետ հստակվեցին, ապա բյուրեղացան գեղարվեստական մի շարք երկերում, երբ արդեն ճանաչված ու վաստակած արձակագիր էր, խիզախեց «խնձորեսկը»:

Ավաղ, առաջին հատորը հասցրեց միայն...

Ամենեւին էլ անակնկալ չէ «խնձորեսկ» վեպը, թեպետե՛ս իր տեսակի մեջ ստեղծագործական նվաճում է, գեղարվեստական ճշմարիտ հայտնություն: Ակսել Բակունցի «Կյորես» քրոնիկոնի պես: Սերո Խանգոյանի «Մատյան եղելությանց» գեղեցիկ ասքի պես: «Խնձորեսկը» պետք է ծնվեր: Անհնարին էր, որ չծնվեր: Այվազյանի փորձն ու տառապանքը պիտի երկնեին հայրենի բնաշխարհի ու նրա մարդկանց այս ինքնատիպ համայնապատկերը՝ իրեն ողորդող անչափելի սիրո առիավատշյա ու բարի օրհնություն:

Գրողի ստեղծագործական երկարամյա ճանապարհին անցնելի հետքեր են թողել հայրենի եզերքի՝ զանգեզուրյան տպավորությունները. «**Ինձ հետ խոսել են այդ լեռների ճամփաները, շիրմաքարերն են խոսել եւ ավերակները բերդերի... Սիրո քաղցը շուկներն են լսել խորհրդավոր այդ ձորերում եւ սիրողեռ չասված խոսքեր: Ես որդու սիրով եմ սիրել այդ հողը եւ դրա հմայքով եմ ճանաչել հմայքը հողերի եւ մարդու**»:

Այվազյանի ստեղծագործական կյանքը մինչեւ «խնձորեսկ» վեպը հարուստ է ու ծանրաբեռ:

Նա ռեալիստական կենսագրագրության գրող էր, իրականության կենդանի փաստերի հետքերով էր շնչավորում մարդկանց ու երեւույթները: Նրա ստեղծագործությունների հիմքում գրեթե միշտ ընկած են սուր պրոբլեմներ, կենդանի բախումներ, լիարյուն մարդիկ ու մարդկային բուռն հարաբերություններ:

Մի քանի երկերում Այվազյանն իր կերպարները ստեղծել է նախատիպերի հիմքի վրա:

Գեղարվեստական այդ սկզբունքով է առջնորդվել նաեւ «խնձորեսկ» վեպում:

Առաջին իսկ էջերից հորձանք-հորձանք կուտակվում է անափ կարողը, պաշտամունքի հասնող սերը հայրենի եզերքի, հայրենական տան հանդես: «**Այս խնձորեսկը, որ լեռների վրա է, ծնվել է մի ուրիշ խնձորեսկից, որ լեռների ծոցում, խորախոր ձորերի մեջ է: Նոր խնձորեսկը ոչ մի բանով նման չէ իր ծնողին: Այլ էին նույնիսկ մայր խնձորեսկի ամառներն ու ձմեռները, գարուններն ու աշունները: Այլ էին նրա գիշերներն ու ցերեկները: Խնձորեսկի երկնակամարով անցնող արեւը այն արեւը չէր, որ անցնում էր այս կիսագնդով ու ընկնում մյուս կիսագնդը: Ոչ էլ լուսնյակն էր նույնը: Գրանք միայն խնձորեսկի արեւն ու լուսինն էին, որ, դուրս գալով ծախակողմյան ձորերի խորխորատներից, զգնում, աջակողմում մտնում էին Սթնաձորի այրերը:**

Այլ էին եւ մայր խնձորեսկի մարդիկ,

այնքան այլ, որ եթե այդ հին խնձորեսկից մեկին, շատ հեռու մի տեղ, ինչ-որ առիթով, ինչ-որ մեկը հարցներ, թե ո՞վ ես, ի՞նչ մարդ ես, նա կպատասխաներ. «**Խնձորեսկի եմ**»: Եվ այդ հեռավոր տեղի մարդը պիտի հասկանար, թե դա ինչ է նշանակում»: Ահա այսպես՝ ամեն ինչ խորհրդավոր, ամեն ինչ յուրահատուկ: Խնձորեսկի ամեն անկյուն, ամեն քար ու թուփ առանձնանում է Այվազյանի գրչի տակ, իմաստավորվում յուրովի: Նրա էությունը լցված է խնձորեսկով, նրա մարդկանցով: Ոչ միայն խնձորեսկի ներկայով, այլեւ՝ անցյալով. «**Եկեք այս մացառների մեջ կորչող ճանապարհով ձեզ տանեն այն խնձորեսկը, որ հիմա չկա, բայց դեռ ապրում է իմ հիշողության մեջ: Գնանք, կենդանացնեն ձեզ համար, որ տեսնեք, դուք էլ ուրիշների պատմեք, որ նա գուցե հիշողությունների մեջ միշտ կենդանի մնա: Ոչ նրա համար, որ դրա կարիքն զգում է մեռած խնձորեսկը, այլ որ մենք՝ ապրողներս ենք զգում, եւ դա պետք է մեզից հետո եկողներին**»: Վիպասանը չի թաքցնում միտումը, ընթերցողին տանում է տասը դարերի ուսմահետքերով, որ թաղված են լեռնային ծաղիկների ու գառ խոտերի մեջ, բորբոքում տասը դար ապրած խնձորեսկի անթեղված կրակը եւ փորձում «կենդանացնել թեկուզ նրա տասը օրը»:

Ու վերակենդանացնում է: Վերակենդանացնում է զարմանալի ուժով, համակողջերմությամբ, ցավի ու սիրո փոխմիփոխ ալեկոծումներով: Ամեն անգամ Այվազյանը ոտք է դրել Ձանգեզուր, «ինչպես հավատացյալն է մտնում եկեղեցի»: Եվ նշխար-նշխար հավաքել է զանգեզուրյան իմաստուն գրույցները, պես-պես պատմությունները, ամեն կարգի հիշատակաց մասունքներ: Այդ ամենին նա տվել է նոր շունչ ու ոգի, խոսեցրել հազարամայն ու ամեն ձայնի մեջ ծրարել անհուն սեր ու կարոտ:

Ինչո՞վ կամ ինչպե՞ս է խնձորեսկից հղարեղուն հաստատել իրեն, պահել անունը, մնացել սերունդների հիշողության մեջ: Սա Այվազյանի համար գեղագիտական ծրագիր է, կենտրոնահարց, որ մաքրահյուս թելի պես անցնում է առաջին էջից մինչեւ վերջինը:

Խնձորեսկից պաշտում է ուժը, մտքի ու ձեռքի ուժը: Հնուց ի վեր հյուսվել է լեզվեզուն տեղացի արհեստավորների մասին. «**Պատարը պետք է լծկան զոմեշի կամ եզան կոտոշներից բռնելով այնպես ուրիշ վիզը, որ անասունը հնազանդորեն մեջքը գետնով տա: Բրուտը պետք է կարողանա ոչ միայն իր բարձրությունից բարձր, իր ծանրությունից ծանր կարասը չարխի վրայից թեթևությամբ վերցնի մի կողմ դնի, այլեւ եկող սերունդների հետ նախշերով խոսի այնպես, որ հազար տարի հետո, հազար մղոն հեռվում իմանան, որ կարասը պատրաստել է Քոչունց Բախշին, խնձորեսկում, որ տարին առատ է եղել կամ՝ սակավ, խաղաղություն է եղել եւ կամ կռիվ է եղել, ու խնձորեսկիցները հաղթել են**»:

Մտքի ու ձեռքի այդ ուժը խտացել է աշխատանքի ու արհեստների մեջ. որմնադիր Պատվականը որոնել ու գտել է Ակնաղբյուրի ջուրը, հասցրել մարդկանց: Վարպետ Անանիան, իր վեց եղբայրներով, կարծի ժայռեր է պայթեցրել, ճանապարհներ բացել ու գյուղը կապել աշխարհին: Մի ուրիշ արհեստավոր՝ Փանդունց Լալազարը, կառուցել է Ռոտամի կամուրջը ու նվիրել մարդկանց: Նույնիսկ ընչազուրկ Գաբին, որ ոչ մի արհեստ չի ունեցել, ամբողջ կյանքում հանդամիջյան ճանապարհների վրա ընկուզենիներ է տնկել, անցրել, որ հոգնած հնձվորներն ու ճամփորդները հանգստանան նրանց շվաքում: Այվազյանի քաղցրացող հուշերում, հեռվում առկաթող ճրագների մնաց, պեծին են տալիս խնձորեսկի շատ արհեստավորների անուններ, իսկ շատերն էլ դառնում են խտացված կերպարներ՝ իրենց գույներով, համով ու հոտով, իրենց հոգեբանությամբ: Բրուտ Բախշին՝ հողի անչափելի խորհուրդը հոգում պահող, որի խոսքն ու գործը, ինչպես համագյուղացիներն են ասում, միշտ «համբուրելի են»: Խրատանց Խեթը՝ իր համարձակությամբ ու ազնվությամբ, Շամանց Ինձին՝ հեքիաթա-

սաց, խոսքաչեն այդ որսորդը, տիրացու Ապավենը, Շիլ Շնավունը եւ էլի բազում-բազում արհեստավորներ, բնության մարդիկ, որոնց սուրբ պատվիրանն է. «Հացդ ցամաք կեր, բայց հողիդ պահիր արդար»: Ինչպիսի նվիրունով, դառնաբաղջր մի կարոտով է Այվազյանը պատկերում նրանց: Ասես ուղղակի նկարում է բնորոշից: Ու աչքիդ առջեւ հանում են, ինչպես ինքը կասեր՝ խնձորեսկի տղաները, փոքրը՝ քառասուն տարեկան, մեծը՝ դրա կրկնակին, ամենքն էլ արդար, մաքուր, բարի:

Այվազյանը խնձորեսկի կենցաղակարգ չի ստեղծում միայն ու բարբազությունը չի զբաղվում սոսկ: Այդ ամենը ներհյուսվում են հերոսների հոգեբանությանը, նրանց սոցիալական ու ազգային տոհմիկ բնավորություններին: Երեւում են հարսների ու աղջիկների պարերում, նրանց խոնարհ աչքերի մեջ, ուր կան նաեւ զանգեզուրյան աշխարհի հպարտությունն ու նազանքը:

«Զրույցի» ժանրային ձեւը, գրույց-ասքը պատումի ընդհանուր համակարգում շատ ներդաշնակ է վիպական գործողություններին, ամբողջ նյութին: Այվազյանը վեպը մասնատել է առանձին գրույց-պատմությունների, գրույց-դրվագների, որոնք, սակայն, ունեն ներքին միասնություն՝ կապված թեմայի ընդհանուր շաղախով: Հայրենի Ձանգեզուրն ու նրա մարդիկ, մարդկանց սովորույթներն ու հարաբերությունները, նրանց տառապանքն ու պայքարը՝ լեռնաշխարհում խորհրդային կարգերի հաստատման համար: Այս հենքի վրա է Այվազյանը դրվագել խնձորեսկի ու խնձորեսկցու շքեղ պատմությունը, որը կարող է լինել մամրանկարը Հայաստան լեռնաշխարհի:



Իր պատմագեղարվեստական որոնումներում Սուրեն Այվազյանը հետեւողական է: Հատկապես թեմայի ընտրության, պրոբլեմների առաջարկման իմաստով: «Ճակատագիրն հայոց» եւ «Առավոտ լուստ» պատմավեպերում գեղարվեստական հետախուզումների առանցք դարձնելով հայ ժողովրդի ազգային-քաղաքական բախտը, նա խոշոր տեղ է զատկացնում ազգային-ազատագրական շարժումներին, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման խնդրին: Փաստորեն Այվազյանը հավասար զուգահեռներ է տանում երկու կենսական պրոբլեմների միջեւ՝ հայ ժողովրդի պատմական-քաղաքական ճակատագիրը եւ Ռուսաստանի դերը հայ ժողովրդի փրկության գործում: Այդ պրոբլեմները ամենեւին էլ չինական պարսպով չեն անցրվել, հանդես են բերվում միասնաբար: Վիպասանը լուրջ տեղ տալով հայ ազգային-ազատագրական պայքարի դարավոր պատմությանը՝ 17-19-րդ դարերի երկար ծիրով, առանց թաքցնելու մի ամբողջական ու սեւեռուն միտում է պաշտպանում. ռուսաֆիլ ու եվրոպաֆիլ հոսանքների պայքարի մեջ՝ հայ ժողովրդի ազգային-քաղաքական փրկությունը կապում է ռուսական գեներալների, ռուս ժողովրդի բարեկամական դիրքորոշման հետ:

«Ճակատագիրն հայոց» պատմավեպը լույս է տեսել 1966 թվականին: Երկար է աշխատել հեղինակը իր մտահղացումը գլուխ բերելու համար: 17-րդ դարի վերջերս ու 18-րդ դարակազմի Հայաստանյան քաղաքական իրադարձություններն են վեպի կենտրոնը, հայ մեկիքների օրհասական պայքարը պարսիկների ու թուրքերի դեմ, նրանց անօրեն ու վայրագ քաղաքականության դեմ: Գլխավոր հերոս է Իսրայել Յավրի-Օրին, որի կյանքի ողիսականը ստեղծագործության սյուժետային երկու գլխավոր ճյուղավորումներից մեկն է: Հեղինակային մտահղացմամբ՝ վեպի կառուցվածքը եմբարկված է գաղափարական-գեղարվեստական երկու հավասարազոր պլանի, ըստ այդմ էլ զուգահեռ ընթանում են, մի կողմից, բուն Հայաստանում՝ Վայոց ձորում, Շահապունիքում, Սյունյաց աշխարհում տեղի ունեցող բախումները հայերի ու օտար նվաճողների միջեւ, մյուս կողմից՝ Իսրայել Օրու ազգասիրական-քաղաքական առաքելությունը Եվրոպայում եւ Ռուսաստանում: Սյուժետային երկու ճյուղավոր-

րումները ծավալվում են մի տեսակ իրարից «անկախ»: Այդ էլ, անշուշտ, արված է միտումնավոր. ընդհանուր համայնապատկերը՝ հայոց աշխարհի քաղաքական ծանր կացությունը, վեպում արտացոլվում է բավականին մասշտաբային ձեւով, մեկը մյուսից դաժան, մեկը մյուսից ողբերգական պատկերներում: Այվազյանի միտումը, բնականաբար, ածանցվում է նրա գաղափարական-գեղագիտական հայեցողությունից, եւ Հայաստանի որոնումը: Իսրայել Օրին ամմիջապես ակամատես չէ մայր հայրենիքում կատարվող եղերական անցքերին, հոր՝ Մելիք Իսրայելի դավադրական սպանությանը Մուհամմեդ-Ռզա խանի կողմից, բյուրավոր սպանություններին, կողոպուտին, առեւանգումներին: Այդ ամենի գեղարվեստական պատկերները վիպասանը տալիս է սյուժետային ուրիշ պլանով, թվում է՝ գլխավոր հերոսի հոգեբանական-աշխարհայացքային զարգացումից «չեզոք գոտում»: Սակայն Օրին իր առաքելության մեջ, թեկուզե՛ս շատ հեռու հայրենի աշխարհից, մշտապես զգում է նրա շնչառությունը, խորապես ապրում է հարազատ ժողովրդի ցավը, լսում նրա հառաչանքը: Կերպարի զարգացումը, ազատագրական պայքարի առաքյալի հոգեբանական-աշխարհայացքային հասունացումը պատմավեպում մարմնավորվում է նաեւ այն խոհ-ապրումների, ներքին տվայտանքների, վերիւշներին ցուցադրումով, որոնք էլ դառնում են շղթայական օղակներ՝ արտաքուստ երկփեղկված սյուժետային ճյուղավորումների միջեւ: Օտար ափերում եվրոպական տերությունների ղեկավարների կամ դիվանագիտական միսիաների հետ բանակցելիս, տարբեր հանգամանքներում, անգամ խիստ ինտիմ հարաբերությունների մեջ Իսրայել Օրին դարձյալ հավատարիմ է իր անհատականությանը, պահպանում է առաքյալ-նվիրյալի իր բնավորությունը: Եվ Այվազյանը վերստին գտնում է խոսքի տարբեր միջոցներ, պատկերային նրբագծեր՝ Հայաստան աշխարհի ողբերգական համայնապատկերը գործողությունների կենտրոնում պահելու համար:

«Ճակատագիրն հայոց» վեպը բաղկացած է երեք գրքից՝ «Մահ կամ ազատ Հայաստան» (գիրք առաջին), «Մենք պիտի ապրենք» (գիրք երկրորդ) եւ «Առաքելությունից առաքելություն» (գիրք երրորդ): Սկսելով ամմիջապես ժողովրդի քաղաքական կյանքի դաժան պատկերներից՝ Այվազյանը հետեւողականորեն գործողությունների ոլորտ է ներքաշում հենց բուն աշխատավոր մարդկանց, ցույց տալիս նրանց հոգեբանական ծանրաբեռն առօրյան եւ մինչեւ վերջ ձգված պահում այդ լուրը՝ իրեն վեպի գաղափարական բովանդակության, ինչպես նաեւ ընդհանուր կառուցվածքի համար անչափ էական գործոն: Գլխավոր հերոսի մանկության եւ պատանեկության շրջանը, իրեն սյուժետային գիծ, առաջին երկու գրքերում «ստարածքային» առումով լայն տեղ չի զբաղեցնում: Այվազյանը առավելապես մտահոգվել է ըստ ամենայնի ստեղծելու ժողովրդի ու պատմական ժամանակակի կերպար-պատկերը: Սակայն նկատելի է, որ հող է նախապատրաստում Իսրայել Օրուն «գաղափարական կենտրոն» դարձնելու: Վերջին՝ «Առաքելությունից առաքելություն» գիրքը արդեն գրեթե ամբողջապես գլխավոր հերոսի կենսապատման է ազգային-քաղաքական դեպքերի համապատկերում:

Այվազյանի գեղարվեստական պատմահայեցողության մեջ բացարձակ արժեքի կշիռ է ստանում հայ ժողովրդի ազգային արժանապատկության գերխնդիրը: Որքան էլ ժամանակները ծանր, քաղաքական ճնշումներն ու հալածանքները անպակաս՝ հայ շինականները, մեկիքներն ու հոգեւորականները գլուխ չեն կախում, ծառայական չեն խոնարհվում թշնամու առաջ: Վիպագիրը չի անտեսում, իհարկե, ներքին երկպառակությունները, սոցիալական-դասակարգային հակասությունները՝ շինականների ու մեկիքների միջեւ, մեկիքությունների ու հոգեւորականության միջեւ եւ այլն: Սակայն պատմավեպի հիմք

Գրականագիտություն

Սեւակ Արզումանյանը Սուրեն Այվազյանի ստեղծագործություններից մի քանիսի մասին

Էջ 7

Ուրբախը մի բարդ ետապի քաղաքական անցքերը՝ պաշտպանում է անսխալ սկզբունք. հայրենիքը վտանգի մեջ է ու ամենքը, կարծես մի կամք, մի ոգի դարձած պետք է ծառանան օտար ասպատակողների դեմ: «Այժմ կա բոլորիս հուզող միայն մի հարց՝ փրկել Հայրենիքը, – ասում է Իսրայել Օրին: – Այստեղ պիտի հավասարվեն մեկիքն ու ռամիկը, մեծ մեկիքն ու փոքր մեկիքը, այստեղ պիտի մոռացվի ամեն անձնականը եւ վեր ու ամեն բանից վեր պահի հայկականը»: Ընդհանուր նպատակը ծնունդ է հայրենասիրության մի որակ, որի հիմքը, ի վերջո, ազգային արժանապատվության գիտակցությունն է: Իսկ ազգային արժանապատվությունը բխում է իր իսկ ներքին ուժերի ու առաքինությունների դարավոր փորձից. «Հայն աշխատել գիտես եւ վայելել իր աշխատանքը: Հայը քարին սերմ է պահ տալիս եւ ստիպում է մեկին հարյուր բերք տալ: Քարի մեջ լեզու է դնում, եւ քարերը իմաստուն բաներ են ասում: Եվ տաճարներ է շինում նրանցից, որ նույնպես խոսում են: Հայը սիրում է այգեգործությունը, բայց ավելի շուտ տնկում է խաղողի վազ, թթենի ու ծիրանի, որովհետեւ նրանցից շատ բարիքներ է ստեղծում: Հայ շինականն իր տունը ծածկում է եղեգնով: Նախ նրա համար, որ եղեգն ավելի դիմացկուն է, քան կաղնի գերանը եւ հետո, երբ պետք լինի, ձեռքը տանի օժորքից մի եղեգն քաշի, սրինգ չինի ու սիրտը դնի մեջը... Հայը սիրում է երգն ու նվագը: Հայը սիրում է եւ խոսք չինել այնպես, որ վեհացնի մարդուն, որ նա հեռու մնա չար մտորումներից: Դրանց մեջ էր նրա մեծ ուժը, թե չէ ինչպես դիմացավ, ինչպես ու դիմանում... Երբեք էլ նրանք չի վառողի գյուղը: Եվ նա ոչ մի հրազեն չի հնարել: Ո՛չ, հայն սպանել չի սիրում: Նա երբեք նախահարձակ չի եղել: Եվ ստեղծողի ցատունն ահավոր է լինում, երբ նրան խանգարում են: Այո՛, հայի դիմացողական ուժը նրա ստեղծողական ուժի մեջ է... »:

Ս.Այվազյանը ստեղծագործության գաղափարական-գեղարվեստական նպատակաբանության մեջ ժողովրդի պատմական դերին խոշոր արժեք տալով՝ գործողությունների լայն դաշտ է հատկացնում նրան: Մեհրու, Մխիթարի՝ սրանց քրոջ Վախագի՝ դաժան վրձնահարվածներով պատկերված կերպարները, ժողովրդական ասպատակների ու նրանց առաջնորդ Կոստանդե է եզոր Աստապատցիների հայրենասիրական պայքարը, որը բավականին ծավալ ունի վեպում, խորհրդանշուն են ժողովրդի բնավորությունը, անկոտրուն ոգին, սերը հայրենիքի նկատմամբ: Օտարի լուծ չի համոզվում հայը, լուծը ծնուն է գործել մի ոգի, շինականին ու ռամիկին դարձնում ասպատակ: «Խնձորեսկի դեպքից հետո լեռներ են բարձրացել: Տեղի, Կոնիձորի, Արավուսի, համաժախի, Բայանդուրի, ապա Վարարակի, Որոտնաձորի, Ոխչաձորի, Հալիձորի, Ջագեձորի շատ շեների շինականներ: Օճասարում, Սմբատաբերդում, Կեղեզնաձորում, Գողթան լեռներում, Դաշտում, Օղնաձորում եւ շատ այլ տեղերում գործում են Կոստանդ Աստապատցու խմբերը: Ապատամբների նոր բներ են երեսացել Արամազդ լեռան կողմերում, Վասակա ամրոցում, Դարպասի ձորում»:

Այսպես է ժողովուրդը պատասխանում բռնակալին, գետնված տեղից վեր բարձրանում արյելու վճռականությամբ. «Մենք զինվորներ չենք, այլ հողի մարդիկ ենք եւ ստիպված ենք եղել, որ մամի, բառ ու բրիչի փոխարեն գեներ ենք բռնել»: Շատ պայծառ էջեր կան «ճակատագիրն հայոց» պատմավեպում՝ գունեղ, արտահայտիչ, կառուցվածքային ծավալուն լուծումներով, ուր ժողովուրդը իր տա-

րերի մեջ է օրհասական պահին, անգամ անընկճելի, լավատես ու պայքարող: Կոստանդ Աստապատցու կերպարը՝ աներեր հավատով, աներկյուղ խիզախությամբ, քիչ բան չի ասում ժողովրդական տարերքի ու բնավորության մասին: Լսելով մեկից Իսրայելի նենգ սպանության լուրը Մուհամմեդ-Ռզա խանի կողմից, Օճասարի ասպատակները միաբերան ձայնում են.

« - Վրեժ... Վրեժ... Վրեժ... Մահ կամ ազատ Հայաստան:

Լուռ էր Կոստանդ Աստապատցին: Նա կանգնած էր մի փոքրիկ բարձրության վրա, եւ քամին ծածանում էր փիլոնի կարճ փեշերը եւ նոսր, բայց փառահեղ մորուքն էր քշել դեպի մի կողմ ու բաց արել արծաթե ճածանջավոր լանջախաչը: Լուսնյակի լույսի տակ ստիպող շողում էր այն: Լեռան այս բարձունքում, շինական հավատացյալ մարդիկ, որոնք տնից-տեղից գրկվելով գեներ էին վերցրել հանուն իրենց անպատված պատվի եւ սրբազան հայրենիքի, նայում էին նրան որպես իրենց աստծուն, որ վար է իջել երկնքից այս ծանր օրերին իրենց հավատ ու հենարան լինելու: Ու հիմա պատրաստ էին նրա մի խոսքով թեկուզ կրակը նետվելու»:

Գեղարվեստական մտահղացմամբ եւ վեպի գաղափարական-նպատակային բեռնվածությունը տանելու իմաստով մասշտաբային կերպար է Իսրայել Օրին: Օրագրային այս կերպարի մեջ է հայտնապես հեղինակը խոսքերի իր ասելիքը, պատմահայեցությունը, գեղագիտական սկզբունքները:

Իսրայել Յավրի-Օրին պատմության տարիներին նույնպես փայլում էր խիզախությամբ: Բրիչանաղի ավերակներում, Շարիֆ-խանի ղզլբաշների դեմ կռվելիս, նա յուրաքանչյուրի հետ աչքի էր ընկնում անվախ կռվելով: Չի թաքցնում իր ատելությունը պարսիկների նկատմամբ, համարձակորեն հայտնում էր իր վերաբերմունքը: Հայրը՝ մեկը Իսրայելը, նրա մեջ մասնկուց ներարկել էր հայրենասիրական գծեր, բարություն ու առաքինություն:

Նա համակիր չէ հոր մի համոզմունքին՝ «Մեռեցեք» միայն հերոսի մահով: Օրին այլ կարծիքի է. «Մի ամբողջ ժողովրդի մահ, ինչ տեսակ էլ որ լինի, հերոսական չի կոչվի, որովհետեւ կենդանի մնացածներն են հերոսացնում նահատակներին: Եվ հետո, այն մահը, որ կյանք չի ստեղծում, չի կարող հերոսական կոչվել: Այդպիսի համազգային մահը տապալանաբեր պետք է միայն կարող է թողնել աշխարհի օտարատառ պատմության մեջ. «Եղել է մի ժողովուրդ, նրան հայ են կոչել... եւ վերջ»: Նա երկուստեղ հոգու իր ավյունով ու եռանդով ուներին վերցնում է համազգային մի առաքելություն՝ մեկնել Եվրոպա, կրել ամեն տեսակի չարչարանքներ, դիմանալ ծանր դեպքերումներին ու ստորացումներին, բայց «աշխարհի արդար դատին հանձնել հայոց հարցը»:

Երբ մեկը Իսրայելը որդուն Եվրոպա ճամփելիս խրատում է՝ արյել միայն ժողովրդի հոգսով, շարունակ զգալ, որ ժողովուրդը նրան է ապավինել իր ծանր ճակատագրի հարցը եւ պահանջում է երդվել իրենց Պառլամենտի այն անուններով, որոնք ի սեր ժողովրդի նահատակվել են ու սրբացել, մեծ ուխտավորի, համոզված առաքյալի հավատքով է Օրին հոր առջեւ ծնկաչոք, հպարտ հանդիսավորությամբ երդում տալիս: Այդ երդումը եւ գործողության ծրագիր էր: Եվրոպա ուղևորվող վեց պատգամավորների երդման մի տարբերակն էր, որի իմաստը բանաձեւվում է այսպես՝ «Չկա ոչ մի ուրիշ այլ նպատակ, քան ծառայել ժողովրդին»:

Ս. Այվազյանը սրել է առաքելության խորհուրդը, հասցրել պաթետիկ հնչեղու-

թյան: Վեհարանում Հակոբ Ջուրայեցու խոսքը երդում-հավատքի, մեծ խոստովանության լիցք է պարունակում.

« - Մենք վեց հոգով գնում ենք ի մարտ, եւ մեր դեմ Եվրոպա աշխարհն է: Գնում ենք ոչ որպես թշնամի՝ ընդդեմ թշնամու, բայց իրոք մարտի... Եթե մեր գործողության մեջ կա հաղթանակի հավակնություն եւ պարտության վտանգ, ապա դա մարտ չէ՝ ի՞նչ է: Եթե մենք գնում ենք մի երկիր, ուր պետք է որոշվի մեր ժողովրդի մահու եւ կենաց հարցը, ապա այդ երկիրը մեզ համար Ավարայր չէ, ի՞նչ է. Եվ իրոք մենք գնում ենք Ավարայր. կրկնում են՝ ոչ գործով, գեներով եւ ոչ հարբեցրած փղերով մեր վրա եկող պարսիկների դեմ: Գնում ենք եւ պետք է զինված լինենք մեր հազարամյակների պատմությունով, որ կարողանանք այդ քաղաքակիրթ երկրներին ապացուցենք, թե ահա սա է հայը, եւ նա իրավունք ունի աշխարհում ապրելու՝ տնօրինելով իր կյանքը ձեռնաբեր իր սեփական... »:

Սա մի ամբողջ ժողովրդի պատմական փորձից քաղած իմաստություն է, որտեղ կա եւ հավատք, եւ տառապանք, եւ գոյության իրավունքի խոր ըմբռնում, եւ գալիքի ծրագիր:

Ս.Այվազյանը Իսրայել Օրու կերպարի գեղարվեստական մեկնաբանությունը կատարում է ոչ առանց նրա բնորոշ պատմական Օրու կենսափաստների օգտագործման: Հենվելով իրական-պատմական տվյալների վրա, նյութեր քաղելով պատմագրության ու այլ վավերագրերի արժեքավոր աղբյուրներից, արձակագիրը ստեղծել է ազգային-քաղաքական գործչի ճշմարտապատում բնավորություն: Շատ շուտով, դեռ Եվրոպա չհասած, հայ պատվիրակությունը Պոլսից ստիպված էր ետ դառնալ հայրենիք, եւ միայն Իսրայել Օրին է շարունակում մեծ ուխտավորի իր ուղին: Քսան տարի լինելով դեպքումների, գրկանքների, լուրջ փորձությունների մեջ՝ նա կռվելու ու հասունանում է իբրեւ գործիչ: Եվումները Եվրոպական իշխանավորների ու քաղաքագետների հետ նրան շատ բան են տալիս:

«Ճակատագիրն հայոց» եւ Մովսես Արագու «Իսրայել Օրի» վեպերի մի շարք հատվածներ, հատկապես գլխավոր հերոսի կենսագրության ուղեծրի մեջ, նման են իրար: Բնական է, երկու հեղինակներն էլ հենվել են հաճախ նույն փաստերի վրա, երկուսն էլ ստեղծել են պատմագեղարվեստական երկ, այլ կերպ լինել չէր կարող: Պետք է նկատել սակայն, որ Ս.Այվազյանի ընդգրկումները անհամեմատ լայն են, տարրողունակ, ապա՝ վիպայնությունը ավելի մեծ տեղ ունի «ճակատագիրն հայոց» մեջ:

Հանգամանակի ու ծավալուն են նկարագրված Օրու հանդիպումները Եվրոպայում, նրա կյանքի գլխավոր դեպքերը, անձնական ու հասարակական գործունեությունը, ՊՖալցի մեծ իշխան Հովհան-Վիլհելմի հետ երկարատե գրույց-բանակցությունները եւ այլն, եւ այլն: Քիչ տեղ չի հատկացրել վիպասանը նաեւ Օրու ռուսաստանյան հանդիպումներին, Պետրոս Մեծի հետ ունեցած դիվանագիտական բանակցություններին, Հայաստանում Օրու եւ հայ մեկիքների ու եկեղեցական գործիչների փոխհարաբերություններին, ազգային-ազատագրական ծրագրերի պատմությանը, Պարսկաստանում նրա դեսպանական առաքելությանը եւ այլն: Այս ամենի ընթացքում Օրին, իբրեւ կերպար, հասունանում է շահեկանորեն, աշխարհայացքային-գաղափարական ներքին «վերակառուցման» միջոցով հասնում Ռուսաստանի եւ ռուս ժողովրդի պատմական դերի ըմբռնմանը՝ փոքր ժողովուրդների, այդ թվում եւ հայ ժողովրդի քաղաքական-ազգային փրկության գործում: Նա դառն փորձով համոզվում է, որ

Եվրոպացիների խոստում-հավաստիացումները պարապ խաղեր են, Ռուսաստանը մոտ է Հայաստանին, եւ ինչպես ասում է Եսայի Հասան-Ջալալյան սրբազանը՝ «Մենք մեր բախտը Ռուսաստանի հետ պիտի կապենք... Միայն եւ միայն: Եվ հարեւան է, եւ մեծ է, հավատով ուղղափառ, որ վտանգ չկա մեջը... »:

Իսրայել Օրու հոգեբանական ու աշխարհայացքային վերափոխությունը հեշտ չի կատարվում: Ս.Այվազյանը ներկայացնում է դա որպես բարդ մի ընթացք, ինքնահարթահարման երկարամյա պրոցես: Համազգային մասշտաբի գործունեության սկզբից մինչեւ դավադրաբար սպանությունը Աստապատցուն՝ թունավորման միջոցով, Օրին պատկերվում է որպես գաղափարական հերոս, ազատագրական պայքարի նախկին, որպես հայրենասեր գործիչ: Եսայի կաթողիկոսի խոսքը Օրու գերեզմանին մեռելաբաղի սովորական տուրք չէ, այլ արդար գնահատություն.

« - Եվ նա հայ էր, հայրենասեր, որ վառվում էր իր ժողովրդի ցավերով եւ իր կրակի լույսով խոսակորում նրա ճանապարհը: Եվ հանգավ նա ճանապարհին, եւ կմնա նրա կրակի լույսը... »:

Օրու կերպարը կերտված է էպիկական գույներով: Հուզական շեշտեր կան նրա եւ Աստապայի, նրա եւ հարազատների՝ Աշխենի, Վարդանի ու Մամիկոնի, հոր, պատանության ընկերների, հայրենի եզերքի փոխառնություններում:

Վեպում Ս.Այվազյանը զգալի չափով օգտագործել է դրամատուրգիական հնարանները: Հայ պատմավիպասանության մեջ վեպ-դրամայի ժանրային տարրերի կիրառման առաջին մեծ փորձն է «ճակատագիրն հայոց»:

Սկզբից մինչեւ վեպի ավարտը դրամայի ծեսական-կառուցվածքային տարրերը տարբեր հանգամանքներում դառնում են գործողությունների զարգացման, հերոսների հարաբերությունները ներկայացնելու հիմնական եղանակ: Պատմական սովորական, էպիկական ձեւը փոխարինվում է դրամատուրգիական արտահայտչամիջոցներով: Դա չի խախտում ընդհանուր ռիթմը, միջավայրի ու մարդկանց պատկերման տրամաբանությունը:

Համոզիչ են մեկից Իսրայելի, Շարիֆ եւ Մուհամմեդ-Ռզա խաների կերպարները: Գտնված հետաքրքիր գծեր կան Պյոտր Մեծի, Սուլեյման շահի, Վիլհելմի, Մինաս վարդապետի եւ մի քանի ուրիշ հերոսների բնավորություններում: Նուրբ է պատկերված հայ-վրացական բարեկամությունը, հետաքրքիր է Արչիլ իշխանի կերպարը:

Իսրայել Օրու կյանքը հարուստ էր արկածներով: Գայթակությունը կարող էր շատ բանի կորստյան պատճառ դառնալ: Ս.Այվազյանը չափի զգացումով է օգտվել արկածային վեպի ժանրային ձեւերից՝ չխախտելով պատմականության ու պատմական վեպի սկզբունքները:

«ճակատագիրն հայոց» վեպը, այնուամենայնիվ, գերծ չէ գեղարվեստական-կառուցվածքային բերություններից: Անհարկի ձգձգված է նույնատիպ պատմություններով, բազում սպանությունների եւ «ցնցող» տեսարանների նկարագրություններով: Ծավալը շատ հատվածներում չի արդարացված, քանի որ նման պարագաներում նյութը հավաք ու համոզիչ լուծում չի գտել: Պատմական-իրական ու երեակայական ոչ քիչ հերոսներ գեղարվեստական անհատականություն չեն դարձել, մինչդեռ ստեղծագործությունը նկատելիորեն խիտ է բնակեցված:




«Նա երեխուց աչքը բաց արավ՝ տեսավ, թե ինչ անասելի նե-



Գրականագիտություն

Արձակագրի վաստակը



Քաղաք Ույուբաբյան

Ասում են՝ գրողի ստեղծագործությունը մինչև խորքը հասկանալու համար պետք է ճանաչել նրա հայրենիքը, այն, որ հին հայերեն կոչվում էր ծննդյան ու սննդյան տեղի: Եթե այս պահանջն իրավացի է առհասարակ, ապա Սուրեն Այվազյանի պարագային պարտադիր ու ճշմարիտ է կրկնակի:

Այն լեռնաստանը, ուր Սուրեն Այվազյանն է ծնվել, անցկացրել մանկությունը, ստացել մասնական կրթություն, որպեսզի հասուն տարիքում վերադառնա նրա գիրկը, հյուսվի նրա առօրյային ու պատմությանը, գրի նրա գեղարվեստական կենսագրությունը եւ վերջն էլ հավիտենական հինգով փարվի նրան՝ գունավեճով նրա դժվար պահվող սակավ հողին, - կոչվում է Ջանգեզուր, իսկ հին անվամբ՝ Սյունիք-Սիսական:

Երբ քայլում ես Սյունիք-Ջանգեզուրում, քեզ հետ խոսում են սարերը, քեզ իր գիրկն է առնում այս բիբլիական լեռնաստանի բնակչության բազմահազարամյա պատմությունը, որի ամեն մի դարը լի է քաղաքական ու մշակութային մեծագործություններով: Բայց ամենից առաջ գրական կյանքով, ժողովրդական պատկերավոր մտածողական այնպիսի փայլատակունցներով, որ հատուկ էր ոչ միայն կոչմանը գրողներին՝ հինգերորդ դարի Մովսես Բերթրոյին կամ վեցերորդի Պետրոս քերական-բանաստեղծին, յոթերորդի Ստեփանոս Սյունեցուն կամ նրա թույլ, հայոց առաջին բանաստեղծուհի-երաժշտագետ Սահակարուխտին եւ հաջորդ դարերի հայոց գրականությունը զարդարող շողշողուն անուններին, - այլև ամբողջ այս լեռնաստանի բնակչությանը՝ սովորական աշխատավորից մինչև իշխանավոր ավատատերը: Միջնադարում ասել են՝ յուրաքանչյուր նորածին սյունեցու մեջ երկու մարդ է քնած՝ մի գուսան ու մի պատմիչ, այսինքն՝ մեկ բանաստեղծ եւ մեկ արձակագիր: Ճշմարիտ էր այս խոսքը, քանզի Սյունյաց երկրի ամեն մի գրագետի մեջ միշտ էլ արթնացել է երկուսից մեկը, հաճախ էլ՝ երկուսը միասին (հիշենք պատմիչ ու բանաստեղծ Ստեփանոս Օրբելյանին՝ մեր մատենագրության արծաթե դարի վերջին մեծին), սակայն պակասավոր էր նաեւ չէ՞ որ նույն Սյունիքն է տվել 14-րդ դարի այն լուսավոր գիտնականներին, որոնք «խավարի թագավորության» մեջ վառեցին «Գլածորի համալսարանի լուսաճառագ ջահը, իմաստուն դիվանագետ Իսրայել Օրին, Դավիթ բեկ գորապետին եւ նրա քաջ նիզակակիցներին...»

Սյունիք-Ջանգեզուրի անցյալ դարերը բերնեբերան լիքն են ինքնուրույն խիզախուններով, որոնք կենսավորում են լեռնաստանի նոր կյանքը: Սյունիք-Ջանգեզուրում անվերջ նորոգվում է պատմությունը: Ավանդույթները եւս նորոգվում են ու ծաղկում: Խորհրդային կյանքի առաջին շուրջ մեկուկես տասնամյակում այստեղ վերընծալու էր ու գործացավ մեր նոր գրականության հզոր կազմին՝ Ակսել Բակունցը: Առանց վարանելու կարելի է ասել, որ հետագա մեր ամբողջ գրական-

ությունը, արձակ թե բանաստեղծական, ամենակենսական դասեր է առել այդ կաղնու հզոր խշռոցից: Ամբողջ գրականությունը, եւ հատկապես Սյունյաց հողից ելած այն սերունդը, որի ներկայացուցիչներն են համարյա միաժամանակ գրական ասպարեզ մտած Համո Սահյանը, Սերո Խանգադյանն ու Սուրեն Այվազյանը:

Ակսել Բակունցից հետո հեշտ է գրական կյանքում քայլել. նա բացել էր գրականության լայնահուն մի ճանապարհ եւ ցույց տվել այդ ճանապարհն ազնիվ ու շիտակ անցնելու մեծագույն օրինակը: Սակայն Ակսել Բակունցի կողքին գրականության մեջ սեփական տեղ գրավելն էլ անհնարինության չափ դժվար է. պետք է նոր խոսք ասել, սեփական քայլվածքով անցնել գրական ճանապարհը, որը եւս պետք է հարթված լինի սեփական ջանքով ու տքնությամբ:

Սուրեն Այվազյանը երեւի ծնվել էր ըստ միջնադարյան ասույթի: Նա բանաստեղծությամբ սկսեց իր գրական կենսագրությունը: Նախապատերազմյան տարիների իր ապրումներին ձեռն էր կերպարանք էր տալիս ոտանավորով: Եվ պատահական չէ, որ այդ ժանրի քնարական շունչն առկա է իր հետագա ամբողջ գրական կյանքում:

Ընթերցողի հետ Սուրեն Այվազյանի առաջին լուրջ զրույցը տեղի է ունեցել 1947 թվականին՝ «Անավարտ գործը» գրքով, որի մեջ գողտրիկ պատմվածքներ կան հայրենի գյուղի, պատերազմ գնացած այրերի եւ թիկունքում մնացած կանանց, ծերերի ու դեռահասների դժվարին կյանքի մասին: Հետո մեկը մյուսի ետեւից լույս տեսան «Խորածորցի», «Լեռնցիներ», «Խիղճը», «Տուր ձեռքը, կյանք» վեպով: Մյուսը լուրջ նվաճումներ եղան ինչպես հեղինակի, այնպես էլ ետպատերազմյան շրջանի հայ արձակի համար:

«Անավարտ գործ»-ից տասը տարի հետո է լույս տեսել «Խիղճը»: Տասը տարիներն իրենց նշանակալից անցուդարձով որոշակի որոշմ էին դրել գրողի ստեղծագործության վրա, նրա գրական սկզբունքների ու աշխարհընկալման վրա: Եթե նախորդ գրքերում առկա էին միայն կյանքից քաղած հետաքրքիր նյութը եւ այդ նյութի նկատմամբ գրական-քնարական վերաբերմունքն ու հյուսված պատմելաձեւը, ապա այստեղ գրողն ավելի ներհուն է, անմիջական եւ ուղղամիտ, անողորմ ույնիսկ սեփական թուլությունների հանդեպ, միաժամանակ ամխառն հավատով է նայում կյանքին, նրա առաջընթացին: Գիրքն ամբողջովին տոգորված է կենսահաստատ ոգով: Այդ տարիներին ստեղծվեցին «Չորերի ծայրը», «Փոքրիկ ընկուզենին», «Լուռ Լալազարը», «Խիղճը» պատմվածքները, որոնց մեջ արտացոլված կենսական առողջ ու ազնիվ նյութն իր հետ բերել է համապատասխան գեղարվեստական ձեւ: Բակունցյան ավանդները, մեր արձակի մեծ ուսուցիչ դասերն այստեղ գտել են իրենց իսկական բարձրարվեստ կիրառությունը:

«Տուր ձեռքը, կյանք» ինքնակենսագրական վեպով Ս.Այվազյանն իր գրական ծայրին հատուկ ջերմությամբ ու անկեղծությամբ ներկայացրեց ապրած ժամանակաշրջանը՝ երեւոյթների տիպական գծերով, սոցիալական եւ քաղաքական վերափոխությունների ու նոր կերտումների լայն ընդգրկմամբ: Այվազյանի գրքի կարեւոր արժանիքներից մեկը պատմամիջակականությունն է, գեղեցիկ, գրավիչ պատմվածքներ: Անհնար է չհավատալ հեղինակի խոսքին, նրա հերոսների արարքներին, վարքագծին, գործողություններին ու դրությունների բնական ընթացքին:

«Տուր ձեռքը, կյանք» վեպից հետո, ըստ երեւույթին, նաեւ նրանից առաջ, մի քանի տարի Այվազյան-արձակագրի հայացքը սեւեռված էր այդ ժողովրդի պատմության ամենաճակատագրական փուլերից մեկին: Արդյունքը եղավ «Ճակատագիրն հայոց» վեպը, որի ընթերցումից հետո չես կարող չմտածել, որ Այվազյանի մախրնթաց գրական կենսագրությունը եղել է լուրջ նախապատրաստություն գրական այս խոշոր քայլի համար:

Ամենահին ժամանակներից ի վեր, տիեզերքի հետազոտողները գիտեն, որ արեգակի կառուցվածքն ուսումնասիրելու լավագույն պահերը նրա խավարումների ու բռնկումների շրջաններն են: Այդպիսի պահերին աստղագետները դիրք են բռնում հարմարավետ բարձրակետերում եւ դիտում-նկարագրում են մեր տիեզերքի մեծ լուսատուի վարք ու բարքը:

Պատմավիպասանը նման է աստղագետին. նա էլ իր ժողովրդի կենսագրության մեջ փնտրում-գտնում է խավարումների ու բռնկումների այն վճռական պահերը, երբ ճակատագրի հասցրած օրհասական հարվածների ներքո խլրտացել են ժողովրդի ներքին ուժերը, եւ այս խլրտումի փոթորկոտ ալիքների մեջ ծնվել են նոր հերոսներ, որոնք իրենց երկիրը պետք է առաջնորդեին դեպի լույս եւ ազատություն:

Սուրեն Այվազյանի երկու պատմավեպերը («Ճակատագիրն հայոց» եւ «Առավոտ լուսո»,) նվիրված են հայ ժողովրդի պատմության երկու այնպիսի ժամանակահատվածներին, երբ կենաց ու մահու բախումներում լուծվում էր ազգի լինել-չլինելու, նրա ինքնության ու գոյատևումի հարցը:

Եթե ճիշտ է, որ ամեն գրող պատմության խորքերն է գնում այսօրվա հետ խոսելու, այսօրվա հարցերին պատասխան տալու համար, ապա Սուրեն Այվազյանն այդ խնդիրը լավ է կատարել «Ճակատագիրն հայոց» վեպով: Նա ընթերցողի առաջ բացել է հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամենաբախտորոշ ժամանակներից մեկը եւ առաջադիր խնդիրներից տվել գեղարվեստական լուծումներ, որոնք շատ կարեւոր են նաեւ մեր ժամանակի առումով: Վեպի հիմքը պատմական այն միջավայրի նկարագրությունն է, երբ շրջադարձ է կատարվում հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման մեջ, երբ ժամանակի հայ գործիչները Ռուսաստանի հետ էին կապում հայ ժողովրդի ազատագրման հույսը, նրա բախտն ու ապագան: Հենց այդ զաղափարական հենքի վրա էլ բարձրանում են Իսրայել Օրինի, Եսայի Հասան-Ջալալյանի եւ մի շարք այլ կերպարներ, որոնք գծված են մեր դասական պատմավեպի ոգով ու օրինակով:

17-րդ դարի վերջում եւ 18-րդ սկզբին պարսկական ու օսմանյան բռնատիրությունների ստեղծած սոցիալական եւ քաղաքական քայքայի մեջ խեղդվում էր հայ ժողովրդը: Անթաքալու, տեղական մանր իշխանությունների գլխավորած երկրում այս ու այնտեղ տարերայնորեն բռնկվող ընդվզումները միայն խեղդվում էին արյան մեջ, եւ բռնակալներն ավել էին սեղանում սոցիալական ու ազգային ճնշման օղակները: Ուրեմն դրսև օգնություն էր պետք, մի հզոր տերության արդար հովանավորություն ու անշահախնդիր օգնություն, որպեսզի հայությունը փրկվի վերահաս կործանումից: Ո՞րն էր լինելու այդ պետությունը: Երկրի հոգեւոր առաջնորդն ու հին իշխանական տների մնացորդները խելք խելքի տալով, բանագնացներ են ուղարկում Եվրոպա, քաղաքակիրթ երկրների դռներն են ծեծում: Սակայն ապարդյուն: Եվրոպական տիրակալների խիղճն ու մարդասիրությունը զուր փորձարկելուց հետո Իսրայել Օրին հասնում է Ռուսաց արքունիք եւ հանձնի Պետրոս Մեծի կայսրության, գտնում այն հովանին, որի փրկարար թելի տակ պետք է աճեր հայոց բախտի ծառը: Հայոց երկիրն անվերապահորեն իր հայացքը դարձնում է դեպի հյուսիս:

«Ճակատագիրն հայոց» վեպը Սուրեն Այվազյանի գրական հասունության վկայությունն էր: Նրանից հետո ընթերցողը նոր խոսք էր սպասում գրողից: Եվ այդ խոսքը չուշացավ: Լույս տեսավ Այվազյանի հաջորդ գիրքը, որ հետաքրքիր խորագիր ունի՝ «Կա եւ տեսահու կյանք»: Գիրքն

ընդգրկում է հեղինակի մտորումները կյանքի ու մահվան, առօրյա մանր ու մեծ գործերի, ժողովրդի հերոսական ոգորումների մասին:

«Կա եւ տեսահու կյանք»-ի հետ գուգահեռ կամ, թերեւս, նրանից անմիջապես հետո հյուսվեց «Առավոտ լուսո» վեպը՝ նվիրված հաշատուր Արվայանի պայծառ կերպարին: Այսպես, մի ուղքով ժամանակակից կյանքի մեջ, մյուսով՝ պատմական անցյալում, Այվազյանն ապրում էր իր գրական կյանքը: «Մենք պատմական ժողովուրդ ենք, - ասում էր նա, - եւ իրավունք չունենք կորվելու մեր արմատներից: Ով արհամարհում է անցյալի դասերը, կխարխափի այսօրվա ճամփաներին եւ վաղ թե ուշ կխորտակվի վաղվա փորած փոսերի մեջ»:

Անցյալի դասերի մեջ նա մի առանձնակի սիրով էր փարվում հայոց ռուսական կողմնորոշմանը եւ այդ ճանապարհին կատարված վերափոխություններին:

Խաչատուր Արվայանն է Այվազյանի «Առավոտ լուսո» վեպի գլխավոր հերոսը: Հայոց նոր գրականության ռահվիրա, լուսավորիչ-դեմոկրատ, մեծ մտածող, լուսավորական գործի ճարտար կազմակերպիչ, մարդկային ամենավեճեմ արժանավորություններով տոգորված մի անհատականություն, որ իր մթամած միջավայրում վառվող մոմի պես սպառվեց ու անհետացավ...

Վիպասանը հմտորեն օգտվել է Արվայանի գրական ու գիտական ժառանգությունից, նամակներից ու այլազան թողնուներից եւ ստեղծել հրաշալի մի կերպար իր դարի հիմնապատասխան վրա, ժամանակի ուրիշ պատմական-իրական այնպիսի գործիչներին համաստեղության մեջ, ինչպես ռուս մեծ դրամատուրգ, հայ ժողովրդի պայծառ բարեկամ Գրիբոյեդովը, հայ հոգեւորական ու պետական գործիչներ Ներսես Աշտարակեցին, Հովսեփ Արղությանը եւ շատ ուրիշներ:

Այվազյանի կերտած Արվայանի խոսքով լավ է բնութագրվում «խավարի թագավորության մեջ գործող լուսավոր անհատների դերը. «Որքան լավ է ողջակիզվել այն գիտակցությանը, թե թու լույսով հավիտենապես փոխի ցրտե այս հողագունը պատած մթությունից թեկուզ մի փոքր տարածություն»:

Արվայանը ծնվել էր շրջապատի մութը ցրելու համար եւ ծնվել էր ճիշտ ժամանակին:

Այվազյանի վեպը շատ պակասավոր կլիներ, եթե ընթերցողի աչքերը չբացեր ու հայացք դարձնել չտար հետագա իրականության վրա: Արեւելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Հայ ժողովրդի մի մասը փրկվեց ֆիզիկական բնաջնջման վտանգից եւ իր բախտը կապեց ռուս ժողովրդի հետ: Բայց չէ՞ որ ինքը՝ ռուս ժողովրդին էլ գտնվում էր ցարիզմի ու ճորտատիրական կարգի դաժան պայմաններում: Չէ՞ որ երեսնը սարդափրի ճիրաններից ազատագրող ռուս զինվորության շարքերում էին ռուս հալածական դեկաբրիստները: Այդ ինչպե՞ս էր պատահել, որ մի երկրի լավագույն մարդիկ հալածական էին իրենց իսկ հայրենիքում:

Արվայանի կերպարն աճում է, բարձրանում եւ մաքրվում, պարզվում է նաեւ նրա վերաբերմունքը նոր իրականության հանդեպ: Նա դառնում է ռուս աշխատավոր ժողովրդի, ռուս առաջադիմական մտքի ու մտավորականության բարեկամը եւ միաժամանակ թարտում է ցարական չինովիկության ու շահագործողական ապարատի հյուսած ցանցի մեջ: Կյանքի վերջին տարիներին պաշտոնական շրջանների համար կասկածելի ու վտանգավոր այս գործիչը տոգորված էր մտորումներով, որոնք նրան պիտի ընդհուպ մոտեցնեին ռուս հեղափոխական դեմոկրատների բանակին, մի քայլ, որը կատարեց արդեն նրա արժանավոր հաջորդ ու հոգեզավակ Միքայել Նալբանդյանը:

Այվազյանի վերջին գիրքը «Խնձորեսկ» վեպի առաջին հատորն է: Այն կազմված է գրույցներից, որոնք նույնիսկ են հիշեցնում: Նրանք բացում են զանգեզուրյան-խնձորեսկյան առանձին ճակատագրերի կամ դեպքերի խորունկ ծալքերը եւ միավորվելով՝ ներկայացնում հայոց երկրի սոցիալական-

Սուրեն Այվազյանի պատմվածքները



Այվազյանի Սուրենը

Սուրեն Այվազյանի «Խիղճը» ժողովածուում ամփոփված են հինգ տասնյակից ավելի պատմվածքներ, ակնարկներ և արձակ բանաստեղծություններ: Նյութերի այսպիսի առատությունն արդեն խոսում է այն մասին, որ Այվազյանը բեղմնավոր գրող է:

Թեմատիկ առումով գրքում ամփոփված գործերը բազմազան են. դրանք նվիրված են ժողովուրդների բարեկամությանը, կոլտնտեսային գյուղին, սոցիալիստական շինարարությանը, սովետական մարդկանց աշխատանքային գործունեությանը: Հեղինակը հատկապես «Չորերի ծայրը» շարքում աշխատում է իր ուշադրության կենտրոնում պահել մարդուն, թափանցել նրա հոգու խորքը, պատկերել նրա խոհերն ու մտորումները: Եվ պետք է խոստովանել, որ մի շարք ստեղծագործություններում Այվազյանի հաջողվել է ցույց տալ սովետական մարդու հարուստ հուզաշխարհը:

Ահա, օրինակ, «Չորերի ծայրը» շարքի համանուն պատմվածքը: Շափաղաք ապերը Հայրենական մեծ պատերազմում կորցրել է իր հինգ զավակներին, բայց պահպանել է հոգու արիությունը: Այդ էլ մղում է ծերունի վարպետին հավերժացնելու իր որդիների անունը, նրանց հիշատակին հայրենի վայրերում կառուցել հուշարձան-աղբյուրներ: «... Ցամաքեցրեց բռնամիտ իմ սրտի հինգ աղբյուրը, նրանց անունով հինգ հիշատակ աղբյուր պիտի շինեն այս ծորերում: Թող մեզնից հետո եկողը իմանա, որ հեշտ չի եղել: Թող իմանա, որ մի սիրտը հինգ կտոր է արվել, էլի ապրել է մարդն ու հավատարիմ է եղել իր հավատին: Թող իմանա, որ ինչ ինքը վայելում է, արյունով է ձեռք բերվել և ինչքան արյունով... », - ասում է նա (էջ 15):

Պարզ, հուզիչ խոսքեր, եւ այդպիսի

պարզությամբ ու հուզականությամբ էլ շնչում է ամբողջ պատմվածքը, որտեղ, իբրև հիմնական մոտիվ, հնչում է լավատեսությունը: Դա էլ հենց նոր մարդու հոգեբանությունն է:

Այդպիսին է նաև «Լուռ Լալազարը» պատմվածքը: Համեստ ու լռակյաց Լալազարն անցել է կյանքի փորձություններով և այժմ աշխատում է հարազատ կոլտնտեսության մեջ: Նա չի կարողանում բաժանվել Առաջին համաշխարհային պատերազմից հիշատակ մնացած կաթսայիկից և այլումիցե տափաշից, որովհետև դրանք հիշեցնում էին իր ռուս ընկերոջը՝ Իվանին, որի հետ նա մի ամանից բորչչ է կերել, ճիշտ է, այժմ խաղաղ կյանք է, բայց Լալազարը միշտ էլ իրեն «սալդաթ» է պատկերացնում: Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, նա ներկայանում է զինկոմիսարիատ և ցանկություն հայտնում կամավոր մեկնել ռազմաճակատ: Բայց նրան մերժում են, առաջարկում տուն գնալ:

- Տո՛ւն, սալդաթին ի՞նչ տուն, բա ո՞վ պիտի կռիվ... - զարմացած պատասխանում է նա և նրան ընդառաջում են (էջ 43): Պատերազմից հետո Լալազարը վերադառնում է գյուղ և հենց հաջորդ օրը դուրս գալիս դաշտ, շարունակում աշխատել հարազատ կոլտնտեսության համար: Եվ երբ մահանում է բոլորից հարգված ու սիրված այդ հասարակ, լռակյաց մարդը, համագյուղացիները որոշում են նրա շիրմաքարին գրել միայն «Լուռ Լալազար» բառերը, որովհետև դրանք հետագա սերունդներին «ամեն ինչ կասեն» (էջ 46):

Շնչարտացի և գեղարվեստորեն հաջողված գործ պետք է համարել «Հարազատները» պատմվածքը: Այստեղ Այվազյանը ցույց է տալիս, որ ժողովուրդների բարեկամությամբ դաստիարակված սովետական մարդկանց մեջ ծնվել են մարդկային նոր, բարձր ու վեհ հարաբերություններ:

Մեր մարդկանց տխուր անցյալն ու երջանիկ ներկան հակադրված են «Հերիք» պատմվածքում: Ծերունի Հակոբ-ջանը տրտնջում է իր բախտից, որ աստված իրեն միշտ աղջիկներ է տալիս: «Թե արարիչը դու ես, և մեկը թող տղա լինի: Տղան մերկ էլ լինի, յուր կզնա: Աղջիկը մեղք է», - դիմելով աստծուն՝ ասում է նա: Բայց բախտը քմահաճ է. նրա ընտանիքում ծնվում է յոթերորդ աղջիկը: Տատներն առաջարկում է սպանել նորածնին: «Ով պիտի ուզի թեզ նման աղբառ մարդու աղջկը. ոչ ոք: Պիտի քավթառեն, մնան տանը, ու դու նրանց կերակրես: Իսկ դու կարո՞ղ

ես յոթ ուտող բերանին հաց հասցնել, էլ չես խոսում դրանց մերկությունը ծածկելու մասին» (էջ 73): Բայց հայրը չի լսում այդ չար խորհուրդը և խնամում է զավակին՝ համոզված լինելով, որ «մի օր կբացվի նրա բախտի դուռը»: Հակոբ-ջանը իր դստերն անվանում է Հերիք՝ ասել ուզելով, որ բավական է, ինչքան աղջիկ ունեցա: Անցնում են տարիներ, սովետական կարգերի շնորհիվ Հերիքը դառնում է գյուղատնտես, առաջադրվում է ՍՍՍՐ Գերագույն սովետի դեպուտատության թեկնածու, և հայրը իրեն երջանիկ է զգում: Նա կամենում է փոխել դստեր անունը, որպեսզի մոռացվեն երբեմնի դառն օրերի հետ կապված հուշերը: Բայց Հերիքը առարկում է. «... Իմ անունը հետաքրքիր պատմություն ունի: Դա ցույց է տալիս, թե որպես հայր դու ինչպիսի ճանապարհ ես անցել»:

Հիշատակված բոլոր պատմվածքների ամենամեծ արժանիքն այն է, որ Այվազյանը դրանց մեջ հարազատ է մնացել կյանքի ճշմարտությանը, չի հրապարակել էֆեկտներով:

Այս պատմվածքների մի ուրիշ առանձնահատկությունն էլ այն է, որ հեղինակը չի ընտրել մանվածապատ, «հետաքրքրաշարժ» սյուժեներ: Այվազյանը ընդհանրապես երկաթաբան հեղինակն է: Այվազյանին առանձնապես հաջողվում են բնության նկարագրությունները: Այստեղ արդեն նա իր տարերքի մեջ է, նրա խոսքը դառնում է հուզիչ, համակված բանաստեղծական քնքշությամբ: Այս տեսակետից, մեր կարծիքով, Այվազյանի վրա զգացվում է Ակսել Բակունցի ազդեցությունը: Ահա թե արձակագիրն ինչպես է նկարագրում Քարակոփի ձորերը՝ «Չորերի ծայրը» պատմվածքում. «... Ճանապարհի փոշու մեջ բույլ շողում է պայտի բեկորը և մի ծուռ մեխ: Մասրենու մոտ կաքավի նախշուն փետուրների հետ ընկած է որսորդական հրացանի ժանգոց կանաչած պարկուճը ևն ծխախոտի մնացորդ: Շողունի քերծից ջրի խոշոր կաթիլները առաջվա պես մամուռներից ծլնալով են քարերի, կտորած կուլայի փշրանքների վրա ու տարբեր ծայրեր են հանում: Քերծի տախտունը խոտերն էլի կպած են գետնին: Պառկած խոտերի վրա էլի հացի, պանրի փշրանքներ կան և սոխի կլեպ: Ահա չինարու բարձր ծյուղին կաշաղակի բույնը, կլոր, ինչպես հովվի փափախը» (էջ 5):

Խոսքի որքան ժխտություն և որքան տեսողական պատկեր: Պետք է խոստովանել, որ «Խիղճը» ժողովածուում զետեղված են մի շարք գործեր, որոնց մեջ հեղինակը ջանում է «հոգեբանական հայտնագործություններ» կատարել, պատկերել արտասովոր հոգեվիճակներ և այդ կերպ ընթերցողի մեջ առաջ բերել տպավորություն, հուզել նրան: Եվ զարմանալի չէ, որ այդպիսի գործերում նա ստեղծում է մտացածին դրություններ, մարդկային անհամադրիչ հարաբերություններ:

Վերցնենք, օրինակ, «Բախտը» պատմվածքը: Երբ խոստովանել, որ «Խիղճը» ժողովածուում զետեղված են մի շարք գործեր, որոնց մեջ հեղինակը ջանում է «հոգեբանական հայտնագործություններ» կատարել, պատկերել արտասովոր հոգեվիճակներ և այդ կերպ ընթերցողի մեջ առաջ բերել տպավորություն, հուզել նրան: Եվ զարմանալի չէ, որ այդպիսի գործերում նա ստեղծում է մտացածին դրություններ, մարդկային անհամադրիչ հարաբերություններ:

Վերցնենք, օրինակ, «Բախտը» պատմվածքը:

Քաղաքական վերափոխությունը մեր դարի 20-30-ական թվականներին: Սա եւս պատմական վեպ է: Գալիքի պատմաբանն այստեղից ավելի շատ մյուս է քաղելու դարաշրջանի մարդկանց կյանքի ու պայքարի, մեծ տառապանքների ու սերերի, հոգեկան վերափոխությունների ու երազանքների մասին, քան այն փաստաթղթերից ու այլազան վավերագրերից, որոնք միայն մենք գիտենք, թե որքան պակասավոր են, աղճատ:

Այս վեպի դիպաշարային թելը ոչ թե ձգվում-առաջ է գնում, այլ առանցքին փաթաթվելով, կծիկ է դառնում: Եվ այդ կծիկի մեջ շերտ-շերտ կուտակվում է խնձորեսկյան կյանքի մեծ, անկրկնելի վիպերգը: Հաջորդ հատորում կամ հատորներում ի՞նչ էր ավելանալու արդեն գրվածին, դա գուցե այնքան էլ կարևոր չէ, քանի որ ամբողջական, կառուցիկ և ավարտուն է այն, ինչ հասել է ընթերցողին: Այստեղ գլխավոր հերոսներից յուրաքանչյուրի կենսագրությունը լեռնային կածանի պես տեղից սկսվում և ավարտվում է մի այլ տեղ: Ընթերցողը քայլում է այդ կածաններով, որոնք անցնում են բնության անկրկնելի պատկերների

միջով, լեռնաշխարհի գույների ու ծայրերի շռայլ ուղեկցությամբ: Տիրացու Ապավենը, վարժապետ Ասլամազը, ջարդացյալ Դազարը, հովիվ Ջահանգիրը, Աթազ մայրիկը և նրանց մնացած շատերից յուրաքանչյուրը կարող էր կենդանացնել ամեն մի անկեղծ դան վեպ: Իսկ այստեղ նրանք հյուսված են իրար, ինչպես լեռնային կածաններն են իրար գալիս, որպեսզի մեկ էլ հեռանան, գնան իրենց համար նախաբացված ուղիություններով:

Վեպի գրուցաշարին տիրություն անող, ինչպես նաև թռուցիկ անցնող-դարձող համարյա բոլոր մարդկանց հետ այս կամ այն կերպ առնչվում են Լեւոն Ղարաբյակյանը և բարտապետ Բագրատը: Առաջինն ազնիվ ու անձնվեր, համեստ ու արդար, ժողովրդական երջանկության համար ապրող ու պայքարող մի մարդ, ոչ թե մեռնում, այլ սպառվում է, և նրան ճանաչողներին, նրանից իրենց լույսն ու հույան ստացած մարդկանց մի պահ թվում է, թե արելը խավարեց: Ի՞նչ պիտի անենք առանց Լեւոնի, - հարցնում են մարդիկ: Եվ լուռ Լալազարը՝ խնձորեսկյան այդ ուրբաթախոսը, համբերատարությամբ ու անտրիտուր ջանք

քի կուռքը, պատասխանում է. «Կլինի-չի կլինի՝ կփնտրենք, չգտանք՝ կստեղծենք»: Այսինքն՝ ժողովուրդը չի կարող ապրել առանց հերոսի, որն իրեն առաջնորդում է դեպի լույսն ու բարին: Եթե չեղավ այդպիսին, նա ինքը կստեղծի: Կստեղծի իր հույզերից, իր կամքից ու երազանքից և իբրև դրոշ կբարձրացնի ու կգնա նրա ետևից...

Իսկ բարտապետը՝ այն օրերի հարազատ ծնունդը, որ իր ճանապարհը հարթում էր քուրդերի ու բուրձ խառնակչությանը, բարձրացավ համագյուղացիների մեծ ու փոքր դժբախտությունների վրա: Կարծում էին՝ ողորմելի մեկը, ծիծաղելիորեն թերուս, միայն ժամանակի մի քանի համարահայտ կարգախոսներով գլուխ է պահում: Հաճախ, նույնիսկ արհամարհում էին, ինչպես ոտքին կաշոյլ ցեխն են արհամարհում: Հետո տեսան՝ դա այն ցեխն է, որ արել օրին էլ հայտնվում է և կաշուն: Կաշուն է, որ առաջ գնա ու բարձրանա: Գիրքն ավարտվում է նրա պաշտոնական առաջաբայով: Քաղաքից եկած հին ծանոթը նկատում է. «Պետք է, որ շատ առաջ գնացած լինեք»: Ասում են՝ «Կգնա», Այսինքն՝ զգուշացեք, մարդիկ:

վածքը: Շուշանն ու Դավիթը երիտասարդ են, դաստիարակվել են սովետական դպրոցում և աշխատում են կոլտնտեսությունում: Նրանք իրար հետ չափազանց մտերմական հարաբերությունների մեջ են, գրուցում են ամենաինտիմ հարաբերությունների շուրջը: Թեև նրանք միմյանց սիրում են, բայց չգիտես ինչու, չեն «խիզախում» այդ մասին խոսել: Դրա փոխարեն Դավիթը մի անգամ հայտնում է, որ իր համար հարեւան գյուղից մի աղջիկ են ընտրել: Իր ապագա հարսնացուին՝ Լուսինին տեսնելուց հետո Դավիթը, հրապարակապես նրանով, ահա թե ինչ է պատմում Շուշանին. «որ իմանա ի՞նչ աղջիկ է, ի՞նչ աղջիկ, ինչպես, ի՞նչ ասես... », (էջ 94): Շուշանը տխրում է, բայց ոչինչ չի ասում, որովհետև նա ունի իր սկզբունքը. «աղջկա սերը մնում է իր սրտի մեջ, նա ասելու իրավունք չունի», բայց ավելի անհասկանալի է Դավթի վերաբերմունքը: Նա, որ թվում է արդեն սիրահարված է իր Լուսինին և պատրաստվում է ամուսնանալ նրա հետ, սկսում է խանդել Շուշանին այն բանի համար, որ վերջինս էլ «պիտի ամուսնանա, նրան էլ պիտի սիրեն, կամ ով գիտե սիրում են» և խաղաղվում է միայն այն ժամանակ, երբ գյուղում «հարմար տղա» չի գտնում (էջ 95): Շուշանը հաշտվում է ստեղծված վիճակի հետ և Դավթին պատասխանում է, որ ինքը, ինչպես ամեն մի աղջիկ, սիրելու իրավունք չունի և «պետք է սպասի, որ մեկն իրեն սիրի: Իսկ ինքը կսիրի, թե չի սիրի՝ մեկ է»: Լսելով այդ, Դավիթը հառաչում է. «Տեսնես ով կլինի այդ բախտավորը»: Եվ այդպես էլ, առանց որեւէ պատճառի, ամուսնանում են տարբեր մարդկանց հետ: Հետագայում նրանք, իհարկե, զոջում են և ցանկություն են ունենում միմյանց հետ կիսելու իրենց խոհերը, բայց արդեն ուշ էր:

Ահա պատմվածքի ամբողջ բովանդակությունը: Դժվար չէ նկատել, այս շինծու պատմությունը հորինվել է, որպեսզի դրա օգնությամբ հեղինակը զբաղվի հոգեբանական «գյուտերով»: Հատկապես խոցելի ու հակասական է Դավթի կերպարը. եթե նա իսկապես սիրում է Շուշանին, ապա ինչո՞ւ է վազում ուրիշ աղջկա հետևից, իսկ եթե «ամաչում» է իր սերը խոստովանել, ապա ինչո՞ւ չի ամաչում նույն Շուշանի առաջ իր հարսնացուին այնքան անզուսպ կերպով գովել, վերջապես եթե սիրում է Լուսինին և ուզում է ամուսնանալ նրա հետ, ապա ինչո՞ւ է ցանկանում նույն իրավունքից զրկել Շուշանին, ինչո՞ւ չի կամենում, որ նա էլ սիրի ու սիրվի:

Այվազյանին որոշ պատմվածքներում չի հաջողվել ճիշտ պատկերել անհատի և հասարակության փոխհարաբերությունը: Հասարակությունը նրա մոտ պասսիվ է, անտարբեր անհատի և նրա ճակատագրի նկատմամբ: Այդ կարգի գործերից կարելի է նշել «Գողը» և «Փրօսի ընկուզենին»:

Անհաջող գործ է «Սուկուլունց Լեւոնը»: Այնտեղ էլ սովետական մարդիկ հա-

Գրականագիտություն

Գրականագիտություն

Սուրեն Այվազյանի պատմվածքները

էջ 11

սարակայնորեն չեն մտածում: Լեւոնը լավ ծայն ունի, սիրում է երգել եւ ուրախացնել ժողովրդին, բայց երբ կազմակերպվում են կոլտնտեսություններ, նա հեռանում է գյուղից, գնում երգելու շրջակայքում: Համազայն-դացիները եւ կոլտնտեսության վարչության անդամները, փոխանակ նրան ուղիղ ճանապարհի բերելու, նրա մեջ աշխատանքի նկատմամբ սեր դաստիարակելու, կոլտնտեսության նախագահից պահանջում են հրավիրել նրան, որպեսզի իր երգով գարդարի հարսանիքները: Երբ նախագահը իրավացիորեն ասում է, թե արտելում «երգ ասելու, դափ խփելու համար աշխարհ չեն տալիս», նրան առարկում են՝ «Մեր աշխարհից կտանք, Լեւոնին պետք է բերել» (էջ 155): Եվ պատահական չէ, որ նման վերաբերմունքը խրախուսում է Լեւոնին եւ նա, հանդիպելով համազայն-դացիներին, նայում է նրանց այնքան հետաքրքիր աչքերով, որոնք կարծես հարցնում են. «Բա մեր արտելը չլուծե՞ց իմ հարցը: Ի՞նչ է անում զուռնաչի Օհանը առանց ինձ: Բա հիմա ձեզ ո՞վ է ուրախացնում»:

«Չորերի ծայնը» շարքի պատմվածքների ճշմոտ մասի մի էական թերությունն էլ այն է, որ այնտեղ պատկերված մարդիկ իրենց հոգեբանությամբ կղզիացած են, հեռու են կանգնած հասարակական կյանքից: Այվազյանը, չգիտես ինչու, խուսափում է աշխատանքային պրոցեսների նկարագրությունից եւ նույնիսկ, եթե չլինեն «նախագահ», «ֆերմա» եւ այլ պատահական արտահայտությունները, նրա շատ գործերից («Մարդը», «Թխկուտի ծորում» եւ այլն) դժվար է կրահել, թե դեպքերն ինչ հասարակագում են ծավալվում, սովետական, թե՞ մինչսովետական:

Հնարավոր չէ մի առ մի խոսել «Խիղճը» ժողովածուի բոլոր գործերի մասին: Լշենք միայն, որ Այվազյանը գրել է նաեւ արծակ բանաստեղծություններ, որոնցից հաջողված կարելի է համարել «Այդ ծնեռ», «Մայրոս» եւ «Որդուս» գործերը: «Հանդիպումներ ճանապարհին» եւ «Նավթաշխարհում» բաժիններում տեղ են գտել նաեւ մի քանի ակնարկներ: Թեեւ դրանք պատկերում են աշխատանքային գործունեության եւ մարդկային հոգեբանության որոշ կողմեր, բայց դրանք չեն հուզում ընթերցողին, որովհետեւ արդյունք են ոչ թե կյանքի խոր ճանաչողության, այլ տուրխտակյան տպավորությունների եւ հապճեպ դիտողությունների: Գեղարվեստական առումով այդ ստեղծագործությունների բնորոշ թերությունն այն է, որ դրանց մեջ նկարագրված բոլոր դեպքերն ու դեմքերը անբաժան են հեղինակային «ես»-ից, պատմվում են նրա անուրից, իսկ դա, ինչպես հայտնի է, ակնարկներ գրելու առավել տարածված եւ ոչ ուղիղ ուղին է:

Ամփոփենք. «Խիղճը» ժողովածուի, հատկապես «Չորերի ծայնը» շարքի պատմվածքները վկայում են, որ երբ Այվազյանը կյանքը լավ է ճանաչում, կարողանում է ստեղծել ճշմարիտ ու հուզիչ ստեղծագործություններ, իսկ երբ նա ընթանում է սխալ ուղիով, կյանքը պատկերում է նախապես հորինված սխեմաներով, ապա անպայմանորեն սայթաքում է, ընթերցողին է մատուցում կեղծ գործեր:

Այվազյանն ունի գեղարվեստական երկ ստեղծելու եւ մարդկային հոգեբանություն պատկերելու անվիճելի շնորհք, ուստի նա պետք է լավ է խոր ուսումնասիրի կյանքը, հրաժարվի սխեմաներից ու ընթերցողին հուզելու զանազան արհեստական միջոցներից, չլռելի ճշմարիտ արվեստի ուղուց:

Երեւան, 1958

«Ճակատագիրն հայոց»

Վարդան Ղազանջյան

Սովետահայ արծակը տարեցտարի իրացնում է մեր ժողովրդի պատմության խոսքի շերտերը, վերակենդանացնում հայ ժողովրդի եւ հերոսական, եւ ողբերգական իրադարձություններով լի հեռու եւ մոտիկ անցյալի անմոռանալի էջերը, որոնցում ուսանելի շատ բան կա սերունդների համար:

Վերջին տարիներին լույս տեսած պատմաքաղաքական վեպերի շարքում ընթերցողի ուշադրությունն է գրավում Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոց» վեպը, որտեղ պատմական ֆոնի վրա տրված է հայ հասարակական-քաղաքական երեւելի գործիչ Իսրայել Օրու գեղարվեստական կերպարը:

Իսրայել Օրու մասին պատմագիտական ուսումնասիրություններ են գրել մեր ակադեմիկոս պատմաբանները, նրա մասին գրվել է նաեւ գեղարվեստական երկ:

Արծակագիր Սուրեն Այվազյանն իր վեպը գրել է նկարագրվող ժամանակաշրջանի վրա լույս սփռող պատմագիտական աղբյուրների, արխիվային նյութերի ու փաստաթղթերի մանրագին ուսումնասիրության հիման վրա: Դրանցից կարելի էր հարուստ օգտագործել է վեպում՝ իբրեւ փաստական ատաղձ, իհարկե, գեղարվեստորեն մշակված չեզվով:

Հեղինակն իր ուսումնասիրությունների հիման վրա զարգացրել է հայ ազատագրական շարժման միանգամայն ճիշտ պատմա-գեղարվեստական կոնցեպցիա: Նա վեպում ցույց է տվել, որ հայ ազատագրական միտքը երկար դեգերումներից հետո գտավ իր միակ ճշմարիտ՝ առասկան կողմնորոշման ուղին, որի ջատագովը դարձավ մեծ հայրենասեր, քաղաքական հեռատես գործիչ, ճկուն դիվանագետ ու զորավար Իսրայել Օրին:

«Ճակատագիրն հայոց» վեպը նվիրված է մեր պատմության շատ կարեւոր էտապներից մեկի՝ XVII-XVIII դարերի ազգային-ազատագրական շարժումների իրադարձություններին: Վեպը կառուցված է բավականին բարդ սյուժետային համագույններով: Գրքի գեղարվեստական հենքը պատմական ռեալիզմն է:

Սկզբից ասենք, որ չնայած իր պատկառելի ծավալին, գիրքը կարդացվում է լարված հետաքրքրությամբ: Հեղինակին հաջողվել է ստեղծել պատմական դարաշրջանին համապատասխան դրամատիկական բազմաթիվ դրոթյուններ ու կերպարներ, որոնց գործողության մեջ զգացվում է դարաշրջանի կոլորիտը, նրա շունչն ու ոգին: Վեպում բնակեցված (բավականին շատ) եւ դրական, եւ բացասական հերոսներն ինքնատիպ են, ամեն մեկն օժտված իր ուրույն մտածելակերպով եւ ներաշխարհով: Վեպն ընթերցելիս մարդու մեջ գործող անծանց նկատմամբ հաջորդաբար ծնվում են երկու տիպի զգացումներ՝ կամ սեր, կամ ատելություն, կամ համակրանք, կամ հակակրանք: Հեղինակին հաջողվել է բարդ ու ցայտուն գույներով նկարագրել կերպարները: Անշուշտ, առավել հուզիչ եւ առիթնող են դրական հերոսները, որոնց հեղինակը կերտել է մեծ սիրով ու շերմությամբ:

Վեպը բաղկացած է երեք գրքերից: Առաջին մասը հեղինակը վերնագրել է «Մահ կամ ազատ Հայաստան»: Այս էքսպոզիցիոն գլխում ցույց է տրված, թե ինչպես Հայոց աշխարհի վրա դամոկլյան սրի ման կախված էր մուսուլմանական կրոնի բարբարոս ֆանատիզմով ներծծված թուրքական եւ պարսկական ռազմաֆեոդալական տիրակալության արյունոտ թաքթը, որի մագիլների մեջ դարեր ու դարեր արյունաքամ էր լինում հայ շինարար ու խաղաղ, քրիստոնյա ժողովուրդը:

Սուրեն Այվազյանի վեպը նվիրված է պարսկական բռնակալության ներքո հեծող հայության մի հատվածի ստրկական վիճակի նկարագրությանը:

Հեղինակը վարպետությամբ է կերտել արեւելյան բռնապետների բուժ տիպերը, Նախիջեւանի Ասադուլա խանի եւ մյուս խաների քստմենլի կերպարները, նրանց նենգամտությունները, քծանքը շահի նկատմամբ, դաժանությունները, անասնական ատելությունը դեպի մարդ արարածն առհասարակ, իսկ դեպի քրիստոնյա հայերը՝ առանձնապես: «Շահ Սուլեյմանի աչքում միշտ բարձր մնալու համար Ալամ Ասադուլա խանը արքունական պահեստներն ու զանգարանները միշտ մի բան ավել էր ուղարկում: Եվ մրցել էր ուզում մյուս խաների հետ՝ հարեն ուղարկած իր աղջիկներով, գերի տղաներով: Այդ պատճառով էլ Սյունիքում տարեցտարի ծանրանում էր ժողովրդի վիճակը» (էջ 8):

Ժողովրդի ծանր դրությունն ընկճում էր նաեւ հայ մելիքներին, որոնց միջոցով պարսից տիրակալները խլում էին գյուղացու արյուն-քրտինքով ձեռք բերած նրա ապրուստի վերջին կտորը: Այն մելիքները, որոնք փորձում էին մերժել կամ չկատարել խանի չափ ու սահման չունեցող պահանջները, տանջամահ էին լինում ստորգետնյա զնդաններում՝ մահապատժի միջնադարյան բազում ձեւերով: Այդ պատժին է արժանանում, օրինակ, Հալիժորի Գուրգեն Յուզբաշին: Ավելի դաժանորեն է վարվում խանը խնձորեսկցի Մելիք-Ֆարամազյան Մեհրու եւ նրա որդու՝ Մխիթարի նկատմամբ: «Դու, Մելիք-Ֆարամազյան Մեհրի, – վերջապես խոսեց խանը, – եւ քո որդին, խառնակիչներ եք: Խառնակիչներին ես չեմ զլխատում: Այս բանը թող իմանան բոլոր յուզբաշիները, մյուս հայերը՝ առավել եւս: Ես զնդանի մեջ ծեծկռտոցով սատկացրի Հալիժորի Գուրգեն Յուզբաշուն, որը փորձեց բարձրաձայն խոսել իմ դեմ... Փորձեց հայություն անել շահի պաշտոնակատարը: Գլխատելը թեթեւ պատիժ է... իսկ հիմա ես ձեր աչքերի լույսը կհանեմ, որ դուք ապրեք ու տանջվեք...» (էջ 38):

Պարզ է, որ այդ ճշունները հայ գյուղացիության մեջ առաջացնում էին «կռվով ապրելու» գաղափարը: «Մենք՝ բոլոր հայերս, ներության մեջ ենք: Ուզում ենք ապրել որպես հայ, պիտի քաջանանք ազգովին... Կռվենք, որ ապրենք» (էջ 70): Հոգեբանական այս նախապատրաստությունից հետո հեղինակը տվել է անհնազանդ ու վրիժառու խնձորեսկցիների հերոսական ինքնապաշտպանության ճակատամարտի բավականին գունեղ նկարագրությունը:

Պարսիկների դեմ հայերի մղած ինքնապաշտպան կռիվների նկարագրության մեջ հեղինակը ցույց է տվել արտաքին թշնամու նկատմամբ հայ գյուղացիության եւ մելիքների միաբանությունը եւ նրանց ընդհանուր համազգային հայրենասիրությունը: Ճիշտ է, պարսիկը եկել է բռնի կերպով տիրել է հայերին, սակայն հայերը երբեք էլ իրենց պարտված չեն զգացել հոգեպես, բռնության մեջ անգամ պահպանել են իրենց ազգային ոգին, մայրենի լեզուն ու հավատը:

Հայոց հողն ու ջուրն օտարին չի հաշտվել: Դրա համար էլ հայը բռնության մեջ վճռել է՝ «Մահ կամ ազատ հայրենիք»:

Հայերի անհնազանդությունը միշտ էլ վտանգ է սպառնացել պարսիկ մարզպաններին ու խանին: «Հայը անհանդուրժելի ժողովուրդ է, պարտվել է, տիրել ենք, բայց չենք կարողանում նրա մոտ հանգիստ զգալ: Պարտվածության մեջ էլ սարսափելի է...», – ասում է խանի վեպից:

Վեպի հեղինակը միաժամանակ ցույց է տվել, որ պարսիկ ժողովուրդն իր ծոցից ծնել է ոչ միայն գոռոզ բռնապետ շահեր ու խաներ, այլեւ հոգով ու զգացումներով վեհ հունանիստ մտածող մուսուլմաններ, որոնց ներկայացուցիչն է գինվոր Շամս-սին: Շամսին ներքնապես բարի է. նա ընդդիմանում է ազգային բռնությանը, ասելով, որ թշնամանքին եւ ուժերի սահմաններում օգնում իր հայ եղբայրներին:

Այդ հուզիչ եւ կոլորիտային կերպարն իր մարդկային առաքինի գծերով կարծես թե սերում է մուսուլմանական արեւելքի մեծ հունանիստ մտածողների՝ Սիզամու, Խաքանի, Սաադիի, Ջամիի եւ Ռումիի սերնդից, որոնք բարի հոգու երգիչներ էին եւ ազգերի եղբայրության ջատագովներ: Այդ համակրելի կերպարն անջնջելի է մնում ընթերցողի հիշողության մեջ:

Նկարագրվող դարաշրջանի տարբեր դասերի մարդկանց բարոյաքաղաքական կերպարները ռեալ ցույց տալու համար, հասկանալի է, որ հեղինակը պետք է քաջատեղյակ լիներ ժամանակի պատմական հոգեբանությանը եւ իշխող գաղափարներին, այսինքն՝ իսլամական եւ քրիստոնեական կրոնների դավանաբանությանն ու բարոյական ընթաններին: Վեպի սյուժեից երեւում է, որ հեղինակը խորապես ուսումնասիրել է տարբեր առիթներով օգտագործել է եւ դուրանի, եւ ավետարանի բազմաթիվ մտքերն ու ասույթները:

Վեպի գլխավոր հերոսներից է հայ լուսավորչական եկեղեցու այն ժամանակվա առաջնորդ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին: Մեծ է եղել այդ ազատեր ու հեռատես հոգեւոր առաջնորդի դերը հայկական ազատագրական շարժման պատմության մեջ, որի հայրենամարտ գործերի կենդանի նկարագրությունը բազմաթիվ էջեր է գրավել վեպում:

Իրավացի է պատմավեպի հեղինակը, երբ ասում է, որ «Դարեր շարունակ աշխարհիկ առաջնորդներից զրկված հայերը հոգեւոր առաջնորդի մեջ են փնտրել իրենց հավատն ու հույսը» (էջ 232): Այդպիսիներից է եղել հենց Հակոբ Ջուղայեցին, որը միանգամայն ճիշտ կողմնորոշում է ունեցել հայոց ազատագրական շարժման գործում. նա վճռական դեր է կատարել 1677 թվականի էջմիածնի գաղտնի խորհրդատուրով հրավիրելու հարցում, որտեղ հայոց հոգեւոր եւ աշխարհիկ տերերը քննարկեցին պարսկական լծից հայերի ազատագրման ծրագիրը:

Մեր ականավոր պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը «Գրվագներ հայ ազատագրման մտքի պատմության» երկրորդ գրքում գրում է, որ «Հակոբ Ջուղայեցին շարունակում էր քաղաքական ակնկալությունների եւ բանաբանությունների այն ուղին, որ իրենից առաջ բռնել էին XV-XVI դարերի հայ քաղաքական գործիչները: Ինչպես երբեմն նրա Մախորդները, այնպես եւ հիմա ինքը՝ Ջուղայեցին, մտահոգված էր Հայաստանի քաղաքական վիճակով: Ինչպես երբեմն առաջ, այնպես նաեւ հիմա, բանավարություններն ընդգրկում էին ոչ միայն Հայաստանի, այլեւ Վրաստանի ազատագրման խնդիրները»:

1670-ական թվականների ընթացքում ինչպես հայ, այնպես նաեւ վրաց ազատագրական շարժումները սրվում էին թե Թուրքիայի եւ թե Իրանի դեմ: Էջմիածնի խորհրդատուրով անմիջապես հետո Հակոբը անցավ Վրաստան ու կապվեց Թուրքիայի եւ Իրանի դեմ կռիվ ելած վրաց ղեկավարների հետ»:

Հենց այս միտքն էլ Ջուղայեցու վերաբերյալ գեղարվեստորեն զարգացրել է Ս.Այվազյանն իր վեպում: Նա ցայտուն գույներով նկարագրել է Ջուղայեցու կողմից հրավիրված էջմիածնի գաղտնի ժողովի ընթացքը, երբ հոգեւորական եւ երեք աշխարհիկ պատվիրակների ընտրությունը եւ նրանց առաքելությունը դեպի քրիստոնյա եվրոպա: Վեպում ցույց է տրված նաեւ Ջուղայեցու հանդիպումներն Իմերեթիայի թագավոր Արշիլի հետ՝ Քութայիսում, որը նույնպես մտահոգված էր Վրաստանն իրանական



Եւ թուրքական տիրապետությունից ազատագրելու հարցով:

Պատմական ճշմարտությանը հավատարիմ, վիպասանը ցույց է տվել, որ Հակոբ Ջուղայեցու առաքելությունն անկատար մնաց, նա մահացավ իր ծրագրերի իրականացման կես ճանապարհին՝ Կոստանդնուպոլսում:

Ա.Յովհաննիսյանը գրում է, որ «Քեռ-մյուրճյանի «Ողբը» ազդարարում էր այն խոհերը, որոնք կապվում էին Հակոբ Ջուղայեցու անպակ ալնկալու-թյուններին եւ ընթացք էր տալիս այն հույզերին, որոնցով գերեզման էին իջեցնում մեռած կաթողիկոսին՝ նրա գլխավորած քաղաքական ձեռնարկի կուսակիցները:

Ջուղայեցու մահը վերջ էր տալիս այդ ձեռնարկին: Պոլսում մնացած նրա ուղեկիցները ցաքուցրիվ էին լինում՝ չհասնելով ոչ մի արդյունքի:

Ճանապարհը դեպի Եվրոպա շարունակում է միայն դրանցից մեկը՝ Իսրայել Օրին»:

(Դրվագներ՝ էջ 223): Վեպի երկրորդ գրքում սկսվում է Իսրայել Օրու բուն գործունեության նկարագրությունը, նրա ճանապարհորդությունը դեպի Եվրոպա, նրա ծրագրերի ու որոնումների բացահայտումը, նրա համար ու հետևողական պայքարը հայոց ճակատագրի համար:

Ո՛վ է Իսրայել Օրին, եւ վիպասան Սուրեն Այվազյանը ճիշտ է կառուցել արդյոք պատմությանը քաջ հայտնի այդ մեծ գործի գեղարվեստական կերպարը:

Վիպասանը ելնելով պատմագիտական բազմաթիվ աղբյուրներից ցույց է տվել, որ Իսրայել Օրին 17-րդ դարի վերջին կեսի եւ 18-րդ դարի սկզբի քաղաքական այն խոշորագույն դեմքն էր, որը, շնորհիվ իր բազմակողմանի ընդունակությունների ու հեռատես մտքի, կարողացավ գրեթե մեն-մենակ հայոց հարցն արծարծել Եվրոպայի մեծ պետությունների առջեւ: Վեպում ցույց է տրված կյանքի այն բուն ընթացքը, որի հունի վրա Օրին աստիճանաբար աճեց, գլխավորեց ժամանակի հայ ազատագրական միտքը:

Վեպում գեղարվեստական ռեալ գույներով է տրված Օրու ծագումնաբանությունը, նրա մանկությունն ու պատանեկությունը, նրա դաստիարակությունը, նրա մեծ հայրենասիրությունը, նրա բացառիկ սերը դեպի շղթայված, բայց իր եռւթյան մեջ չբնաղ հայոց աշխարհը, որի բազմադարյան վիշտը եւ ողբերգական ներկան դարձան Օրու հայրենամկեր մաքառումների դրդապատճառը, նրա կյանքի պլֆան եւ օմեգան:

Վեպում Օրին ամբողջապես համակված է մի գաղափարով՝ ուղիներ որոնել հայերին ղզլբաշի արյունոտ թրից ազատելու համար: Հայրենասիրության այս իդեֆիքսն Օրին ժառանգել է հորից՝ Պռոշյան Մելիք Իսրայելից, նրա նախնիներից, հայոց համար նահատակված սուրբ անուններից:

«Դու ունես միայն ու միայն մի հոգս, – ասում է հայրը Օրուն՝ բարի ճանապարհ մաղթելիս, – թո ժողովրդի մեծ հոգան է, եւ միայն ու միայն մի հաճույք, որ ժողովուրդը քեզ է ապավինել իր ծանր ճակատագրի հարցը...» (էջ 243): Մելիք Իսրայելը երդվել է տալիս որդուն, որ նա իր կյանքը կնվիրաբերի այդ սուրբ գործին...

Յեղիմակը Շահապունիքի մեծ մելիք Իսրայելի կերպարի մեջ մարմնավորել է հայ մելիքության լավագույն գծերը, նրա ժողովրդասիրությունը, հայրենասիրությունը եւ ճկուն ու խելացի միտքը, նրա քաղաքական հեռատեսությունն ու համարձակությունը, որից երկյուղ էին կրում եւ որին սոսկակի ատում էին Նախիջեանի պարսից խաները:

Վեպի հյուբալից էջերն են կազմում հայ ապստամբ գյուղացիների հերոսագործությունները, նրանց վրիժառուական կռիվների նկարագրությունը, նրանց առաջնորդ տեր Կոստանդ Աստապատեցին, որը մարմնավորում է իր մեջ հայ այն հոգեւորականությանը, որն Ավարայրի դաշտի Գեւոնդ Երեցի նման մի ձեռքում խաչ, մյուսում՝ սուր, ահ ու սարսափի մեջ է պահում պարսից շահին եւ Նախիջեանի խաներին:

Յետաքրքիր դիպվածներով է լցված Իսրայել Օրու ճանփորդությունը Եվրոպայում: Երիտասարդ, արիասիրտ լեռնցիս հիշում է իր հոր խոսքերը, որն ասում էր՝ «ՔՅՆԱՄԻՆ ԻԻՄԱ ՄԵՂՆԻԿ ԱՅՆՔԱՆ ՈՒՃԵՂ Է, ՈՐ ՂԵՆՔՈՎ չԷ, ՈՐ ԱԵՏՔ Է ԽԱՂԻՔՆԵՐ: Կա ԻԻՄԱ ՂԵՆՔԻԿ ՄԵՂ ԽԱՄԱՐ ԱՆԱՎԷԼ ՄԻ ՈՒՃ՝ ԽՈՍՅՐԸ: Վարժվիր խոսքի մեջ, որ դրանով պաշտպանես ժողովուրդը: Խոսքով եւ ՂԵՆՔՈՎ» (էջ 332):

Իր հիմնական նպատակների համար Օրին ոչ մի բանի առաջ կանգ չի առնում, դիմում է բոլոր հնարավոր եւ անհնարին միջոցներին, որպեսզի կարողանա «արթնացնել քրիստոնյա տերությունների խիղճը, նույնահավատ մի հին ժողովրդի նկատմամբ, որին հոշոտում են հարեւան այլահավատ ժողովուրդներն ու վայրագ ցեղերը» (էջ 334):

Շատ տիպիկ է կառուցված Եվրոպայի բարբերին լավ ծանոթ, հայ վաճառական Յովհաննես Ապիրատի կերպարը: Չնայած պանդխտության մեջ է մեծացել, բայց իր սրտում նա դեռես վառ է պահել սերը դեպի հայրենիքն ու հարազատ ազգը: Նա ամեն կերպ աշխատում է օգնել, օժանդակել Իսրայել Օրուն, որը ձգտում է փրկության ելք գտնել իր ժողովրդին տառապանքից ազատելու համար: Օրին իր հայ բարեկամից չի թաքցնում իր ծրագրերը եւ մտադրությունները: Նրան ասում է. «Երկար եմ մտածել ու եկել այն մտքին, որ պետք է սկսել շատ հեռվից՝ թափառել երկրե երկիր, շոշափել բոլոր տերությունների տրամադրությունները եւ ընտրել դրանցից մեկին, որը առավել հնարավորություններ կունենա եւ շահագրգռված կլինի ձեռք մեկնելու Հայաստանին» (էջ 342):

Օրին համար է ու հետևողական: Նա զգում է, որ կարող է չտեսնի էլ իր որոնածը, բայց համոզված է, որ իր հետքերով կգնան նոր որոնողներ, որոնք անպայման կգտնեն ելքը:

Յեղիմակն այստեղ մտային կամուրջ է գցել Իսրայել Օրու որոնումների, նշած ուղու եւ այն սերնդի միջեւ, որը նրանցից հետո հաստատականորեն եկավ եւ գտավ այդ ճշմարիտ ուղին:

Իսրայել Օրու կյանքում ճակատագրական է հանդիպումը վենետիկցի Ջովանի Տեստայի, նրա ընտանիքի ու հատկապես նրա դստեր՝ Աստրայի հետ, որը հետագայում դառնում է նրա կինը:

Իտալացի Ջովանի Տեստայի երկտողով Օրուն հաջողվում է Փարիզում ծանոթանալ մի ֆրանսաբանակ հայի՝ քեռի Կարապետի հետ, որին այդտեղ Կարլ են անվանում: Իսկ Կարլի միջոցով նա ծանոթանում է ֆրանսիացի գիտնական Շամետիի հետ եւ նրա օգնությամբ ընդունվում գիմնորական բարձրագույն դպրոց: Դպրոցն ավարտելուց հետո, իբրեւ սպա, Օրին մասնակցում է ֆրանս-անգլիական պատերազմին, որտեղ նա աչքի է ընկնում անձնական հերոսությամբ: Բայց մի ճակատամարտում ծանր վիրավորվելուց հետո գերի է ընկնում: Գերությունից ազատվելուց հետո նա թողնում է Փարիզը եւ բնակություն հաստատում Դյուսելդորֆում: Այդ քաղաքում հերոսական մի դիպվածով նա հռչակվում է, որի համար կուրֆյուրստի կողմից նշանակվում է Պֆալցի իշխանության չորս քաղաքների կոմիսար: Ընթերցողի աչքի առաջ երևում է Օրու աշխարհաճանաչման, իմտելիկ-տուլալ, քաղաքական ու դիվանագիտական ընդունակությունների զարգացման ընթացքը, որի վկան է նրա «Ստորումների մատյանը»:

Գրքում հեքիաթանման է հնչում քեռի Կարապետի (Կարլի), պապի եւ հոր՝ հայ ժողովրդի թողած ոսկու մեծ գանձի ժառանգության պատմությունը, որ կարդացվում է հետաքրքրությամբ: Այդ պատմության մեջ տրվում են հայ պանդուխտ վանեցի հայր եւ որդի Պապակների հայրենասիրական զգացումների նվիրական երանգները:

Վեպի երրորդ գիրքը հեղինակը վերնագրել է «Առաքելությունից առաքելություն»: Այս մասում է, որ երեսան են գալիս Իսրայել Օրու քաղաքական գործունեության ընդարձակ ու համարձակ քայլերն ու ծրագրերը: Աշտ Յովհաննիսյանը «Դրվագներ-

րում» գրում է, որ «Սոտ քսան տարի Արեւմտյան Եվրոպայում դեգերելուց հետո, 1699 թվականին, Իսրայել Օրին վերադարձավ հայրենիք: Իր հետ նա բերել էր վրաց Գուրգին խանին (Գեորգի 11-րդ թագավորին), հայ եկեղեցապետներին ու Հայաստանի մելիքներին հասցեագրված գրություններ: Դրանց մեջ գերմանական իշխաններից մեկը՝ Պֆալցի կուրֆյուրստ Յովհան Վիլհելմը, պատրաստակամությամբ էր հայտնում օգնության գալ Հայաստանի ազատագրման գործին:

Կուրֆյուրստը տեղեկացնում էր, որ այդ գլուխ բերելու գործում հայերին ընդառաջելու են Հռոմի պապը, գերմանական կայսրն ու սրա զինակիցները: Անհրաժեշտ է միայն, որ հայ ժողովրդի ղեկավարներն Օրու միջոցով հավաստեն ու ճշտեն իրենց դիրքը»:

Վեպում ամենայն մանրամասնությամբ է տրված Անգելակոթում հայ մելիքների գաղտնի ժողովի պատմությունը: Օրուն հաջողվում է վերացնել ամենաազդեցիկ մելիքների միջեւ եղած գծադրությունները, միաբանվել եւ կարելու որոշումներ կայացնել:

Անգելակոթի ժողովի գլխավոր հարցը դարձավ ռուսաց կայսրին դիմելու իրատապ հարցը, որովհետեւ հայ մելիքները վերջնականապես համոզվել էին, որ իրենք «միայն Ռուսաստանի օգնությունը պիտի խնդրեն...»: «Եթե մենք ապրելու ենք որպես երբեմնի հզոր ժողովրդի մի թանկագին բեկոր, ապա միայն Ռուսաստանի հովանու տակ»: Յենց այդ ժողովում էլ ձեռնամուխ են լինում ռուսաց Պետրոս թագավորին նամակ գրելու: «Գրեցին, ջնջեցին եւ երբ օր տեսնեմ մինչեւ այն համարվեց կատարյալ եւ խնդրեցին Սինաս վարդապետին, որ մի անգամ նա կարդա»:

Վեպի ջերմ էջերն են կազմում Օրու հույզերի եւ ապրումների նկարագրությունները, երբ նա քսան տարվա օտարությունից հետո ֆրանսիացի գիտնականի անվան տակ ծայրայալ շրջում է հայրենի երկրում, մտնում է իր հարազատների տունը, հանդիպում է քրոջն ու եղբայրներին, ծանոթ բարեկամներին եւ այլն: Վեպի բազմաճյուղ սյուժեի կարեւոր մասերից է Օրու եւ Անգելակոթի տեր Գեղեւնի աղջկա՝ Հռիփսիմեի անկատար սիրո պատմությունը: Դառնություններով լի է նաեւ Օրու եւ վենետիկցի Ջովանի Տեստայի աղջկա՝ Աստրայի ամուսնական կյանքի պատմությունը, որի մեջ էս երեսան է գալիս մեծ հայի անձնական ողբերգությունը:

Հայաստանում իր անելիքներն ավարտելուց հետո, Օրին, զինված հայ մելիքների լիազորագրերով, Սինաս վարդապետի հետ վերադառնում է Դյուսելդորֆ եւ անմիջապես ներկայանում Յովհան Վիլհելմին, որը նամակների միջոցով արդեն տեղյակ էր Օրու Հայաստան ճանապարհորդության ընթացքին:

Սակայն Օրու տարիների հույզերը՝ կապված գերմանական կայսրության հետ, խորտակվում են հենց այն պահին, երբ կարծես թե պետք է այդ ծրագրերը գործ դառնային:

Օրին շարունակում է որոնումները: Կուրֆյուրստի հանձնարարական նամակով նախ այցելում է Հռոմի պապին, ապա ռուսաց կայսր՝ Պետրոս Առաջինին: Մոսկվայում եղած ժամանակ Օրին կրկին հանդիպում է Իմերեթիայի Արչիլ թագավորին, որը նույնպես եկել էր ռուսաց կայսրից օգնություն խնդրելու:

Արչիլն այն միտքն է հայտնում, որ Ռուսաստանը, եւ հատկապես Պետրոսը, թույլ չեն տա, որ ուրիշ որեւէ պետություն իրավունքներ ունենա իր երկրի հարավային սահմաններում՝ քրիստոնյա որեւէ պետության վրա: «Չէ՞ որ մեզ օգնողները օգուտ պետք է քաղեն մեզից»:

Օրին հաստատում էր, որ «Ռուսաստանը միայն Վրաստանի ու Հայաստանի միջոցով կարող է պատնեշել պարսկական եւ թուրքական վտանգը: «... Պետք է, ինչպես էլ լինի, մեր ուժերն այս մահու եւ կենցաղ օրերին՝ միանան իրար»» (էջ 612):

Յետաքրքիր երանգներով է տրված Օրու հանդիպումը եւ զրույցը Պետրոս թագավորի հետ, վերջինիս դրական վերաբերմունքն ու հետաքրքրությունը՝ հարավային սահմանների վրա գտնվող

երկու քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ:

Ռուսաց մեծ կայսրն Օրուն ընդունում է երկրորդ անգամ եւ համաձայնում է նրա առաջարկած ծրագիրն ի գործ դնել: Ըստ այդ ծրագրի՝ Օրին իբրեւ ռուսական թագավորի դեսպան, զինված զորանասով պետք է մեկնեի Պարսկաստան, ներկայանար շահին՝ առերեսությ առեւտրական կապեր հաստատելու: Սակայն Օրին իրականում պետք է ուսումնասիրեր այն ճանապարհները, տեղանքը, ազգաբնակչությունը, բնական հարստությունները, երկրի կլիմայական եւ աշխարհագրական պայմանները, որով պետք է հետագայում Պետրոսն իջներ դեպի հարավ եւ ազատագրեր վրացիներին ու հայերին: «Իհարկե, միայն հանուն հավատի չէ, որ պիտի իջնենք հարավ, – ուղղամիտ կերպով ասում է կայսրը Օրուն, իր զրույցի վերջում. – դա անում եմ ամենից առաջ իմ երկրի շահերի համար»:

Դրամատիկական դրվագներով լի է Իսրայել Օրու ճանփորդությունը դեպի Պարսկաստան, շահի երկիրը, իր նպատակի իրագործումը եւ վերադարձն ու մահը կես ճամփին՝ Աստրախանում: Նրա շրջագայությունը Մոսկվայից դեպի Պարսկաստան եւ վերադարձը տեսում է շուրջ չորս տարի:

Սիմվոլիկ եւ ողբերգական է Օրու վախճանը: Յեղիմակը ցույց է տվել, որ Օրու կյանքի ճակատագիրն ամեն ինչով նման է հայոց ճակատագրին: Օրին իր կյանքն ամբողջապես նվիրաբերեց հայոց շղթայված աշխարհն ազատագրելու սրբազան գործին, որի համար նա երեսուն տարի անընդհատ դեգերեց, աշխարհե-աշխարհ ընկած ծեծեց եվրոպական տերությունների դռները, եւ իր երկարամյա որոնումներից հետո գտավ այն դուռը, որից միայն ռեալ կերպով կարելի է հուսալ հայոց ազատությունը: Դա ռուսաց մեծ կայսրության դուռն էր: Սակայն նա դարձյալ նույն ողբերգական ճակատագրի բերումով չկարողացավ իր նպատակին հասնել եւ զոհ դարձավ: Այդ սրբազան գործի մեծ ճանապարհին նա սերունդներին ավանդ թողեց իր մարգարեական խոսքերը: Մահվանից առաջ, Վոլգայի ափին, այն փոքրիկ բարձունքի վրա, որտեղով մեծ ճանապարհ էր անցնում դեպի հյուսիս, դեպի Մոսկվա, նա գրել էր «Մատյանում»։ «Հայն ուրիշ ճանապարհ չունի, նա միայն այստեղով պիտի անցնի իր փրկությունը գտնելու համար: Թող իմ վրայով անցնեն իմ հետքերով գնացողները, թող հասնեն ինձ իրենց բախտը գտած հայերի ոտնաձայները...»:

Երեք հարյուր տարի առաջ ասված այս խոսքերը կարծես թե ուղղված են այսօրվա մեր սերնդին:

Տաղանդավոր արձակագիր Սուրեն Այվազյանը պատմաքաղաքական այդ մեծ հարցը ճիշտ է ըմբռնել եւ լուսաբանել: Վեպը գեղարվեստական շքեղ արձան է հայոց ճակատագրի ուղին ճիշտ գտած, պատմական մեծ գործիչ Իսրայել Օրու հիշատակին:

Այստեղ կարելի էր խոսել նաեւ այն մասին, թե վեպի հեղինակն ինչպիսի լիրիկական ջերմությամբ ու հմտությամբ է խոսել հայոց բնաշխարհի՝ նրա լեռների ու ձորերի, նրա գետերի եւ աղբյուրների, ժողովրդի հոգեկան կորովի, նրա աշխատասիրության, նրա սովորությունների ու հավատալիքների, նրա պատմական ավանդությունների ու ստեղծագործական ուժերի մասին:

Յեղիմակի գրչի ուժը նաեւ այն է, որ նա կարողացել է թափանցել պատմական էպիկայի հատուկ մարդկանց հոգեբանության մեջ, ստեղծել նրանց մտածելակերպի ռեալ պատրանքը, նրանց աշխարհըմբռնումները: Վեպը մի ընդարձակ պատկերասրահ է, պես-պես մարդկանց կենդանի պատկերներով, թագավորներով, շահերով, խաներով, իշխաններով, մելիքներով, հայ գյուղացիներով, ղզլբաշներով, ապստամբներով, Արեւելքի ու Արեւմուտքի այլազան կերպարներով, զանազանակերպ կյանքի իրենց կյուրիտով:

Երեսան, 1967

«Առաջնություն» վեպի լուսավորողական հեռագրեր

Սուրեն Այվազյանի Նոր պարմավեպը



Վարդան Պարսամյան

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

«Առավոտ լուստ» վեպն օրգանական շարունակությունն է «Ճակատագիրը հայր» պատմավեպի: Հեղինակի երկու վեպերի նյութը հայ ժողովրդի հերոսական պայքարն է ազատության ու անկախության համար: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ վեպում հեղինակը նպատակ է դրել վեր հանել մեր ժողովրդի մաքառումները՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու և իր պետականությունը վերականգնելու ճանապարհին:

Սուրեն Այվազյանի վեպում կարմիր թելի պես անցնում է ժողովուրդների բարեկամության գաղափարն ընդհանրապես և հայ-ռուսականը՝ մասնավորապես:

Արարատի գագաթը բարձրացող Պարրոտի արշավախումբն Արմավրի ուղեկցությամբ լինում է Արմավր գյուղում: Հյուրասիրության ժամանակ գյուղացի Արիստակեսն ասում է. «Քարեկամությունը արտի թեթևություն է, բարեկամությունը ուժ է, բարեկամությունը կամուրջ է»: Մի ուրիշ տեղ ասում է. «Աշխարհում մարդիկ չեն ստեղծվել հազար ձեռքով իրարից անջատ լինելու համար, այլ հազար կապերով կապված լինելու: Այդ անջատումներն ստեղծել են մարդկանց ջգերը մարդկանց շատերի համար, որ հեշտ լինի կեղծումը»: Հայր Կարապետի տեմբանքն է, որ «Աշխարհում եղբայրություն լինի ժողովուրդների մեջ»:

Եփրեմ կաթողիկոսն Արմավրին հարցնում է՝ երբ Արարատի գագաթին խաչ կանգնեցրիր, աստծուն ի՞նչ ասացիր: Արմավրը պատասխանում է. «Կանգնեցրի այնպես, որ մի թելով դեպի արեւելք լինի, մյուսով՝ արեւմուտք ու ասացի. «Ով բարձրյալ, մեզ մի կիսիր, արա այնպես, որ մեր արեւմուտքը եւ արեւելք ունենա... ապա ասացի՝ փառք քեզ տեր, եւ քո զորությանը, որ մեզ եղբայրական դաշինքով կապեցիր Ռուսաստանին»:

Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայ գաղթականները, խարույկների շուրջը հավաքված, խոսում են իրենց առօրյա հարցերի մասին: Մեկը հարցնում է. «Ռուսները որ եկել են՝ մեր հողերն են նրանց բերել, թե՞ մեր տառապանքները»: Մի ուրիշը պատասխանում է. «Ամեն ժողովուրդ, ինչպես եւ ռուսները, երկու տեսակ են. մի տեսակը ինքը ժողովուրդն է, մյուսը՝ իշխողները: Մեծ է ռուս ժողովուրդը, բարյացակամ... Մենք մենակ ապրել չենք կարող, դրա համար էլ մենք միշտ ռուսներին լծակից պիտի լինենք»:

Դրապատից վերադառնալուց հետո Արմավրը լինում է հարազատների մոտ. Քանաքեռ գյուղի եկեղեցուն քարոզ է կարդում, որտեղ ասում է. «Մենք մեծ Ռուսաստանի հետ մեծ Հայաստանից պոկեցինք մի կտոր եւ դարձրինք մեր ժողովուրդի փրկության տապանը: Հավատարիմ եւ երախտագրեցիք մեզ, որ օգնեց մեզ ազատվել լծի տակ շնչահեղձ լինելուց եւ ի մի գալ...»

Հավատարիմ լինեց ռուս ժողովրդին, որի հետ մենք լծակից լինելով, շատ տվյալներ պիտի կրենք, բայց եւ չպիտի կորչենք, այլ պիտի հասնենք լուսավոր ափեր... փառք եւ պատիվ այն ժողովրդին, որ իր բախտը փնտրում է ոչ թե ուրիշ ժողովուրդներին իշխելու մեջ, այլ նրանց հետ եղբայրականության»:

Հայրենասիրություն, ազատասիրություն, մարդասիրություն. հատկանշական է, որ համամարդկային այս գաղափարների կրողներն ու արտահայտողները ժամանակի առաջավոր մտածողներն են, ժողովրդի ծոցից ելած եւ ժողովրդի գործին նվիրված մարդիկ:

«Հայրենիքն այդպիսի բան է, Կիրայ, - ասում է Արմավրը, - ուր էլ գնում ես, նրա ճանապարհներով ես գնում, ինչ էլ տեսնում ես, նրա աչքերով ես տեսնում, ինչ մասին խոսում ես՝ նրա լեզվով ես խոսում, նրա մասին ես խոսում: Հին մեներ մի կտոր փրկված հայրենիք ունենք, եւ մարդ ուզում է քայլել նրա բոլոր ճանապարհներով, սարերով, ձորերով եւ նրա ազատությունն զգալ անգամ քարերի, հողի, բույսի մեջ: Զգալ եւ մի անգամ շնչել ազատ հայրենիք ունեցող մարդու խոր շնչով»:

Վեպի առաջին երկու գլուխներում խոսվում է 19-րդ դարի պատմական իրադարձությունների՝ 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի, 1827թ. Օշականի ճակատամարտի, Երեւանի գրավման, 1828թ. Թուրքմենչայի պայմանագրի մասին: Ապա գործողությունը տեղափոխվում է 18-րդ դար:

Վեպի առաջին մասերում եւս, որտեղ խոսվում է Նազուկի հետ կապված Արմավրի սիրային արկածների, Գրիբոեդովի սպանության ու թաղման, Պարրոտի արշավախմբի հետ Արմավրի Արարատ լեռան գագաթ բարձրանալու, նրա դորպատյան տարիների, Նոյյան տապանի, կաթողիկոսական ընտրությունների մասին, կտրուկ շրջադարձ է կատարվում, եւ գործողությունը կրկին փոխադրվում է 18-րդ դարի՝ հայ-ռուսական հարաբերություններ, Եկատերինա 2-րդ, Պոտյոմկին, Սուվորով, Լազարյան, Արդուբան, Շահամիրյան, դաշանց թղթեր եւ այլն:

Վեպի վերջին գլուխներն ամբողջությամբ նվիրված են Խ.Արմավրյանին, նրա կյանքի ու գործունեության ամենաբեղմնավոր ու միաժամանակ փշոտ ու տատանվող տարիների պատմությանը: Վեպն ավարտվում է Խ.Արմավրյանի Միքիլի քարտիկով վարկածով:

Մենք հեռու ենք այն մտքից, թե պատմական վեպը երբեք կարող է կամ պետք է պատմական ուսումնասիրություն լինել: Պատմությունը գիտություն է, պատմավեպը՝ գեղարվեստական ստեղծագործություն: Դրանց բնույթն ու բովանդակությունը տարբեր են եւ երբեք մեկը մյուսին փոխարինել չեն կարող:

Բայց մենք միաժամանակ այն խոր համոզման ենք, որ պատմական վեպի ատաղձը, նրա հենքը պետք է լինի պատմությունը: Պատմությունից դուրս պատմավեպ լինել չի կարող: Պատմավեպը դադարում է լիարժեք գեղարվեստական երկ լինելուց, եթե նա հակասում է պատմական ճշմարտությանը:

Այս տեսակետից վեպի տասներորդ գլուխը, որը նվիրված է 18-րդ դարի երկրորդ կեսին 19-րդ դարի առաջին կեսի հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը, մտորումների տեղիք է տալիս:

Հայտնի է, որ անվանի պատմաբան

Լեոն 18-րդ դարի հայ-ռուսական պայմանագրերի երկու նախագծերից մեկը համարել է ռուսական կողմի, ցարական կառավարության նախագիծ, իսկ մյուսը՝ հայկական: Մինչդեռ 1920-ական թվականների ճանաչված գիտնական Թ.Ավդալբեկյանը ապացուցել է, որ ցարական արքունիքին վերագրվող պայմանագրի նախագիծը հնդկահայ գործիչների (Շ.Շահամիրյան, Մ.Բաղդամյան եւ ուրիշներ) կազմած դեմոկրատական, սահմանադրական պահանջները պարունակող նախագիծ է:

Ս.Այվազյանը նախապատվություն տալիս է Լեոնի տեսակետին եւ վիպական նկարագրության մեջ այն միտքն է զարգացնում, թե Եկատերինա 2-րդ թագուհու պալատում ռուսական եւ հայկական պայմանագրերը քննարկվել են, երկու կողմերի հավանությամբ ընդունվել, որ Պետերբուրգի հայկական եկեղեցուն Եկատերինա 2-րդի եւ նրա պալատականների ներկայությամբ Հ.Արդուբանյան օրհնել է այդ պայմանագիրը, թագուհուն արելապատիվներով մարդիկ՝ հայկական թագավորությունը վերականգնելու համար:

Վեպի հետագա մասերում բազմիցս կրկնվում է այն միտքը, թե ցարական կառավարությունը պայմանագրով խոստացավ Հայաստանին թագավորություն տալ, բայց չտվեց, դրժեց իր խոստումը: Պատմական ճշմարտությունը, սակայն, այն է, որ ոչ մի պայմանագիր չի կնքվել հայերի եւ ռուսական արքունիքի միջեւ: Մեզ հասած այդ նախագծերից մեկը Հ.Արդուբանյանի, իսկ մյուսը Շ.Շահամիրյանի կազմած է, որոնք մնացել են թղթի վրա:

Հայաստանի ինքնավարությանը վերաբերող նոր նախագիծը կարելու մի դրվագ է մեր պատմության մեջ: Ինչպես հայտնի է, այդ նախագիծը 1827 թվականին կազմել էին Ռուսաստանում գործող մի խումբ հայ հայրենասերներ (Խ.Լազարյան, Կ.Արդուբանյան, Ա.Նուրբաբաշյան): Վեպի հեղինակը գեղարվեստական ազատ երեւակայությամբ 1827 թվականին տեղի ունեցած գործողությունները փոխադրել է 1836 թվական, որպեսզի կարողանա Դորպատից Պետերբուրգ վերադարձած Խ.Արմավրյանին մասնակից դարձնել այդ խմբի նիստերին, նա եւս հանդես գալով Հայաստանի ինքնավարության պահանջով, այսպես կոչված՝ «Հայոց միության» անդամների հետ լինի Նիկոլայ 1-ինի պալատում, ըմբոստելույթ ունենա, «Հայոց կործանված պետության վերականգնման» հարց հարուցի, թագավորին ներկայացնի եւ հարկադրի ասելու՝ «Գնացեք եւ իմ անունից հայտնեցեք ձեր իշխաններին եւ ժողովրդին, որ եւս ինքնավարություն կլինի, եւ ինքնուրույն գործ կունենան, եւ մեզ հետ կապեք կողք կողքի, որպես դաշնակից պետություն»:

Ստացվում է, որ Նիկոլայ 1-ինը, որը Հայաստանի միացումից առաջ՝ 1827թ., մերժել էր հայ հայրենասերների նախագիծը, իսկ միացումից հետո՝ 1828թ. մարտի 21-ին, ստորագրել Հայկական մարզ ստեղծելու հրամանը, 1836 թվականին, Արմավրյանի ելույթի ազդեցության տակ, փոխում է իր քաղաքականությունը Հայաստանին ինքնավարություն տալու եւ «դաշնակից պետություն» դարձնելու վերաբերյալ:

Ուշագրավ է նաեւ, որ վեպում Արդուբանյանը, դիմելով թագավորին, ասում է. «Թե՛ Պոտր Մեծը, թե՛ նրա արժանավոր հետնորդ՝ հոգնամեծար Եկատերինա թագուհին մեր ինքնուրույն պետականություն ունենալու մեջ են գտել մեր փրկությունը: Դրա առավելագույնը է այն պայմանագիրը, որ կնքվել է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ»:

Պատմությունից հայտնի է, որ Հայաստանի ինքնավարության հարցը բարձրացվել է 1827 թվականին, մինչեւ Երեւանի գրավումը, որից հետո ոչ 1836 թվականին եւ ոչ էլ դրանից հետո նման հարց չի բարձրացվել: 1828թ. կազմված Հայկական մարզը մտնում է Նիկոլայ 1-ինի թագավորական տիրույթի մեջ, ուստի 1836թ. խոսք անգամ չէր կարող լինել Հայաստանի անկախության մասին:

Ամտարակույս, գրողը չպետք է կաշկանդված լինի, առանձին դեպքերում նա կարող է շեղումներ թույլ տալ, գույները

խտացնել, իր երեւակայությունը, սեփական մոտեցումն ու մեկնաբանություններն ունենալ եւ այլն: Սակայն պետք է նաեւ հաշվի նստել պատմության ու պատմագիտության հետ:

Ընդհանուր առմամբ վեպում ճիշտ է տրված եւ բարձր գնահատված հայ-ռուսական բարեկամության եւ Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միացման պատմական նշանակությունը: Դա վեպի աչքի ընկնող արժանիքներից մեկն է:

Մեծ գրողի, դեմոկրատի, հայրենասերի, լուսավորիչ գործչի մոտմտնետալ կերպարը ստեղծելը, անշուշտ, դժվարին գործ է: Կնճռոտ խնդիր է մանավանդ խաչատուր Արմավրյանի եւ Ներսես Աշտարակեցու հարաբերությունը, որը տարբեր ժամանակահատվածներում տարբեր բնույթ է ունեցել:

1846 թվականին նորընտիր կաթողիկոս Ներսես Աշտարակեցին ուշացած գալիս է Եջմիածին: Երեւանի գավառական դպրոցների տեսուչ Խ.Արմավրյանը ողջունում է նրա գալուստը եւ ասում. «Սրբազնասուրբ Եպիսկոպոսապետ, ծայրագույն պատրիարք, այսօր հայ ժողովրդի համար տոն է՝ տեսնելով ազատագրական պայքարի իր հերոսին, իր հոգեւոր առաջնորդին ապաքինված եւ արդեն վերադարձած Մայր Աթոռ: Կեղեքվող ժողովուրդը նորին վեհապետության մեջ է տեսնում իր վիճակի թեթեւացումը, իր հույսերի արդարացումը, իր մութ կյանքի լուսավորումը, իր եւ իր երկրի միավորումը: Փառք սրբությանը»:

Վեպի այս գլխում Արմավրյանը մտերմական գրույց է ունենում կաթողիկոսի հետ, նրան հայտնում ժողովրդի ծանր վիճակի, մասսայական բանտարկությունների, կամայականությունների մասին: «Տեսնես որտեղ են տեղավորում այդքան բռնավորներին, - ասում է Արմավրյանը: - Դատարկեցին Կոտայքը, Նոր Բայազետը, Վերին Արտաշատը, Սյունիքում՝ Տեղը, այն բանի համար, որ համարձակվել են ասել՝ հարկերը մեր ուժից վեր են, որ անսահման են կալվածատերերի իրավունքները: Մի՞թե անսահման է Սիբիրը: - Անսահման է, - հառաչեց Ներսեսը»:

Արմավրյանը հարցնում է. «Ձերը վեհափառություն, մի՞թե չեք բողոքում, թե ինչ կամայականություններ են»...

Ներսեսը պատասխանում է. «Բողոքել են... ճշել, որ այդ լուռ գայրույթը կարող է բռնկվել եւ դառնալ համազգային ապստամբություն»:

Մենք միշտ քննադատել ենք ու կքննադատենք ցարիզմի գաղութային քաղաքականությունը: Հեղինակը սկզբունքորեն ճիշտ է մտնում, դրա դեմ ոչ ոք չի կարող առարկել, բայց վեպի կրկնվող դրվագների լուսաբանումը միշտ չէ, որ հիմնավորվում է կրկնվող պատմական փաստերով:

Վեպի վերջին մասում Խ.Արմավրյանի դժգոհությունը եւ բողոքը տիրող կարգերի դեմ հասնում են իրենց գագաթնակետին: Նա նամակ է գրում կաթողիկոսին, որը, վիպասանի խոսքերով՝ «պետք է ինչ-որ չափով եւ թագավորություն աներ այս անտեր ժողովրդի վրա»: Նամակում ասված է. «Այս ինչ եղավ, վեհափառ, փրկվելով թուրք ու պարսիկ դահիճներից, հույս ունեինք, թե քրիստոնյա թագավոր մեզ ինքնուրույնություն կտա, եւ սակայն մեզ դեմ արեց իր երեք մատների դասավորությունը: Հիմա մեր ժողովուրդը ամենամոռոտ կերպով կեղեքվում է մեր եւ նրա հարստահարիչների կողմից: Ոչ թե դժվար տանելի, այլ անտանելի բեռ է դրված հայ ժողովրդի վրա եւ տնքալ անգամ տրտնջալ է համարվում թագավորի դեմ, եւ դրա համար ամենուր ծեծ է, սպանություն, բռնություն, աքսոր»:

Հաջորդող դրվագն Արմավրյանի գաղտնի բանտարկությունն է: Նրան ծածկակառք են նստեցնում եւ անհետ կորցնում: «Առավոտ լուստ» պատմավեպն ուշագրավ գործ է, որի հեղինակը խաչատուր Արմավրյանի մոտմտնետալ կերպարը վիպականացնելու փորձ է կատարել: Չեմք կասկածում, որ տաղանդավոր վիպասանն առիթ կունենա հետագա վերամշակման ենթարկելու իր արժեքավոր պատմական:

Երեւան, 1977թ.



Աղետնակ Գրիգորյան

Կրակվեցիր մարմանդ, փստապեցիր,
Ողջակիզվեցիր ցոլուն կերտնի պես,
Այլոց վշտին դարձար՝ հույս, ավերիս,
Ինքդ վշտերի մեջ ու աղեկեզ:
Անողորմ էր դարձր՝ գծում ու բիրտ,
Թշնամին էր բարուն ու անհարին,
Նույնքան կծծի ու սին, թինոր ու լիր՝
Որոգայթ էր զոհի ու քանքարի:
Անկորորում էր կամքդ ու աներեր,
Ուշքդ քո Արցախի լուսն հեռուն...
Ճամփադ ողեմնոր՝ վերելքդ վեհ,
Օրդանդ խաչված ու անրերունց:

Ինքնայրումով փրվիր դու պայքարի,
Ընթրչինեցիր կյանքիդ մրուրը լե,
Արմավրներով կատաճ լեռնապարիդ,
Նորիտրացիդ ինչպես լուսն կանթեդ:
Դեն ներեցիր դափնին ու ծիրանին,
Փառքի պատկերը՝ վառարակը քո,
Նայրենիքիդ համար մեր անառիկ՝
Ընդվզեցիր դարիդ դեմ անողորմ:
Նգովեցիր դարձր՝ կեղծ ու նանիդ,
Խարկանքներով լեզուն ու խարդավող,
Դարձար սրբագիրը սուրբ խորանիդ,
Առած գողթան երգչի եղեգան փող...

Անխոնջ շեփորեցիր հայ քաջորդո
Ոգու երգը ընթրար՝ մարտի հորդոր,
Որը հեղեղի պես դարձավ հորդուն,
Մերթ ծործորաց ինչպես հոգու մորմոթ,
Ու արույրվեց երգը ընթրար ոգու՝
Մերթ ավերիս հույսի՝ կյանքի խորհուրդ,
Մերթ ցավաբան, փխտր ու մտորուն,
Մերթ ընդվզում որպես՝ հոգու խոռվթ:
Ու ելեւեջերով ձգվեց հեռուն՝
Նասավ Քիրսին խրոխտ, անցավ Մոով,
Փարվեց Անարասի սուրբ փանարին,
Յողեց դաշտերը ողջ՝ ինչպես մեռուն:

Խաչվեց իսաքարերին փստապեցիր
Ու ավանդեց հոգին իր հոգնաբան, ջրվեց
աճյուններին մեր մորմոթի,
Նավաբանքով լեզուն ու սրբացած:
Այժմ սավառնում է քո բորբ հոգին:
Սյունյաց կարարներին իմ լեռնանիստ,
Երգիչ մաքառումի ու կարտրի՝
Որպես մրմունջ ցավի պարարագող
Ու հար ելեւեջող հոգեհանգիստ:



Արկաղի Օասորյան

Ուրիչ են մեր քերծերը,
Ուրիչ են դաշտերն արլաս,
Ուրիչ են մեր սարերը՝
Չյունեղեն, անհաս:

Տողը՝ մանկություն-մուրագ,
Երկինքը՝ կարտր մի հին,
Ջրերը՝ զուլայ ու պարզ,
Այնպես՝ հեթիաթային:

Քարերը՝ հովվական բարձ,
Չորերը՝ խառ անկողին,
Ծաղկունքը՝ երազավարս
Կարձ ժայռակողին:

Մարդիկ՝ իմաստուն ու խոր,
Ժայռի պես թիկնած հողին,
Ինչպես քո դարավոր
«Փրթոսի ընկուզենին»:

Եվ դու փարված սիրով
Մարդկանց, ջրին, հողին,
Մի օր գրող դարձար
Գրչով արարողի:

Սիրտդ շռայլորեն
Փռեցիր մարդկանց առաջ,
Երգեցիր պայծառ օրեր
Եվ անցյալի հասոջ:

Գնացիր դարերն անցած,
Տեսար ավեր ու խոց
Եվ արմատից վերընձաղված
Ճակարագիրն հայոց:

Ուր գնացիր՝ քեզ հեղ,
Չանգեզուրը փարար,
Նայրենի սկունք ու գեղ,
Որտարանը վարար:

Մեր քերծերը փարար,
Որ կարծրանաս,
Մեր սարերը փարար,
Որ բարձրանաս:

Մեր ձորերը փարար,
Որ խորանաս,
Մեր քարերը փարար,
Որ՝ դիմանաս:

Դրս համար հայրնի
Բունեբանգի պես,
Նայրուր փարի հեղու
Դու էլի մեզ հեղ ես:



Քաջիկ Դրունց (Սիֆայեյան)

Կգաս Ասուր, կգաս
Չյունեղի փակ թողած
Գարունների համար,
Կգաս իզուր անցած.
Անդարձ երազ դարձած
Անտունների համար,
Կգաս բարի, անքեն
Ժպիտների առած՝
Մթնածոր փանող
Աշունների համար,
Կգաս ձմեռների
Արեւներով հուշի
Եվ քեզ, եւ ուրիշին
Տաքացներու համար:
Կգաս, Ասուր, կգաս
Անսեր, անսիրտ մարդկանց
Խաթարումով անմիր՝
Չերգած երգիչ համար

Կգաս մի պուր սիրտ
Գիշերների լույսի
Անսուր երանության
Վերածնուն համար:
Կգաս հողոր, շողոր
Լույսերի հեղ շաղված
Մորդ քնքանքների
Առասպելի համար
Կգաս կրկին գերված՝
Բարձրիկ քո սարերին,
Անքուն քո հավքերին,
Ծառին, թփին, քարին,
Վերածնուն համար:
Կգաս, Ասուր, կգաս,
Կգաս եւ ինձ համար,
Անծիր փխրությունս
Փարարելու համար:
Միայն ի սեր Ասործ,
Միայն երազներում
Ասուր, փխտր չգաս:

Ինչ ունեիր-չունեիր քանուն փրկեցիր,
Թե ինչ եղավ եւ ինչո՞ւ՝ ինքդ էլ չիմացար,
Մի կարճ լույսին ի խնդիր՝ արյուն փրկեցիր
Բարիդ չարիք դարձիր, խնդությունդ՝ ցավ:

Յուրք էր աշխարհն ու քաղցած, աչքդ
բացեցիր,
Անրերությունը՝ Ասորված, եւ Ասորված անրեր,
Մորդ փխտր աչքերում օրդ լացեցիր,
Միրտ սափորն էր եղծված եւ գուրն՝ առասպել:

Բարին անգո մի թոջուն՝ անկեղծ քո հոգում
Բարձրիկ իր բույնն էր հյուսել՝ մարդիկ
չիմացան,
Անքուն, անտուն մի ինչու կյանքդ մորմոթում,
Լույսի փանարդ անուն մարտու-քարանձավ:

Ինչո՞ւ է փառք գորեղ եւ բանն անկարող,
Ապաշնորհը՝ ճարպիկ, կոչեցյալը՝ անրեր,
Ինչո՞ւ է մարդն արարել այսքան քեն ու ոխ,
Արդար վարքի ու փառքի շնորհն իր բանարե:

Եվ ինչունեիր, ինչունեիր սիրտդ այրեցին,
Ինչպես եղավ եւ ինչո՞ւ, ինքդ էլ չիմացար.
Մի կրճ լույսին ի խնդիր՝ արյուն փրկեցիր,
Բարիդ չարիք դարձիր, խնդությունդ՝ ցավ:

Ծառերը շվաք են անուն,
Նուշերը՝ այրում,
Նայազքը երկնքում է,
Դու՝ մութ քարայրում:
Ծառերը բար են փայլա,
Բառերիդ համը չունեն,
Օրեր են, անցնում են, գնում,
Էն քաղցրիկ ժամը չունեն:
Երբ բանը վերհուշիդ արեւով
Լցվում էր, լցվում, քաղցրանում,
Չորերդ աղբյուրի հանգով
Չնգում, զրնգում, թանձրանում,
Լուսնկան կախվում էր գյուղիդ
Լույս ու մութ երազի վրա
Եվ հեռվում մեկը երգում էր.
Տխրություն, թե՛ այրող կրակ:
Նազիրան կնոջ պես մի քար
Եվ այր մի՞ թիկնեղ մի քերծ,
Նորիզունն առել փիրաբար,
Բացել են գրույց ու վեճ:
Լույսյան մի լարի վրա
Ծղրիղները՝ քարերը մեղմում,
Փակում են կոպերը ձորերիդ
Եվ անտուն երազներ գեղում:
Եվ մայրդ կանչում է՝ Ասուր,
Տիրամոր նման է կանչում,
Ղողանջում են սեզ ու մասուր,
Մոր սերն է քնքուշ դողանջում,
Բառերը հնար չունեն,
Երազներն անցնում են, գնում,
Ծառերի կանաչ անարին
Կարտրի լազուրն է մնում:

ԳՆԱԿՏՈՒՄ ԵՒ ԽՈՒՉԱԳՐՈՒՄ

Սուրեն Այվազյանը 100 տարեկան է



Էշոու Ղավթյան

Բանասիրական գիտությունների դոկտոր

Դժբախտաբար, մեզանում կարծրացել է մի տխուր սովորույթ, երբ ազգի մեծերի հոբելյանները կա՛մ չեն նշվում (նույնիսկ հիշվում), կա՛մ էլ նշվում են հենց այնպես, ուղղակի մի բան անելու համար: 2015թ. հունվարի 9-ը եկավ ու անցավ, իսկ այդ օրը լրացավ մեծադրանդ արձակագիր Սուրեն Այվազյանի ծննդյան 100-ամյակը: Եվ հիմա, երբ գրում եմ այս տողերը, դժվարության առաջ եմ կանգնում՝ չհիմնադրել, թե ինչպես պիտի կարողանամ ինչ-որ չափով գնահատել անցյալ դարի հայ արձակի դիմագիծը կերպող գրողներից մեկին, անթերի հրապարակախոսին ու գրական գործչին, մրաժողին, հմայիչ մարդուն, իր ծննդավայրին նվիրված հայրենասերին, ազնվագույն անհավասարությանը, կյանքում եւ գրական անդաստանում աննկուն մաքառողին, ճշմարտության ջարագովին:

Անշուշտ, Ակսել Բակունցի նման հզոր արձակագրից հետո գրիչ վերցնելու համար պետք էր ոչ միայն համարձակություն, այլ նաեւ մեծ տաղանդ ունենալ: Առավել էս, որ Բակունցի ժամանակի ու միջավայրի, նրա կերպարների հոգեբանական ընդգրկումների կնիքը չէր կարող չազդել հետագա ստեղծագործողների վրա: Սակայն Սուրեն Այվազյանը իր մեծ նախորդի ոտնահետքերով չզնայ: Նա կրեց միայն բակունցյան միջավայրի ազդեցությունը, իսկ գրելու ոճի, ստեղծագործական գործընթացի, թեմատիկայի եւ բազմաթիվ առումներով Սուրեն Այվազյանը մնաց ինքնատիպ, ինքնուրույն, ամեն ինչում ինքնայրուժով ապրող գրող: Նրա կերպարները Սյունիքի պատմության քառուղիներով անցած մարդկանց սերունդների ծնունդն են, կրել են բազում գրկանքներ եւ մնացել անհողողող՝ մշտապես լավատեսական հեռանկարով: Իհարկե, սոցիալիստական գյուղի նկարագրություններում գրողը պիտի կաշկանդվեր՝ չկարողանալով տեղավորվել հանրահայտ կերպարներում, որովհետեւ այլ էր իրականությունը, այլ էին նրա մասին ներբողները: Մի առիթով, երբ հայ գրողներին քննադատել էին, որ խորհրդային գյուղացու կերպարն ամբողջականությամբ մեջ չի ներկայացվում, Սուրեն Այվազյանը կրակն իր վրա վերցնելով՝ ասել էր հետեւյալը. «Մի գարնան, երբ ծիլերը հողի միջից նոր էին դուրս եկել, ուղղակի օդ շնչելու համար, իջա հնձորեսկի խորխորատներից մեկը, քայլելիս նկատեցի, որ լեռնալանջերին՝ ձնծաղիկների կողքին, ավտոդղերի հետքեր կան: Նայում եմ՝ ավտոմեքենաները չեն կարող այդ լանջերով անցնել. ճանապարհ չկա, քար ու քերթ է շուրջը: Հեռվում նկատելով ոչխարների հոտերը եւ հովիվներին՝ որոշեցի մոտենալ ու պարզել առեղծվածը. ինչպես են ավտոմեքենաները հայտնվել այստեղ: Մոտեցա եւ ի՛նչ տեսնեմ, հովիվների ոտքերին ավտոդղերից կարված տրեխներ են:

Հիմա այդ խորհրդային գյուղացիների կերպարն ինչպե՛ս էր ուզում նկարագրեն», – ավարտում է խոսքը տաղանդավոր գրողը: Այս ելույթի առթիվ Կենտրոնի առաջին քարտուղարի մոտ են կանգնում հեղինակը, ինչպես նաեւ Սերո Խանգադյանը, Գարեգին Սեւունցը եւ Համո Սահյանը, այսինքն՝ գրողների միության Սյունիքի թեւը: Սուրեն Թովմասյանը կուտակված զայրույթը թափում է Այվազյանի գլխին, պահանջում, որ «ընդունի իր թույլ տված սխալը»: Այս միջադեպը չի կաշկանդում շնորհաշատ գրողին: Հետագա տարիներին նա անընդհատ կրկնում էր, որ Կենտրոնի առաջին քարտուղարն ինքն էր պետք է անհանգստանա իր հանրապետությունում ապրող յուրաքանչյուր մարդու, այդ թվում եւ հովիվների ապրելակերպով: Ախր ինքը շատ էր սիրում իր ժողովրդին եւ, առաջին հերթին, հասարակ մարդկանց: Տպագրված ունենալով 11 գիրք՝ Սուրեն Այվազյանը 1966թ. ընթերցողի դասին ներկայացրեց «Ճակատագիրն հայոց» պատմավեպը, որը մեծ արձագանք գտավ ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ խորհրդային հանրապետություններում

ԱՆՅԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՄ ԵՎ ԱՅՐՈՒՄՈՎ

Երբ վերջապես բացահայտվեցին անհատի պաշտամունքի զագրելի տարիների մարդակերության փաստերը, կային մարդիկ, ովքեր դեռ ստալինյան ժամանակների թմբիրից չէին սթափվել եւ նույնիսկ համաձայն չէին հանել իրենց չնչին աշխատավարձի հաշվին կառուցված հուշարձանները: Սուրեն Այվազյանի՝ գրողների միությունում ունեցած սարկաստիկ ելույթը եւ սպանիչ էր, եւ թեւավոր. «Ես առաջարկում եմ բոլոր արձանները ձուլել եւ մետաղին տալ իր նախկին, ազնիվ տեսքը»: Այդպիսին էր Սուրեն Այվազյանը՝ այդ բյուրեղյա հոգին, այդ մշտապես ապստամբող անհատականությունը, այդ հավիտենապես այրվող կրակարանը: Եվ հենց այդպիսի բյուրեղացմամբ, անհատականությամբ ու այրումով էր կառուցում իր վիպական շինությունները Սուրեն Այվազյանը: Գրողի հետ շփումները երբեմն տպավորություն էին ստեղծում, թե նրա ըմբոստությունը

կյանքի երեւոյթների եւ մարդկային հոգեվիճակների բարդ արժարձումների հետ: Հետագա տարիներին լույս տեսան «Առավոտ լուստ» (1976) եւ «Խնձորեսկ» (1982) վեպերը, որոնք բարձրարժեք ստեղծագործություններ էին: Սակայն նրա կարապի երգը մի սրտակեղեք վիպակ դարձավ՝ «Ասուր, հե՛յ, Ասուր» վերնագրով: Թվում է, թե այն ինքնակենսագրական ակնարկ է ոտաբորիկ մանկության, կիսաքաղց պատանեկության մասին, սակայն, ըստ էության, ձոներգ է խորհրդային տարիների հայ գեղջկուհու, իր որբուկներին տիրություն անելու համար անձնագործության գնացող մոր մասին: ...Գրողի մոր հուղարկավորությունից հետո հավաքվել էինք Գորիսում՝ նրան հատկացված մի բնակարանում: Անընդհատ արտասվում էր, արցունքներն այտերով գլորվում էին, եւ, թրջված աչքերը հատակին հառած, պատմում էր մոր մասին: Նա խոսում էր, կարծես բեմում լիներ, իսկ մենք լուռ լսում էինք ու չէինք նկատում, թե ինչպես են անցնում ժամերը: Պատմում էր, որ մի անգամ երեխաներին սովից փրկելու համար մայրը շրջել էր հնձած արտերի խոզաններով եւ մի տուպրակ հասկ հավաքել: Դաշտապահը կտրել էր նրա ճանապարհը եւ մեղադրել, թե չհնձած արտերից էր քաղել հասկերը: Մայրն աղաղակել էր, հետո թախամեծելով խնդրել, որ տուպրակը վերադարձնի, քանի որ, իրոք, հասկերը գետնից էր հավաքել: Ողբալով հետ էր առել տուպրակը, արցունքներն աչքերին, կանացի ափերով «կպսել» էր ցորենը, հետո տարել ջրաղաց, մի քանի բուռ այլուր բերել տուն, հաց թխել: Պատմում էր ու լաց լինում գրողը, հի-

զգում էս, թե ինչքան խորքեր ու ծալքեր կան այդ փոքրիկ վիպակում: Չեն կարող նաեւ երախտագիտությամբ չխոսել Սուրենի տիկնոջ՝ Հռիփսիլի մասին, ում ջանքերով լույս տեսավ այդ վիպակը՝ գրողի մահվանից չորս տարի հետո, ինչպես նաեւ «Խնձորեսկ» վեպը: Հռիփսիլը նաեւ մեծ աշխատանք կատարեց՝ հավերժացնելու ամուսնու հիշատակը: Ափսոս, որ ինքն էլ շուտ հեռացավ կյանքից՝ որպես մխիթարություն ունենալով Ավիկին՝ ոչ պակաս տաղանդավոր արձակագիրին: Հի կարելի չընդգծել նաեւ մի հետաքրքիր հանգամանք: Սուրեն Այվազյանը մի տեսակ չէր ընդունում շրջապատ ասածը՝ լինել գրական շրջանակներում, թե ընդհանրապես: Նա մեծակրթություն ավելի էր գերադասում: Թերեւս այդ էր պատճառը, որ Գորիսում մի բնակարան էր վերցրել, Խնձորեսկում էլ կառուցել մի առանձնատուն, այն էլ՝ գյուղի ծայրին, եւ հիսուն տարեկանից հետո հիմնականում այնտեղ էր ապրում: Նրան այցելելիս ինձ զարմացնում էր նրա ասկետական դրությունը, ամեն ինչում զուսպ, եւ ինձ մխիթարում էի մի տեղ կարողացած հետեւյալ տողերով. «Տաղանդավոր մարդիկ, որպես կանոն, միայնակներ են, իրենք իրենց մեջ ամփոփված եւ սովորաբար այնտեղ ոչ ոքի չեն թողնում թափանցել՝ պահպանելով իրենց տաղանդի ամբողջությունը եւ աշխարհընկալման իրենց կուսակառույցները»: Այդ իմաստով նա նմանության աղբյուրներ ուներ Համո Սահյանի հետ: Հի-չենք բանաստեղծի մեծակրթության մասին քննարկանք մեկնությունները, մեծակրթությունը մեծակրթություն փիլիսոփայական եզրահանգումը: Այդ ամենը Սուրեն Այվազյանի տանում էր նրան, որ նա ինչ-որ չափով ընկերություն էր անում Համո Սահյանի եւ Գարեգին Սեւունցի հետ: ... 1972թ., երբ լույս էր տեսել Համո Սահյանի «Սեզամ, բացվիր» ժողովածուն, շատերի ուշադրությունը գրավեց մի բանաստեղծություն, որը կարող էր դառնալ բանաստեղծի, արձակագրի, արվեստագետի, ինչու չէ, նաեւ ինտելեկտուալ կարողություններ ունեցող ամեն մի մարդու կարգադրի չափանիշը: *Եվ ի՛նչ է տվել ինձ բնությունը, - Նավիկյանս նորոգ իր հնությունը, Իր ջրվճարների ակթությունը Եվ հոգնահողով իր կրկնությունը... Իր քարափների համբերությունը, Իր խղճի առաջ իր գերությունը, Իր անդունդների փարոսությունը, Մեհիական վերքերն ապաքինելու Կարողությունը... Իր սեւահողի խոնավությունը, Մասրենու փշուր խոնարհությունը... Ինքնաբաշխումի ուրախությունը, Ինքնաներժամի խիզախությունը, Ինքնության պարիսկն ու թանկությունը Ինքն իր մեծությունը չսարժենալու Երջանկությունը...* Եթե մարդը կրի այս վարքամատյանի 13 հատկանիշից թեկուզ մեկը, ապա արդեն լիարժեքությամբ կառանձնանա մյուսներից: Սակայն ինքնաբաշխումի ուրախությամբ եւ ինքնաներժամի խիզախությամբ, ինչպես եւ սահյանական վերոհիշյալ սկզբունքներով ապրող արվեստագետը պիտի բախվեր նաեւ կյանքի ոչ բնական երեւոյթների հետ: Սուրեն Այվազյանը մշտապես այդ երեւոյթների ջրաղացքների արանքում էր: Ամուսնացել էր երկու անգամ: Առաջին տիկինը բժշկուհի էր, երկրորդը՝ հրատարակչության աշխատակից: Ծանոթները երկուսին էլ դրական էին գնահատում: Ձավակներ ունեին, ուշադիր էին իրենց ամուսնու նկատմամբ՝ հաշվի առնելով նրա անհանգիստ բնավորությունը: Տաղանդաշատ արձակագիրը թողված է Խնձորեսկում՝ իր առանձնատան այգում: Ամեն անգամ, երբ գնում եմ այնտեղ եւ զգում, որ տարեցտարի նեղանում է դեպի այն տանող արահետը, վերադառնում եմ, Համո Սահյանի խոսքերով ասած, գերեզմանաքարի ծանրությունն ուսերիս վրա:

ՇՈՐՍ ԴԱԹՅԱՆ
Բանասիրական
գիտությունների դոկտոր
«Խորհրդային Հայաստան» №1-165,
21 հուլիսի, 1990թ.

Հայ արձակի նշանավոր վարպետներից մեկը



Արկաղի Ծասուրյան

Հայաստանի գրողների միության
Սյունիքի մասնաճյուղի նախագահ

Սուրեն Այվազյանը Ջանգեզուր աշխարհի արգասաբեր հողի վրա ծնված այն քչերից է, որոնցով ժողովուրդը չափում է իր մեծությունը:

Արձակագիր Այվազյանը վաղուց նվաճել է ընթերցողի սերն ու համակրանքը: Նա ինքնատիպ ու սրտապարար պատկերներով ու հույզերով լի արձակագիր է եւ իր ծանրակշիռ տեղն ունի հայ դասական գրականության մեջ: Այվազյանի շատ գրքեր այսօր էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում իրենց արդիականությամբ, զեղարվեստական բարձր ճաշակով ու վարպետությամբ: Այվազյանը իրենից հետո թողել է գրական մեծ ու արժեքավոր հարստություն, որը, սակայն, մեր գրականության պատմության մեջ դեռեւս իր արժանի գնահատականը չի ստացել: Հրատարակում եղած գնահատականները, որ կան գրողի մասին ասված, դեռեւս նրա մեծության իրական արտահայտությունը չեն:

Իսկ մեր օրերում, երբ խոսք է լինում հայ գրականության մեծերի մասին, համիրավի կամ շրջանցում, կամ ուղղակի չնկատելու են տալիս Այվազյանի նման մեծությունը: Սակայն նույնիսկ այդ չնկատողներն անգամ համոզված են, որ Այվազյանի նման գրողին հնարավոր չէ պահել սովորի տակ, քանի որ այն լույսը, որ զուտ այվազյանական է, միեւնույն է, փայլատակելու է, որտեղ եւ երբ էլ լինի: Համենայնդեպս գրականագետ արիես-

տավարժների չմահավան տրամադրությունները շատ դեպքերում են չեզոքանում ժողովրդական հզոր սիրո հեղեղի մեջ: Այվազյանի ազնիվ ու անկեղծ գրականությունը ժողովուրդ-ամբողջությունը շատ է սիրում: Իսկական գրողի համար այդքան էլ հերիք է:

Եվ եթե անհատները չէ, ապա ժողովուրդ-ամբողջությունն իր հավաքական իմաստությամբ զգում է, որ Այվազյանն այն միջակություններից չէ, որ մոռացվում է ստվերի տակ մնա: Այվազյան սիրող, Այվազյան տեսող, Այվազյան կարդացող զանգվածները համոզված են, որ մեծ գրողի վեպերը, վիպակներն ու պատմվածքները բոլոր առումներով արժանի են բարձր ու նորովի գնահատականի: Նա այսօր եւ հետո պիտի իր պատվավոր տեղն ունենա հայ գրականության վարպետների կողքին: Այդ իրավունքը նա վաղուց է նվաճել բակունցյան շնչով գրված իր անկեղծ, ճշմարիտ, հուզաբաթալ ու արդիական գրականությամբ:

Այվազյանը խելագարվում էր Ջանգեզուրի համար: Ուր էլ լիներ, չէր մոռանում իր երկիրը, իր ժողովրդին: Նա հաճախ էր լինում Գորիսում, հանդիպումներ էր ունենում ժողովրդի, մտերիմների հետ: Ժամերով գրույցներ էր ունենում նրանց հետ: Իր հայրենի երկրում նա պարզվում էր, մանկանում, անկեղծանում, մոռանում ինքն իրեն, դառնում հողվոր, դառնում հովիվ, դառնում սարվոր... Նա անձանձուրյթ լսում էր բոլորին, սիրում, սիրահարվում բոլորին, լիցքավորվում, ոգեւորվում, թափ առնում եւ հզոր ներշնչանքով մտնում իր մեկ սենյականոց բնակարանը՝ ստեղծագործելու:

Այվազյանն իր կյանքով ցույց տվեց, թե իսկական մեծերը որքան կարող են հասարակ լինել: Նա բարության եւ համեստության մարմնացում էր:

Ավագ սերունդը հիշում է նրան եւ կարոտում նրա կենդանությունը: Կրտսեր սերնդի համար Այվազյանն այն անմահությունն է, որից պետք է դասեր առնել, որին պետք է մնամվել:

Մի օր խոսք բացվեց նրա գրված ու չգրված գրքերի մասին: Այվազյանը բազմանշանակ ժպտաց, ասաց.

- Իսկական գրողի չգրված գրքերն ավելի շատ են, քան գրվածները: Ոչ մի գրող դեռ չի հասցրել ասելիքն ասել այս

աշխարհին: Իսկական գրողը միշտ էլ տառապում է ասելիքը մարդկանց ասել չհասցնելու ցավից:

Այվազյանն այդպիսին էր: Նրա մտքում ու հոգում հարյուրավոր չգրված գրքեր կային:

Այվազյանն իր գրքերն այրումով ու մորմոքով գրեց՝ բարության սերմեր ցանցելով ամենուր: Նա գիրք գրեց, որ շարունակվի Ջանգեզուր լեռնաշխարհի խորախորհուրդ ավանդակալը: Նա գիրք էր գրում, որ ինքը թեկուզ անհայտ մնա, բայց աշխարհին հայտնի դարձնի իր ժողովրդին:

Պետրոսյան Հովսեփի որդի Սարգիսը, որ Խնձորեսկում հայտնի էր Ուսուբողի անունով, ուսանավոր-բանաստեղծություններ է հորինել, գրել իր գյուղի պատմությունը: Ուսուբողին եղել է իր ժամանակի իմաստասեր խենթերից մեկը, որ ապրել է դատարկ ստանդարտով, բայց երազել շիտակ ու արդար կյանքի մասին:

Արձակագիր Այվազյանը շատ էր սիրում Ուսուբողուն՝ իր եւ նրա միջեւ իրական մտադրություն տեսնելով: Գրողը հատկապես բարձր էր գնահատում Սարգիս Պետրոսյան Ուսուբողու անշահախնդիր նվիրվածությունը հայրենի ժողովրդին:

Այվազյանն Ուսուբողու մեջ փնտրում էր ինքն իրեն:

Նա ֆիզիկապես հրաժեշտ տվեց այս լույս աշխարհին որպես մի Ուսուբողի՝ դժգոհ ու անբավարար կյանքից ու իրականությունից: Փխրուն խառնվածք ուներ Այվազյանը, բյուրեղյա մաքրություն, միանություն հասնող պարզություն: Ինչ ասում էր, սրտին էր ասում: Ջղայանում էր, ամբողջ էությամբ էր ջղայանում: Հոգու շիտակությունը չէր հանդուրժում ոչ մի ծռություն:

- Վարպետ, շատ մի ջղայանա, պահպանիր առողջությունդ, - խորհուրդ էին տալիս շատերը:

- Չեն կարող, - ճակատին կնճիռներ հավաքելով՝ ասում էր նա: - Ես, իհարկե, բարակ գետ եմ: Ինձնից ավելի վարար գետեր կան: Բայց ի տարբերություն շատերի, իմ հոսքի ճանապարհը շատ է թեք: Այդ պատճառով էլ ես հանդարտ հոսել չեմ կարող: Իմ հատակին ես չեմ կարող տիրել կուտակել: Ես պիտի գահավիժեմ բարձունքներից, որքան էլ գլխավոր լինի իմ ընթացքը: Ես հունս թերելով պիտի հոսեմ: Ես չեմ ուզում ցույց տալ, թե իբր ես լավ մարդ եմ, այլ ուզում եմ ցույց տալ, թե լավ մարդը ինչպիսին պետք է լինի:

Բնությունն է նրան այդպես ստեղծել՝ տաղանդավոր եւ գերզգայուն, եւ նա իր բնույթին երբեք հակառակ չգնաց:

ԿՅԱՆՔԻ, ՀՈՂԻ ԳՐՈՂ ԷՐ ՆԱ



Բողոսյան Վերդյան

Բանաստեղծ

Հենց առաջին քայլերից, հենց առաջին գրքից, որն «Անավարտ գործ» խորագիրն ուներ, իսկույն նկատվեց, որ հանձին Սուրեն Այվազյանի, ծնվել է մի գրող, որը շար պիտի փարբերվի այդ ժամանակ ստեղծագործող այլ արձակագիրներից եւ պիտի դառնա առհասարակ հայ արձակի նոր շողարձակումներից մեկը: Շար չանցած՝ նրա ստեղծագործություններում,

Նույնիսկ ակնարկներում երեւացին Սյունյաց աշխարհի թանձր գույները, երեւաց, որ նոր գրողի արմարներն այդ աշխարհի մեջ են, եւ ստեղծած կերպարներն էլ, հարկապես գյուղական կերպարները, նույն հողի վրա ապրող, սիրող, պաշտող, նույն հողի վրա ստեղծված ավանդությունների մեջ մեծացած մարդիկ են:

Հետագա գործերում, մանավանդ պատմվածքներում նա երեւաց իր ամբողջ դեմքով, մտքով, ձեռագրով, զուտ այվազյանական հայտնություններով:

Այվազյանի արձակը շատ է կենսառատ, հուզումնառատ:

Սուրեն Այվազյանը բանաստեղծ չէր, բայց իր պատմվածքներում, մանավանդ «Խիղճը» ժողովածուի պատմվածքներում, իսկապես բանաստեղծ էր: Նրա արձակը բանաստեղծի արձակ էր:

Այվազյանը Բաքվի հայ գրողների մեջ առաջինն էր, որ տեղափոխվեց Երեւան, եւ Երեւանի գրական միջավայրում էլ սկսեցին նրա ստեղծագործական վերելքներն ու թռիչքները...

Նա իրար ետեւից ընթերցողի սեղանին դրեց «Լեռնցիներ», «Ջրաղացի ճանապարհին», «Ճակատագիրն հայոց», «Կա եւ հետմահու կյանք», «Գարունս ծյունների տակ», «Առավոտ լուստ» եւ էլի շատ գրքեր, որոնք նշում են գրողի ճանապարհի բեղմնավոր ընթացքը: Վերջին գիրքը՝ «Խնձորեսկը», որ լույս

տեսավ նրա մահից հետո, մի սքանչելի վավերական, կենսագրական վեպ է, որին, ավագ, պատշաճ ուշադրություն չարժանացրեց գրաքննադատությունը:

Սուրեն Այվազյանն իմ մտերիմ, ազնվագույն ընկերն էր:

Մենք մեզ միեւնույն հողի զավակներն էինք համարում: Ես՝ արցախցի, նա՝ զանգեզուրցի:

Բայց Արցախը նրա մշտական սերն էր, եւ Արցախի ցավը նրա ցավն էր: Ամեն անգամ, երբ նա այցելում էր հայրենի Խնձորեսկում ապրող մորը, հարազատներից, Արցախով էր մտնում Ջանգեզուր աշխարհի եւ միշտ էլ առաջինը լինում էր Շուշի քաղաքում: Արցունք էր թափում ավերակ քաղաքի ազնիվ քարերի վրա եւ նոր միայն բռնում ծննդավայր տանող ճանապարհը:

Սուրեն Այվազյանը պիտի ուրախացներ հայ ընթերցողին իր այնքան կենսահույզ ճշմարիտ ստեղծագործություններով: Նա վաղ մահացավ: Սուրենի կորուստն այնքան մեծ էր, որ առանց նրա կողքս դատարկ է թվում եւ հիշելիս էլ բոլոր ցավերի մեջ ամենատանջող ցավն է մնում: Այդ ցավը շատ է խորանում, երբ նրա մահից հետո արդեն քանի տարի, գրողի անունը չեն տալիս գրական միջոցառումների ժամանակ, մամուլում եւ ոչինչ չեն վերահրատարակում նրա ստեղծագործություններից:

Սուրեն Այվազյանի պես գրողն արժանի չէ մոռացման ու լռության: ■

ԿԱ ԵՎ ՀԵՏՄԱՐՈՒ ԿՅԱՆՔ



Ղափիթ Նովհանյան

Բանաստեղծ

Պատմավիպասանության վերելք՝ անցած դարի 60-ական թվականներին եւ այդ ամենի մեջ յուրահատուկ կերպով առանձնանում էր Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոց» պատմավեպը եւ ընդգրկման տեսակետից, եւ ներքին տրագիգմով: Չասեմ՝ տրագիգմով, ասեմ՝ դրամատիգմով: Մի ներքին ազնվացնող դրամատիգմ կար Այվազյանի ամբողջ էության մեջ: Ուզում եմ նրա մի ուրիշ ժողովածուի վերնագիրը եւս հիշել, որ շատ բնորոշ է իրեն. «Կա եւ հետմահու կյանք»:

Այս մտայնությունը, այս հոգեբանությունը, որ կա հետմահու կյանք, ինձ թվում է՝ անցնում է Այվազյանի ողջ ստեղծագործության միջով: Նա այդպես ապրում, այդպես էլ մտածում էր:

Շատ հպարտ մարդ էր: Ոչինչ իր համար չէր խնդրում: Առանձնապես մոտ չէր մյուս գրողների հետ, առանձնացած էր իր մեծության մեջ, պիտի ասեմ՝ հպարտ մեծության մեջ: Նա ասրեց արժանապատիվ, հպարտ իր կյանքով: Նա ոչ մի բանի պակասություն չուներ: Եվ փառք ուներ, եւ հռչակ, եւ գնահատվում էր, գուցե ոչ այնքան լայն, ժողովրդական միջոցառումների ձեւով, ինչպես իր գրչակից ընկերներից շատերը... բայց գրասեր մարդիկ, հասարակությունը, գրողները շատ լավ էլ գնահատում էին նրան: Բայց ինքն այդ ամենին վերաբերվում էր շատ հանգիստ: Իր պահվածքն էլ շատ առիւնքնող էր: Չուսպ, լուռ, բայց պիտի ասեմ՝ իր թվացյալ ներկայության մեջ, առանձնացածվածությամբ հանդերձ՝ բարեհամբույր էր եւ պատրաստակամ, միայն իրեն հատուկ՝ շատ մարդկային, ջերմ մոտեցումներով:

Հիշում եմ մեր առանձին, ոչ շատ իրենց բանակրվ, բայց բովանդակությամբ խորունկ գրույցներն ու խոսակցությունները, որոնց մի քանիսն էլ եղել են իր երեւանյան բնակարանում, ինչպես ասում են՝ հոգեշահ, ոգելից սեղանի շուրջը: Այդ գրույցներում էլ շատ զուսպ էր եւ ավելի շատ լսում էր բարյացակամ, պատրաստակամ:

Միշտ ինձ լավ են զգացել նրա ներկայությանը: Բայց իրեն ավելի շատ ճանաչել եմ իր գրականությամբ, որ գալիս էր լրացնելու ոչ մեծաքանակ մեր հանդիպումների բովանդակությունը, որոնցից ես մի ազնվական հաճույք էի զգում:

Այո՛, հաճելի էր նրա հետ չփվելը: Չուներ հայ գրողին, արձակագիրին, հատկապես բանաստեղծին բնորոշ շփեր բնավորությունը:

Բայց նա իր ազնվական զսպվածությամբ, սեղմությամբ, ներկայությամբ ավելի էր տրամադրում, ավելի էր առիւնքնում...

Սուրեն Այվազյանը հետք թողեց գրականության մեջ իր մնայուն, արժեքավոր գրքերով: Ես ուզում եմ նրա մի վիպակի վերնագիրն էլ հիշատակել՝ «Ասուր, հե՛յ, Ասուր», որ լույս տեսավ 1985 թվականին: Սա կարծես թե իր՝ Սուրեն Այվազյանի ականջներում մնացած մանկության ծայրն է, կանչն է իր բնաշխարհի, ծննդավայրի, լեռների, իր նախնիների կանչն է՝ Ասուր, հե՛յ, Ասուր: Այս կանչը միշտ նրա ականջներում էր:

Շատ էր կապված հողի հետ: Ունեցել ենք եւ զանգեզուրցի այլ գրողներ, բայց Ջանգեզուրի հետ Սուրեն Այվազյանի կապվածության մեջ մի միստիկ, խորհրդավոր իմաստ կար: Իրեն տեսնում էր Ջանգեզուրում, իրեն գտնում էր Ջանգեզուրում, իր նյութը Ջանգեզուրի բնաշխարհն էր, որի մեծ երգիչը, պատմիչը մնաց ինքը՝ Սուրեն Այվազյանը: ■

Գնահատություն եւ հուշագրություն

Պատասխաններ գրական քննարկումներ

Հարված «Ճակատագիրն հայոց» վեպից

...Միայն Պյոտր Ալեքսեևիչին շատ էր հետաքրքրում Օրու անձնավորությունը: Երկու տարվա ընթացքում նրա ներկայացրած գրությունները, եւ մանավանդ, ծրագիրը (դա նույն ծրագիրն էր, որ ներկայացրել էր Յովհան-Վիլհելմին, որոշ դիվանագիտական փոփոխման ենթարկված) կարողավ եւ խորանալով նրանց բնույթի մեջ, Պյոտրը ապշել էր Օրու ճանաչողական ընդունակությունների, դիվանագիտական մտքի, եւ մանավանդ, ռազմական գիտելիքների վրա: Դրանց լրացնում էին այն բոլոր տեղեկությունները, որ այս երկու տարվա ընթացքում հավաքել էր նրա մասին:



Իսրայել Օրի

Այժմ այդ բոլոր գրությունները, Հայաստանի մեկնելու աղերսագրերը, Պյոտրը դարձել էր սեղանի մի անկյունում եւ նրանցից առանձնացրել էր միայն Յովհան-Վիլհելմի նամակը: Կանցլեր Ֆեդոր Ալեքսեևիչ Գոլովինը՝ հայ պատգամավորների հետ այս սպասվող տեսակցությունից առաջ՝ Պյոտրին ասել էր.

– Գիտե՞ք, ձեր կայսերական բարձրություն, որ Արչիլ Վախթանգովիչը ամձամբ գիտե Օրուն եւ մտերմություն է ունեցել նրա հոր՝ մեծ իշխան Իսրայելի հետ: Նա շատ լավ բաներ ասաց Օրու անձնավորության ու նրա տոհմի մասին:

– Դրանք հաստատում են իրենք՝ հայ մեկնիչները:

– Կարելու էր այն է, որ մեկ են նրանց նպատակներն ու ձգտումները, եւ դա շատ կօգնի հարավում մեր անելիքներին...

– Լավ, կտեսնենք, – ու տափակ բերանով երկար փչել էր Պետրոսը:

Եվ հիմա ոտը ոտի վրա, ձեռքը՝ ձեռքին՝ կողքանց նայելով մուտքին սպասում էր, երբ ներս մտավ Օրին, եւ նրա հետ Մինաս վարդապետը: Բոլորովին էլ տպավորություն մնալով այն չէր, թե դրանք պետություն չունեցող մի ժողովրդի միայն աղերսող պատգամավորներ էին:

Իսկ երիտասարդ թագավորը առաջին հայացքից բոլորովին էլ այն տպավորությունը չթողեց Օրու վրա, թե նա կարող էր քաղաքավարական նորմաներ սահմանել բոյարների համար: Խիստ ամբարտավան, անբարեհամբույր տեսք ուներ: Բայց Օրին ողջունեց նրան անբառ, հայաբար ջերմ: Նա ձեռքը լայն բաց արած սեղմեց կրծքին, բարձրացրեց գլխից վեր եւ շիտակ քայլերով մոտ գնաց թագավորին: Սա ակամայից ձեռքը մեկնեց նրան, բայց կլոր, անթարթ եւ ուժեղ աչքերը չկտրեց Օրու աչքերից, հենց նրա համար, որ այնտեղ մեծ ուժ էր տեսնում:

Մոտ գնաց եւ Մինաս վարդապետը եւս, շքեղ, սեւ վեղարով, սեւ աչքերով, սեւ մորուքով եւ այս ամբողջ սելուկյան վրա հավասար թեւերով արծաթե մի պարզ խաչ: Նա թեթևակի գլուխ խոնարհելով, ասաց.

– Թող հաստատ մնա քրիստոնյա թագավորի գահը: Օրինում են փառքը եւ ավելին են կաննում, որ զորավիգ լինես բոլոր ձեր մեծությանը հավատակից եւ թագավորությանը սահմանակից տերություններին, որոնք տառապում են անհավատի պիղծ ձեռքերով կործանված ավանդների, կործանվող հայրենիքի եւ հոգու համար: Այդ բազմաչարչար, հավածական հոտերից ձեզ ողջույն շատ եւ օրհնանքներ բարի:

Այս բոլորը Տերմնոյի պալատի կամարների տակ այնպես անուշ հնչեց հայերեն, որ առանց թարգմանության թագավորը կկաննար մի անգամ էլ լսել: Բայց նա միայն սիրավոր հրավիրեց նստել պատգամավորներին, իսկ ինքը դեռ երկար ժամանակ հայացքը Օրու գարծնում էր Մինաս վարդապետին եւ նորից Օրուն: Հետո ուղղվեց տեղում, երկար, լղարիկ մատներով բռնեց գահի հենակների առյուծակերպ, ոսկեգօծ գլուխներն ու թագավորական ձայնով ասաց.

– Լսում են ձեզ:

– Ես մոտավորապես շարադրել եմ ձեր մեծությանը գրած նամակներում մեր

նպատակներն ու աղերսանքները, – այսպես սկսեց Օրին, թեւեւ դեռ շատ բան ուներ ասելու գրածներից բացի:

– Կարդացել եմ մեկ առ մեկ, – ասաց Պյոտր Ալեքսեևիչը:

Օրին սպասում էր, թե ինչ կասի թագավորը «մեկ առ մեկ» կարդացածների մասին, բայց տեսնելով, որ չի շարունակում խոսքը, խոսեց ինքը.

– Ով մեծ Ռուսիայի մեծ թագավոր, – ասաց, – նեղացրել են մեր ժողովրդի տեղն այնպես, որ նա խեղդվում է: Խլել են նրա հողերը, իսկ երբ ժողովուրդը հող չունի, նա երբեք ազատ լինել չի կարող, ուրեմն խլել են եւ նրա ազատությունը: Բայց նա դեռ պահում է իր նախնիներից ժառանգած հպարտությունը, դեռ ուժ ունի իր մեջ, եւ գերադասում է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք: Եվ եթե ծնկաչոք եմ եղել եւ Պֆալցի Յովհան-Վիլհելմ իշխանի, Ավստրիո Լեոպոլդ կայսեր, Հռոմի պապի, Տոբլանի մեծ դուքսի եւ ապա ձեր մեծության առաջ, միայն նրա համար, որ չչոքի հպարտ ապրելու իրավունք ունեցող այդ ժողովուրդը:

Բարձրացավ Պյոտրի ձայն հոնքը, կեռվեց, շողացին առողջ ատամները, եւ մեծահոգի մի ժպիտ անցավ դեմքի վրայով, մնաց շագանակագույն աչքերի մեջ: Մի ժպիտ, որ հատուկ է միայն իր ուժերին վստահ մեծավորին, որով մեծահոգորեն ներում են իրենց հպատակների հանդուստությունը: Եվ հենց նրա համար, որ Օրին գիտեր, որ Պյոտրը սիրում էր անկեղծությունն ու համարձակությունը, ապա նա առաջ տարավ խոսքը նույն հավասար հանդարտությամբ, անկեղծությամբ.

– Քրիստոնյա տերությունների աչքի առաջ ճնշվում է նույնահավատ մի ժողովուրդ, ոտնահարվում են նրա իրավունքները, ծաղրվում է նրա հավատը, բայց անսահման է այդ տերությունների անսիրտ սառնությունը: Ձի արդարադատությունը չէ, եւ ոչ էլ հավատը միեւնույն աստծու նկատմամբ, որով նրանք կառավարվում են, այլ միայն եւ միայն շահախնդրությունը: Հայր ոչ թե ցանկանում է այլահավատ ոչնչացնողներից ազատվելով, խաչվել քրիստոնյա պետության ձեռքով, այլ վարձահատույց լինելով եւ առմիշտ երախտապարտ՝ օգնություն է խնդրում այդ քրիստոնյա տերություններից, իր ազգային ազատությունը ետ խլելու այդ այլահավատ բռնապետությունից եւ միշտ ու միայն իր ձեռքում պահելու համար: Սրա մեջ իրենց օգտակար ոչինչ չեն տեսնում քրիստոնյա տերությունները: Սրանք սիրահոծար «օգնել» են ուզում՝ խլել մեզ ուրիշի բերանից, միայն որ իրենք կրկ տան: Եվ դա մեծ մարդասիրություն է համարվում, որովհետեւ մենք քրիստոնյա լինելով կմարսվենք ոչ պիղծ ստամոքսում...

Լսում էր Պյոտրը, հիացած Օրու խորամանկ հարցադրումից: Վերջին բառերը

ծիծաղի գրգիռ առաջացրին նրա մեջ, բայց զսպեց՝ մատներով հարդարելով կարճ, ուղիղ բեղերը:

Օրին շարունակեց.

– Ձեր կայսերական բարձրություն, հայր ջիլ է, նա կընկնի, կելնի եւ երբեք չի կորչի: Նա, ինչպես ամեն ստեղծող, բարի է, բայց ասիւնքից դուրս գալ գիտե եւ ատամներով պաշտպանել իրեն ու իր ստեղծածը: Օգնիր, թագավոր, հանուն հավատի ու մարդասիրության: Մենք ձեզ պարտահատույց կլինենք, եւ ձեր մեծության տերության հարավային միշտ վտանգավոր սահմանը կամրանա՝ ունենալով այնտեղ քրիստոնյա եւ հավատարիմ թագավորություններ՝ Հայաստանն ու Վրաստանը:

Պյոտր.

– Այն քանակությամբ զորքով, ինչքան դուք եք մշել ծրագրի մեջ, մենք հարավում պատերազմել չենք կարող: Դուք մոռացել եք այնտեղ թուրքիային:

Օրին իսկույն թղթերի արանքից հանեց Հայաստանի քարտեզը եւ փռեց կայսեր առաջ.

– Թուրքիան եւ մոռանալ չէի կարող: Նա անտարբեր չի կարող մնալ, տեսնելով Պարսկաստանի պարտությունը, մանավանդ այս ժամանակ, երբ Եվրոպան զբաղված է կռիվներով: Բայց ես հաստատ հանդաված եմ, որ Թուրքիան մեր եւ վրացիների միացյալ ուժերի եւ մեծ Ռուսիայի օգնության դեմ ոչինչ չի կարող անել: Ահա Թուրքիան, – նա քարտեզի վրա ցույց տվեց Թուրքիան եւ հայաստանյան սահմանները:

– Ցույց եմ տվել, թե ինչպես մենք կարող ենք հեշտությամբ գրավել Երեւանի բերդը: Հայաստանի այս մասերը լեռներ են: Այս լեռներում ամենափոքրաթիվ ուժերով կարելի է թշնամու մեծ ուժեր խորտակել: Մենք շարժվելու ենք երեք ուղղությամբ եւ կանգնելու ենք ահա այս սահմանի վրա: Այս կողմը Կասպիական ծովն է, առեւել չի կարող: Եվ, ահա, այս ծովն ու լեռներն էլ դառնում

պետի հայերենը, հայացքը դարձրեց Օրուն: Սա գերմաներեն թարգմանեց նրա խոսքը: Պյոտրը նորից գնաց դահլիճի վերի կողմը, վերադարձավ ու հայտարարեց.

– Հասկանում եմ, թե ինչ վիճակում են հայերը: Հասկանում եմ եւ այն, թե ինչ նշանակություն ունի հայ ժողովուրդը իմ թագավորության հարավային սահմաններում, բայց, միեւնույն է, մենք հիմա հնարավորություն չունենք հայերով զբաղվելու: Ո՛չ, շտապել չենք կարող եւ հավատ դնել չեն կարող ձեր ուժերի վրա, եւ ես իմ ուժերը ցրել չեմ կարող, երբ հիմա կռվում ենք շվեդների դեմ: Դուք, իհարկե, ինձ կտեսնեք հարավում, դրանում ավելի քան հանդաված եղեք: Ես կիջեմ հարավ նույնիսկ այն ժամանակ, երբ Յովհան-Վիլհելմը, Լեոպոլդ կայսրը, կամ որեւէ այլ քրիստոնյա կայսր, ինչ-որ բան արած լինեն քրիստոնյա հարավում...

Լեռնականի արյունը մի պահ խաղա եղավ Օրու երակներում:

Պյոտրին նույնպես չէր հետաքրքրում, թե հենց այս պահին կործանվում է մի հին, թեւեւ փոքրացած, բայց բանձրացած, քրիստոնյա ժողովուրդ: Նա կիջնի հարավ, թեկուզ այդ ժողովուրդը մի ուրիշ ժողովրդի օգնությամբ իր ինքնուրույնությունը ձեռք բերած կլինի... Բայց պահեց Օրին իրեն դիվանագետի հանդարտությամբ: Իսկ խորաթափանց թագավորն արդեն զգացել էր, թե ինչ կատարվեց նրա հետ: Փորձեց անգուշորեն ասածն զգուշորեն շտկել.

– Չե՞ն գոհացնում իմ ասածները, չե՞ք կարող սպասել:

Օրին աղմուկով արտաչափեց:

– Ձեր մեծությանն ընդհանրապես է հետաքրքրում հարավը... Իսկ մենք միայն օգնություն ենք խնդրում: Ինչ վերաբերում է սպասելուն՝ կդիմանամք, – ու մի քիչ լռեց, մորթեց առած բռան մեջ: – Ուրիշ ճար չունի հայը, եթե նա չի ցանկանում հավատափոխ լինել: Հուսանք, դիմանանք: Հայն



Պետրոս Մեծ

են մեր սահմանը:

Պյոտրը դեռ երկար ժամանակ գլուխը չէր բարձրացնում քարտեզից: Հետո նա ելավ տեղից, քայլեց մեծ դահլիճի երկայնքով, վերադարձավ ու նորից նստեց սեղանի մոտ ու դարձյալ զննեց քարտեզը:

Մինաս վարդապետին թվաց, թե Պյոտրը արդեն պատրաստ է օգնության ձեռք մեկնելու: Նրա լռությունն այդ էր ասում: Ուստի ոգեւորվելով, ասաց.

– Աստվածասեր արքա, հայ ժողովուրդը իր փրկությունը սպասում է միայն Ռուսիայից՝ Մոսկվայի օգոստոսափառ տնից: Այս մարգարեությանը հավատացել են, հավատում են եւ սպասում են, որ կլինի այդ: Անօրեններն այն աստիճանի չարության են հասել, որ մեծ հարկերով, բռնություններով հարկադրում են ընդունել Մուհամմեդի հավատը: Իսկ մյուս կողմից տեսնում ենք այն բնական ազնիվ ձգտումը, որ ունի ձեր թագավորության մեծությունը քրիստոնյա հավատին պաշտպան կանգնելով:

Պյոտրը, որ ուշադիր լսում էր վարդա-

ասում է. «Ձրում խեղդվող փրկություններից էլ է բռնում»:

Մուր էին Օրու խոսքերը, բայց դուր էին գալիս կայսրին: Նա, ոտների ծայրերին բարձրանալով, թթեց բաց լուսամուտից, մատով սրբեց բեղիկներն ու սեղանից վերցրեց Յովհան-Վիլհելմի նամակը:

– Ահա ինչ է գրում ձեր բարեկամ Պֆալցի իշխանը. «Հայաստանի կառավարիչները ու իշխանավորները, ցանկանալով Պարսկաստանի լծի տակից դուրս գալ, հայոց Պոռն իշխանական ցեղից սերված Իսրայել Օրի անունով իրենց մի հայ պատգամավորի միջոցով մեր օգնությանն են դիմել՝ խնդրելով, որ մենք նրանց երկիրը զորք ուղարկենք, որ միանալով հայկական զորքի հետ՝ կարողանա Հայաստանն ազատել: Ցանկանալով հայերի սույն խնդիրը հարգել՝ ես խնդրում եմ ներդրություն քաշել եւ ստուգել, թե հայերի այս խնդիրը, որ իբրեւ մեծ գաղտնիք հարդրված է ինձ, որքանով է մոտ ճշմարտության եւ իրագործման ինչ հնարավորություններ

Ե կան: Չերդ մեծությունը, երբ հայերի այս խնդիրը իրագործելի կհամարի եւ հանձն կառնի թույլատրել ինձ գործ անցկացնելու ձեր երկրով, այն ժամանակ ես իմ համաձայնությունը կտամ հայերին»: Կարողաց, նորից դրեց սեղանի վրա, նորից գնաց, քթեց լուսամուտից դուրս: Երբ վերադարձավ, Օրին կանցեցավ խոսել, Պյոտրը ընդհատեց նրան:

– Թույլ եմ տալիս, որ Պֆալցի իշխանը, իհարկե եւ Լեոպոլդ կայսրը, երեք, չորս գունդ գործ անցկացնեն իմ երկրով: Ես կարող եմ հենց հիմա հրամայել արտոնության թղթեր պատրաստելու տալ ձեր ձեռքը, – խորամանկեց թագավորը, իմանալով, որ Իսախանիայի դեմ սկսած պատերազմի պատճառով, հիմա երբեք հնարավորություն չեն ունենա գործ ուղարկել:

– Չերդ մեծությունը ես գրել եմ եւ ստել եմ առերես, որ մենք հրաժարվում ենք այդ երկրների օգնությունից: Մենք սկզբում մտածում էինք, թե օգնությունն անշահախնդիր կլինի: Բայց Պֆալցի իշխանը հայոց երկրում թագավոր դառնալ է ուզում: Իսկ մենք մեր խորտակված գահը բարձրացնել ենք ուզում, ուզում ենք տերություն լինել: Ուզում ենք լինել այն, ինչ էինք: Մի՞թե արդար չէ մեր պահանջը:

– Միանգամայն, բայց ինչպե՞ս:
– Թո՛ւյլ է տալիս ձերդ մեծությունն ասեն, թե ինչպես:

– Խոսիր ազատ:
– Արքայական մեծությունդ գիտե, որ այժմ ոչ կուրֆյուրստը, ոչ նրա դաշնակիցները մեզ գործ տալ չեն կարող: Բայց դուք գրեք, որ թույլատրում եք այդ գործն անցկացնել ձերդ արքայական մեծության երկրով: Թե Գոլհանֆիլհելմը, թե Լեոպոլդ կայսրը պիտի հրաժարվեն գործ տալուց, ասելով, որ պատերազմ է: Այն ժամանակ ես նրանցից կխնդրեմ մի խումբ երկրաչափներ եւ այլ զինվորական մասնագետներ տալ ինձ: Ես այդ մարդկանցով կզամ Մոսկվա եւ այստեղից կմեկնեմ Պարսկաստան որպես ձերդ մեծությանը դեսպան եւ շահին կնեղրկայանամ իբր զինվորական աստիճանավոր, որ եկել եմ մեծ տերության համար ձեր գնելու: Իսկ Պարսկաստանում ձեր շատ կան եւ ձիու առետուրը խիստ շահեկան լինելով, սիրով պիտի ընդունեն ինձ: Ես այստեղ ոտքի կկանգնեցնեմ բոլոր հայերին, որ Շահ Աբասն է գերի վարել՝ դատարկելով Նախիջեւանը, եւ կվերադառնամ՝ ձերդ մեծությանը ապագա արշավանքների համար բերելով շատ օգուտակար տեղեկություններ: Իսկ մինչ այդ, աստծու ողորմության եւ հանճարի ուժով, ավարտած կլինես պատերազմը հյուսիսի հետ:

Մի բզեզ քիթը լուսամուտի ապակուրն դեմ արած տալում էր, եւ նրա տզոցը երկար ժամանակ մնաց անխախտ: Գետո խախտվեց:
– Գարգում եմ խելքդ, – Պյոտրն այս բառերն ասաց հազիվ լսելի եւ դեռ օժտահաբաց նայում էր մի կետի: Այդ հայացքը մի քիչ հետո դարձրեց Օրուն: – Դուք մի նամակով ինձնից գնդապետի աստիճան էիք պահանջում: Գիշում եմ, գրել էիք, թե դա ինչի համար էիք պահանջում, – փնտրեց, թղթերի միջից հանեց Օրու ծրագիրը, առանց մի բառ անգամ կարդալու թերթեց, դրեց սեղանին եւ ձեռքը չռած դրեց վրեն: – Զինվորական եղե՛ն էք:

– Զինվորական դպրոց եմ ավարտել Փարիզում եւ մասնագետ եմ անգլո-ֆրանսիական պատերազմին որպես գորակալ:
– Ես հենց այս րոպեին ձեր ուսերին կդնեի գեներալ-ֆելդցեյմայստերի ուսադիրներ եւ վստահ կուղարկեի շվեդների դեմ: Այդ իրավունքը տալիս եմ ինձ ոչ Փարիզի զինվորական դպրոցը, ոչ ֆրանսիական կապիտալիզմը, այլ սա... – չռած ձեռքը Պյոտրը բարձրացնելով, նորից գցեց ծրագրի վրա: – Բայց, որովհետեւ գեներալությունը կարող է խանգարել այն խելավոր ճակատամարտին, որ դու ուզում ես վարել առանց կրակոցների, ապա ես հենց այսօր կստորագրեմ գնդապետի կոչման հրամանագիրը: Իսկ երբ կվերադառնաս Եվրոպայից, ես կանեմ ամեն կարգադրություն, որքան հնարավոր է շուրջով լինի դեսպանությունը եւ անկասկածելի:
– Շնորհակալություն, – Օրին ձեռքը սեղմեց կրծքին:
– Առանց մաքսի իմ երկրով գնեք տեղափոխելու մասին էիր գրել:

– Այո՛, ձերդ կայսերական մեծություն: Պարսկաստանից վերադառնալիս ես ցանկանում եմ զինել հայկական զորքերը, եւ այդ զորքերից մեկով ներկայանալու ձերդ մեծությանը, ցույց տալու համար հայի առկա ուժերը: Իսկ մեզ մոտ դեռ գեներալ ինն տեսակներն են:

Պյոտրի մեջ արթնացել էր հասարակ մահկանացուի հետաքրքրասիրությունը, թե Օրին որտեղի՞ց եւ ի՞նչ միջոցներով պետք է ձեռք բերի այնքան զենք, որ գնդեր զինի: Բայց արքայական բարձրությունից իջնել չցանկացավ ու չհարցրեց, այլ ասաց:
– Դա եւս թույլատրում եմ: Կլինեն նաեւ կարգադրություններ, որ սրբազան հոր համար, այդ ամբողջ հարաբերությունների ընթացքում, լինեն բարեկեցության պայմաններ եւ պրիկազներում ազատ ել ու մուտ:

– Օրինում եմ եւ աղաչանք աղաչում աստծուն, որ հաստատ պահի գահդ ու թագդ՝ անաղարտ, – ասաց ու գլուխ խոնարհեց Մինաս վարդապետն ու ավելացրեց: – Պետք չեն ինձ բարեկեցիկ պայմաններ: Զայ հանապազօրյա եւ գավաթ մի ջուր: Եթե կա իմ հոտի մեջ մեկը, այդքան էլ չունի, ուրեմն դա եւս շատ է: Ես կապրեմ, ինչպես կողոպտված հայը, որպեսզի միշտ զգալով տառապանքը, կարողանամ աշխատել նրա համար: Եթե որեւէ բան ավելին աղերսեմ, ապա միայն փութաջանություն բազմաչարչար մեր ժողովրդի փրկությունն արագացնելու:

Պյոտրը լսում էր գերագույն ուշադրությամբ եւ իրացնումըով՝ դեպի վարդապետի հայրենասիրությունը ոչ միայն, եւ դեպի նրա անձնավորությանը: Թագավորին դուր էին գալիս նույնիսկ նրա ծայրը, շարժումները, կեցվածքը, աչքերի թախծոտ մշուշը, որ երբեմն թանձրանալով, ծխի պես քողարկում էր այն կրակները, որ նրա խոսքերից արժարժվում էին:

Այսպես էլ ավարտվեց հայ պատգամավորների առաջին հանդիպումը Պյոտր Առաջինի հետ:

Դուրս եկան թագավորի մոտից: Կրեմլի սալաքարերը հանդարտիկ ու ոչ համաչափ չդիտվում էին նրանց անշտապ քայլերից, եւ աշտարակները բոլոր, որոնց մոտով անցնում էին, եւ Ավետման ու Գրեշտակապետաց տաճարները, Իվան Մեծի գանգակատունը, պալատները ամենայն ճշտությամբ արձագանքում էին այդ ոտնաձայներին: Քայլում էին եւ լուռ էին երկուսն էլ, եւ լռությանը խոսում էին իրար հետ, այնպես, ասես եւ լսում էին: Երբ դուրս եկան Բորովցյան դարպասից ու մտան Ալեքսանդրյան այգին եւ կանաչ խոտերի վրա խլացան նրանց ոտնաձայները, Մինաս վարդապետն ասաց:
– Եթե մեր ցավերին Մոսկովյան կրեմլը արձագանքեր այնպես, ինչպես արձագանքում էր մեր քայլերին... Ավա՛ղ, Պյոտրին հետաքրքրում է այն, ինչ Լեոպոլդին, Գոլհանֆիլհելմին, Գոռնի պապին: Եվ ոչ երբեք մեր ցավերը:

– Եվ երբեք չպիտի լինի մեկ ուրիշը, որ ցավի մեր ցավերով: Առանց շահի ո՞վ պիտի օգնի մեզ, վարդապետ, ոչ ոք: Իսկ մենք ռուսների համար ավելի շահավետ ենք, քան մեկ ուրիշ եվրոպական թագավորության: Որովհետեւ ռուսները մեզ, միեւնույն է, պիտի խլեն ուրիշներից: Եվ մեզ համար է շահավետ Ռուսիան:
Երբ շատ եւս հեռանում մտքերս, սիրտս նեղվում է, եւ բեկվում եմ ուժերս: Չառաքենք մեր մտքերը դեպի հեռուները, դեռ փրկենք մենք մեզ մուսուլմաններից, հետո կտեսնենք, թե ինչ կանեն քրիստոնյաները: Իսկ ավելի հետո՝ աստված մեծ է:
– Եվ մենք ավելի փոքր չենք, քան աստված:

– Մի ասա այդպիսի բան, Օրի, աստված կնեղանա:
– Ապա ինչո՞ւ աստված չի մտածում, որ մենք միշտ իրենից նեղացած ենք: Այս ինչո՞ւ ամենաստվածային բանը՝ մեր լեզուն, այսպես վստահվել է:
– Քանի կա ինքը աստվածը, մեր լեզուն կլինի, – կանաչ ծառերի արանքից Մինաս վարդապետը մայեց երկնքին: – Տեր, լսո՛ւմ ես... իսկ դու հավիտյան ես:

Եվ դեռ վարդապետի հայացքը հառած էր երկնքին, այնպես, ասես նայում էր աստծու աչքերին, երբ Սպասկյան աշտարակից ժամացույցը հիմզ անգամ, պղնձյա խոշոր ձայնով զրնգաց... ■

ԻՄ ՄԵԾ, ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԶՈՐԵՂԲԱՅՐԸ



Վանիկ Այվազյան
Գրողի եղբորորդին

Սուրեն Այվազյանին՝ սիրելի հորեղբորս, հիշում եմ 1960 թվականից, երբ գյուղի մեր գերեզմանատանը հուշաքար էր դրվում Բախչի պապիս շիրմի վրա: Ես, իմ եղբայրները եւ քույրերս սկզբում նրան ամի էինք ասում:

Բայց հետո ինքը մեզ բացատրեց, որ դա աղբրեջանական բառ է՝ ինձ պարզապես հորեղբայր ասացեք: Դրանից հետո մենք բոլորս նրան հորեղբայր էինք ասում: Գործը բայց ինձ հետ շատ էր կապված, ինձ շատ էր սիրում:

Ես շատ էի հպարտանում նրանով եւ ավստում, որ ուշ-ուշ է լինում գյուղում, մեր տանը:

Երկրորդ անգամ հորեղբորս ինձ հաջողվեց տեսնել 1965 թվականին Բոխչա տատիկի մահվան ժամանակ: Մենք՝ հորս ամբողջ գերդաստանը, դեռ ապրում էինք ինն գյուղի տանը: Թաղման արարողությունը կատարվեց դպրոցում: Ես զգում էի հորեղբորս վշտի խորությունը: Մոր մահից հետո հայրս՝ Սերգոն էլ մեծ վիշտ ապրեց, բայց գրողի վիշտն ուրիշ էր: Գործը բայց տարին մեկ-երկու անգամ էր լինում գյուղում, եւ ես կարողանում էի նրա բացակայությունը: Զայրս գյուղում հարգված մարդ էր, ու նրան շատերն էին ճանաչում, բայց մենք՝ բոլոր Այվազյաններս ամենուր հայտնի էինք դառնում Այվազյան գրողին:

Երբ այստեղի գրողին Գորիս քաղաքում բնակարան տվին, նա ավելի հաճախ էր լինում գյուղում, նաեւ մեր տանը:

Այդ ժամանակներում ԽՍՀՄ-ի սովխոզ կոմբարտակամ ֆերմային կից համակցված կերերի գործարան ուներ: Ես այդ գործարանի տնօրենն էի: Այնպես պատահեց, որ գրողը դարձավ Սյունիքի գրողների միավորման նախագահ: Եկավ Գորիս: Ուներ աշխատասենյակ, քարտուղարուհի, ավտոմեքենա: Զամատեղության կարգով ես դարձա հորեղբորս ծառայողական ավտոմեքենայի վարորդը: Շփումս հորեղբորս հետ դարձավ ամենօրյա, եւ ես ավելի մոտիկից ու ավելի խոր ճանաչեցի այդ ազնիվ, հարգված ու բոլորի կողմից սիրված մարդուն: Ցույց չէի տալիս, բայց հոգում մեջ նա իմ հպարտությունն էր: Ես զգում էի, որ նա ամբողջությամբ ժողովրդի համար է ու ծնվել է նրան անմնացորդ ծառայելու համար:

1978-80 թվականների ընթացքում հորեղբորս հետ ինձ էլ հաջողվեց լինել Ղարաբաղ աշխարհում: Գրողը հանդիպումներ ունեցավ Ղարաբաղի ժողովրդի, Ղարաբաղի գրողների հետ: Նրան սիրում էին բոլորը: Նա հատկապես կապված էր գրողներ Գուրգեն Գաբրիելյանի, Արմեն Գոլանի, Ռուբեն Բեգլարյանի եւ շատ-շատերի հետ: Ղարաբաղի գրողները հորեղբորս ասում էին Մեծ ապա:

1980 թվականի դեկտեմբերին, մահից 4-5 ամիս առաջ, Սուրեն Այվազյանը հրավիրված էր Շուշիում Սուրբազանի կիսանդրու բացման արարողությանը: Ղարաբաղի գրողները հենց սկզբից Սուրեն

Այվազյանին ասել էին, որ Աղբրեջանի ՊԱԿ-ից եւ Կենտկոմից ներկայացուցիչներ կան, հարկավոր է արտահայտությունների մեջ զգույշ լինել:

Սուրբազանի հուշարձանի բացմանը նվիրված միջոցառման ավարտից հետո Զայաստանի եւ Աղբրեջանի պատվիրակությունները մասնակցեցին հացկերույթին: Որոշ ժամանակ անց հանկարծ ականջս որսաց հորեղբորս ձայնը: Քիչ հետո դուրս եկավ հորեղբայրս սաստիկ ջղայնացած՝ շրջապատված Ղարաբաղի գրողներով, որոնք ուզում էին հանգստացնել նրան: Զարցրի՛ ի՞նչ է պատահել: Բացատրեցին, որ Սուրեն Այվազյանն ու աղբրեջանցի գրող Անարը սաստիկ վիճաբանել են իրար հետ Ղարաբաղի հարցի շուրջ:

Դեռեւս այն ժամանակ գրող Այվազյանը չէր հաշտվում Աղբրեջանի կազմում Ղարաբաղի լինելու փաստի հետ եւ ամենուրեք բարձրաձայնում էր այդ մասին:

Մի ուրիշ անգամ Ղարաբաղի գրողները եկան Տաթև: Շրջապատել էին Սուրեն Այվազյանին եւ ամբողջ ժամանակ գրույց գնում էր մեծ արձակագրի եւ նրա ստեղծագործությունների շուրջ: Այստեղ՝ վանքին առջնորդ տափարակի կանաչների մեջ մատուցած՝ գրողներն ունկնդիր եղան «Ղարաբաղի հորովելը» երգին, որը կատարում էր տեքստի հեղինակ Գուրգեն Գաբրիելյանը: Այստեղ միջավայրն ազատ էր, եւ Այվազյանը պարզորոշ խոսում էր Ղարաբաղի ազատագրության մասին:

Գործը բայց Սուրեն Այվազյանը, մտերմություն ուներ հասարակ շատ մարդկանց հետ: Դրանցից մեկը Տեղ գյուղացի Քյարունց Շամխալն էր, ով «Կուրաթի» ծնունդ մեղվաբույծ էր: Մի օր գնացինք նրա մոտ: Շամխալը տեղում չէր: Պատուհանից նայեցինք, ինչ տեսնեցք, ներսի սեղանի վրա, ամանի մեջ մեղր կա: Գործը բայց ասացի.

- Ուզո՞ւմ ես մեղր ուտես:
Գլխով արեց՝ հասկացա, որ ուզում է.
- Բայց ինչպե՞ս, չէ որ դուռը փակ է:
Ոչինչ չասացի: Իսկույն պահեստի փոքրիկ պատուհանի ապակիներից մեկը հանեցի, ճիպտի ծայրին հաց դրեցի ու ճիպտը մղելով դեպի առաջ՝ հացը սուզեցի մեղրի մեջ:

Դրանից հետո ճիպտը ետ էի բերում եւ գրողին առաջարկում՝ ինչքան ուզում է, թող ուտի: Այվազյանի համար հետաքրքիր էր ոչ այնքան մեղր ուտելը, որքան իմ հնարամտությունը, որից նա հաճույք էր ստանում: Արձակագիր Այվազյանն ուսում էր ու ծիծաղում, ուսում էր ու ծիծաղում: Այսպես մի քանի տասնյակ անգամ փայտը տանում էի ներս եւ մեղրը ծլլալով հետ բերում:

Երկուսով լավ կերանք, կշտացանք: Մեկ էլ հանկարծ գետնին կաթկթած մեղրի հետքերի վրա մեղրների մի պարս հարձակվեց մեզ վրա: Ես իսկույն մի շոր գտա եւ զցեցի գրողի գլխին՝ ծածկելով դեմք ու երես: Մինչեւ ինձ համար էլ նույն բանը անեմ, դեմքիս մի տաս-տասնիինգ տեղից մեղրները հասցրին խայթել:

Դե ես ոչինչ, գրողը փրկված էր:
Դրանից հետո ինձ ու Շամխալին հանդիպելիս Այվազյանն այդ դեպքը հիշում, պատմում էր ու անզուսպ ծիծաղում:

Պետք է գնար Զեդեգուստան: Գնացել եմ ճանապարհելու: Բայց մինչեւ գնալն օրենք կար՝ պետք է հանրապետական սանկադայանում սրսկվեք: Խոստովանեց, որ սրսկելուց սաստիկ վախենում է: Բայց ինչ արած: Զեդեգուստան մեկնող խմբի հետ Այվազյանն էլ գնաց սրսկվելու: Երբ հետ եկավ, հարցրի.

- Ի՞նչ եղավ, հորեղբայր:
- Ցուցակով սրսկում էին, - ասաց, - երբ հերթն ինձ հասավ, Վազգեն Տալալյանը երկրորդ անգամ ուղարկեցի: Բարեբախտաբար գլխի չընկան:

ԽՍՀՄ-ի սրսկում Սուրբ Զեդեգուստանից բացի

Գրականագիտություն

ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ. ՌԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐԾ

Էջ 5
Մերն ու երանգները, որոնք ստեղծագործական ներշնչումների աղբյուր են նրա համար, հարազատ երկրամասի պատկերները, մարդկանց, նրանց հոգևերը, դրամատիկ ապրումները, սովորություններն ու ավանդույթները եւ այս ճանապարհով էլ առնչվում է մեծ աշխարհի անցողիկինը:

Ս.Այվազյանը ծնվել է 1915թ. հունվարի 9-ին Սյունյաց աշխարհի գեղատեսիլ անկյուններից մեկում՝ պատմական Խնձորեսկ գյուղում, որը հայտնի է իր անվանի գավակներով՝ գրողներ, կոմպոզիտորներ ու երաժիշտներ, արվեստի, մշակույթի համարահայտ ներկայացուցիչներ, ականավոր գիտնականներ, բարձրաստիճան զինվորականներ, հասարակական-քաղաքական գործիչներ:

Նրա համարյա բոլոր ստեղծագործություններում Խնձորեսկն է, մանկության օրերի հեքիաթային պատկերներն ու հուշերը, հարազատ ու սիրելի մարդիկ: Ամեն ինչ յուրահատուկ ու անկրկնելի է գրողի ծննդավայրում: «Այլ էին նրա գիշերներն ու ցերեկները: Խնձորեսկի երկնակամարով անցնող արեւն այն արեւը չէր, որ անցնում էր այս կիսագնդով ու ընկնում մյուս կիսագնդով: Ոչ էլ լուսնյակն էր նույնը: Դրանք միայն Խնձորեսկի արեւն ու լուսինն էին, որ, դուրս գալով ծախակողման ձորերի խորխորատներից, զնուն, աջակողմում մտնում էին Մթնածորի այրերը: Այլ էին նաեւ մայր Խնձորեսկի մարդիկ, այնքան այլ, որ եթե հին Խնձորեսկից մեկին շատ հեռու մի տեղ ինչ-որ առիթով ինչ-որ մեկը հարցներ, թե ո՞վ ես, ի՞նչ մարդ ես, նա կպատասխաներ. «Խնձորեսկից եմ...»: Եվ այդ հեռավոր տեղի մարդը պիտի հասկանար, թե դա ինչ է ըշանակում» (2):

Անչափ ծանր մանկություն է ունեցել Ս.Այվազյանը եւ իր ստեղծագործություններում բազմիցս անդրադարձել է իր կիսաքաղց, կիսամերկ մանկության ծանր օրերին, երբ մայրը մի կերպ կարողանում էր ապահովել որբ երեխաների օրվա մի կտոր հացը: «Նա միշտ գալիս էր ուշ երեկոյան: Նրան տեսնելով, մենք՝ մեծ եղբայրս, թույլս եւ ես, լաց էինք լինում՝ մայրական գուրգուրանքի կարոտից: Նա մեզ հանգստացնում է, ինքն էլ լաց լինելով, ու հաց է տալիս: Հացը միշտ բերում է թելի տակ, գլխաշորի ծայրով ծածկած թելն ու հացը» (3):

Մանկության տարիներին հոտաղություն էր անում գյուղի հարուստների մոտ, երեխայի ուժերից վեր ամենատարբեր գործեր: Մորն օգնելու, մի կտոր հաց վաստակելու համար մեկնում էր շրջակա գյուղերը, հաճախ մոլորվում ճանապարհներից, գիշերում անտառներում ու ձորերում:

Այդ ծանր ու հոգեմաշ օրերի հիշողություններն ամբողջ կյանքում ուղեկցեցին գրողին, դարձան առանձին պատմվածքների նյութ...

Հայրենի գյուղում նախնական կրթություն ստանալուց հետո Ս.Այվազյանը սովորում է Գորիսի մանկավարժական տեխնիկումում, այնուհետեւ՝ որպես ուսուցիչ, աշխատում է շրջանի մի շարք գյուղերում, ինչը նրան հնարավորություն է տալիս մոտիկից ճանաչել իր ապագա ստեղծագործությունների հերոսներին, գրի առնել հետաքրքիր պատմություններ, ծանոթանալ գյուղաշխարհի մարդկանց կենցաղին ու բարքերին:

1942 թվականին ապագա գրողն ավարտում է Բաքվի պետական համալսարանի հայկական բանասիրական ֆակուլտետն ու անմիջապես մեկնում ռազմաճակատ:

Պատերազմի ավարտից հետո՝ մինչև 1952 թվականը, աշխատել է Բաքվի «Կոմկոմիստ» հայերեն թերթում, որը նույնպես կարելու շրջափուլ էր նրա կյանքում: Բազմաթիվ գործուղումներն ու շփումները

նրա մտածախարհի մարդկանց հետ նրան հնարավորություն են տալիս հետագայում ներկայացնելու այդ աշխարհի սահմեղեցուցիչ պատկերները՝ մարդկային խեղճած ճակատագրեր, կործանված երազանքներ, շահամոլության տենչ, հոգեկան ու ֆիզիկական անասելի տառապանքներ: Մի զարհուրելի աշխարհ էր մավթաշխարհը, որ սպունգի մանն ներծծում էր մարդկային բազմաթիվ կյանքեր, հաշմունք եւ դարձնում խեղանդամ: «Սեւ ոսկու» արտաքին փայլը կուրացնում էր նաեւ բազմաթիվ հայ տարագիրների, որ եկել էին Հայաստանի հեռավոր գյուղերից ու հայտնվել այդ աշխարհի հրեշավոր որոգայթներում:

1953թ. նա տեղափոխվում է Երեւան, ու նրա կենսագրության մեջ սկսվում է նոր շրջափուլ, որը հատկանշվում է ստեղծագործական արագավոր որոնումներով, հրատարակվում են նրա պատմվածքների ժողովածուները, վիպակներն ու վեպերը:

Որտեղ էլ որ ապրել է Ս.Այվազյանը, աշխարհի որ անկյունում էլ որ գտնվել է, հոգով ու սրտով մնացել է կապված իր ծննդավայրին: Հայրենի եզերքն է եղել նրա ստեղծագործական ներշնչանքների աղբյուրը, լեռնաշխարհի գույներն են հարստացրել նրա ներկայացումը:

Գրողի կենսագրության լավագույն էջերը նրա ստեղծագործություններն են, որոնց մեջ ամփոփված է մի ամբողջ կյանք, եւ որոնք լավագույնս են բնութագրում հեղինակին՝ որպես մարդու, արվեստագետի: Անչափ բարի ու համագյուղացիների հիշողություններում ազնվագույն մարդ էր Ս.Այվազյանը, իր ազնվական տեսքով ու վարվելակերպով՝ առիթնուղ ու գրավիչ: Աշխարհի շատ երկրներում էր եղել նա. «Ես ամբողջ աշխարհն եմ սիրում: Նվիրված ու հարազատ է ինձ Տազարի Բենգալիան: Երազում շրջում եմ Շիրազի վարդաստաններում, ուր Հաֆիզն իր գազելներն է հյուսել՝ տալով սոխակների երգի թուփչն ու վարդերի բուրբոլ: Գյոթեի երկրից սրով են եկել իմ դեմ, ես իմ արյունով եմ պաշտպանել նրա երգը: Ինձ հարազատ է ամբողջ աշխարհը: Բայց թե մեռնեմ էլ Բոհեմիայի անտառներում, ինձ կթաղեք Չանգեզուրում» (4), - իր մանրաքանդակներից մեկում այսպես է կտակել Ս.Այվազյանը:

Նա մահացել է 1981թ. մայիսին: Երախտագետ համագյուղացիները նրա աճյունն ամփոփել են Խնձորեսկ գյուղի՝ իր տնկած գեղատեսիլ այգում:

Ս.Այվազյանը թողել է գրական հարուստ ժառանգություն: Նրա առաջին գրական փորձերը 1930-ականների վերջերից տպագրվել են «Խորհրդային գրող» եւ «Յոկոնոմեր» ամսագրերում: Դրանք «Ժամանակի շնչին» համահունչ ակնարկներ, փոքրիկ պատմվածքներ ու արձակ մանրապատմություններ էին, որոնց մեջ, սակայն, կային հետաքրքիր ու թարմ պատկերներ, յուրահատուկ գույներ ու նրբորակներ:

1947 թվականին տպագրված պատմվածքների «Անավարտ գորգը» ժողովածուից հետո Ս.Այվազյանը հետագայում հրատարակել է «Խորածորից» (1951թ.), «Լեռնցիներ» (1955թ.), «Խիղճը» (1957թ.) պատմվածքների ժողովածուները, «Տուր ձեռքը, կյանք» (1959թ.), «Անշեջ կրակների կղզին» (1960թ.) վիպակները, «Բարի առավոտ» (1964թ.), «Ճակատագիրն հայոց» (1966թ.), «Առավոտ լուսու» (1976թ.) վեպերը (5): Հետմահու հրատարակվել է «Խնձորեսկ» վեպը՝ գրականություն բերելով մի ուրույն աշխարհ՝ իր անկրկնելի հմայքներով ու հրաշք բնությամբ, այդ բնության անբաժանելի մաս կազմող մարդկանցով՝ իրենց յուրահատուկ կենսափոխություններով, վարք ու բարքով, մարդու ու մարդկային, ժամանակի, կենցաղի վերաբերյալ իրենց ավանդական պատկերացումներով, ուղղամտությամբ, առաջին հայացքից իրենց կենսակերպի հետ հաշտված, բայց ներ-

քուստ ըմբոստ, ընդվզող բնավորությամբ առանձնացող իր հերոսներին, որոնք այդ լեռնաշխարհում արմատներով են կապված մայր հողին, ապրում են տիրոջ իրավունքով ու այդ լեռնաշխարհի «բռնածիներն» են:

Ակսել Բակունցի հայրենակիցն էր Ս.Այվազյանը, եւ նրա հերոսները, բնակամբար, չէին կարող մոտ կամ հեռավոր «ազգակցական կապեր» չունենալ Դիւան Դայու, Աթա ապր, Սինա Բիբու եւ բակունցյան ուրիշ հերոսների հետ, ինչը, սակայն, չի ենթադրում, որ նա գնում է իր հանճարեղ հայրենակցի հետքերով կամ կրկնում է նրան: Ս.Այվազյանի պատմվածքներում գրականագետներից շատերը տեսել են «Ա.Բակունցի արձակի չհարթահարված ազդեցություններ» (6): Գրականագետ Ս.Գիլավյանն այդ «ազդեցությունը» դիտարկում է տիպաբանական աղբյուրակետային ծիրում: Նա ժառանգորդական կապեր է տեսնում Ա.Բակունցի, Ս.Խանգադյանի, Յ.Սահյանի ու Ս.Այվազյանի ստեղծագործությունների միջև: Հարցին նա անդրադառնում է ոչ թե պատկերային համակարգի որոշ ընդհանրությունների, այլ տիպաբանական աղբյուրակետային եզրերի կտրվածքով, ինչը կապված չէ ուղղակի ազդեցության հետ, այլ երեւան է գալիս համանման գրական երեւույթների միջև, քանի որ աշխարհի ընկալումը եւ նրա գեղարվեստական դրսեւորումները ենթարկվում են որոշ օրինաչափությունների եւ հասարակական կյանքի ու գրական գործընթացի համանման պայմաններում առաջ են գալիս տիպաբանորեն իրար մոտ կամ իրար հետ համընկնող երեւույթներ:

Ս.Այվազյանի ստեղծագործությունների գործողությունները նույնպես ծավալվում են Սյունյաց աշխարհի հեռավոր, աշխարհից կտրված, բայց միաժամանակ մեծ աշխարհի հոգևերի տակ կքված գյուղում՝ խորածորում, ուր, ինչպես եւ Ա.Բակունցի Մթնածորում, ժամանակի չափման նվազագույն միավորը դարձ է, եւ ուր մարդու ու բնության բոլոր շնչավոր արարածներն ապրում են հաշտ ու խաղաղ, զարմանալիորեն ներդաշնակ կյանքով:

Ս.Այվազյանի ինչպես Խորածորը, այնպես էլ Շաղկոտն ու Արզումաշենը, Քարաշենն ու Կոռնիծորը նույն Մթնածորն ու Դրմբոնն են, Կյոթեցը՝ հասարակական-քաղաքական զարգացումների նոր ծիրում, նոր մտահոգություններով ու հին, շատ հին հոգևերով ու ցավերով:

Եվ ինչպես Կարմրաքարից դուրս եկող հանդամիջյան կածանն էր օրեցօր լայնանում ու դառնում բանուկ ճանապարհ՝ կարմրաքարիցներից տանելով դեպի աշխարհի տարբեր ծայրեր, այնպես էլ Խորածորն է կամեղ-կամաց դառարկվում, ու երբեմնի շեն բնակավայրից, որտեղ մի քանի եկեղեցիներ կային ու ծաղկում էին արհեստները, միայն քաղցր հուշեր են մնում Փրթոսի ընկուզենու ստվերում իրենց կյանքի մայրամուտն ապրող գյուղացիների պատմությունները:

Թե Բակունցի ժամանակներում եւ թե՛ խորհրդայնացման տարիներին, լեռնաշխարհի հեռավոր գյուղերը նույնպես մեծ ցնցումներ ապրեցին. մոռացության մատուցեցին հնուց եկող ավանդույթներն ու սովորությունները, փոխվեցին արժեհամակարգերը, եւ մարդը հայտնվեց իր համար խիստ անսովոր, նախադեպ չունեցող պայմաններում:

Այս համապատկերում պետք է գտնել Ա.Բակունցի, Ս.Խանգադյանի, Ս.Այվազյանի ստեղծագործական աղբյուրակետային եզրերը ու դրանց ներկայացնել տիպաբանական առնչությունների համապատկերում:

Ս.Այվազյանի գյուղաշխարհի բոլոր հերոսներն ունեն իրենց նախատիպերը, որոնց գրողը ճանաչում է մանկության տարիներին: Դրանք կյանքի ողջ դառնությունները տեսած, բոլոր փորձությունների միջով անցած, բայց իրենց մարդկային արժանապատվությունը պահպանած մարդիկ են, որոնք շատ թանկ ու հարազատ են գրողին: Ուշագրավ է այն է, որ այդ կերպարների մեծ մասը պատմվածքներից «տեղափոխվում են» վիպակներ, դառնում վեպի առանցքային հերոսներ, որոնց միջոցով գրողը ներկայացնում է ժամանակի շարժումը, գյուղաշխարհի կյանքի ամենաբնութագրական կողմերը: Եվ եթե

այդ կերպարները բնութագրվեն ոչ թե ըստ առանձին պատմվածքների, վիպակների ու վեպերի, այլ Ս.Այվազյանի ստեղծագործության ընդհանուր համապատկերում, հնարավորություն կտան բացահայտել գրողի արձակի կերպարակերտման ու ձեւակառուցվածքային առանձնահատկությունների բնորոշ շատ կողմեր:

Քննադատությունը Ս.Այվազյանի վաղ շրջանի պատմվածքներում, որոնք նվիրված են Հայրենական մեծ պատերազմի դեպքերին, հիմնականում հայտնաբերել է «գեղարվեստական լուրջ թերություններ»՝ հերոսների գծագրության սխեմատիզմ, դիպլոմատիկ մախախտություն, գրելաձեւի անբնական շերտեր»: Նման կարգի թերություններ են մատնանշվել վիպակներում ու վեպերում. «Լեռնցիները» վեպում ապավինելով սխեմային՝ Ս.Այվազյանը հասարակացրեց գյուղական իրականության բարդությունները՝ դրանք մարդկանց հասարակական գործունեությունից տեղափոխելով կենցաղային խճճված, սասանաբնական հարաբերությունների ոլորտը»: Ս.Այվազյանի մեծ կտավի ստեղծագործություններում քննադատությունը մատնանշում է նաեւ «այուժեի ու կերպարների միասնության բացակայություն, կոնֆլիկտի մակերեսային ըմբռնում, հոգեբանական կեղծ դրություններ...» (7):

Քննադատության այսպիսի դիրքորոշումն, անշուշտ, պայմանավորված էր 1940-1950-ականների սկզբներին գրականությանը ներկայացվող պահանջներով, որոնց լույսի տակ կերպարները պետք է ներկայացվեին հասարակական գործունեության համապատկերում, բեւեռացվեին դրական ու բացասականի ծիրում եւ ոչ թե «կենցաղային խճճված հարաբերությունների ոլորտներում»: Այլ կերպ լինել չէր էլ կարող, որովհետեւ «անցյալի մնացուկներ էին համարվում գրականության մեջ հերոսի ինքնագնումը, հոգեբանական վերլուծությունը, որ իբրեւ «խորհրդային մարդը չէր կարող ունենալ մերթից որեւէ կոնֆլիկտ»: Եվ բնական է, որ «ճշմարտության արտահայտման որոշ որոշոցում փորձերը դիտվում էին որպես զրպարտագիր, մարդու ներքին աշխարհի վերլուծությանը հետամուտ յուրաքանչյուր գիրք համարվում էր «պսիխոլոգիզմի արտահայտություն», գրական ձեւի նորացման ամեն մի երեւույթ՝ ֆորմալիզմի ու անհատապաշտության դրսեւորում» (8):

Այս ամենին հակառակ, Հր.Թամրազյանը Ս.Այվազյանի՝ թերեւս վաղ շրջանի ստեղծագործություններում առանձնացնում է «մի շարք նովելների բնականությունն ու գեղեցկությունը, բնության պատկերներն ամբողջականություն, հոգեբանական առանձին նրբերանգներ, մարդու արժեւորման ժողովրդական չափանիշներ, մարդկային հարաբերությունների գեղեցկություն» (9):

Ս.Այվազյանին թեպետ բուռնից դիտարկումներով, բայց ըստ արժանվույն է գնահատում Ս.Արզումանյանը. «Մասնավորապես «Ճակատագիրն հայոց» պատմվածքն առանձին միանգամից ընդարձակ գրողի տեսադաշտը, մղեց լայն ընդգրկվածների, կայուն դարձրեց գրիչը: Ս.Այվազյանն այնուհետեւ մեկը մյուսի հետեւից հրատարակեց «Կա ետմահու կյանք», «Առավոտ լուսու», «Խնձորեսկ» ստեղծագործությունները: Անցյալի թեմատիկայի գեղարվեստական այս յուրացումներում, ժանրային ոչ միասնական հատկանիշներով հանդերձ, հեղինակը ներկայացավ ավելի հասուն, ավելի ամբողջական բնավորությամբ: Խորացավ հարցադրումները, վարպետացավ հոգեբանական նրբերանգների եւ դիտողական արվեստի մեջ: Մի խոսքով՝ գրողի նրա ձեռագիրը, գրական անհատականությունը հաստատվեց մեր ժողովրդի հեռավոր ու մոտիկ պատմության գեղարվեստական խտացումներով» (10):

Ս.Այվազյանի առանձին գործերի վերաբերյալ գրվել են հոդվածներ, գրախոսություններ, գրապատմական որեւէ շրջան ակնարկային ձեւով ներկայացնելու համար հիշատակվել է նաեւ նրա անունը, ինչը, սակայն, բավարար չէ գրական հարուստ ժառանգություն ունեցող գրողին պատշաճ կերպով ներկայացնելու համար:

1. Գիլավյան Մ., Փոքր արձակի մեծ



փոխվում է երեւան եւ բուն թափով նվիրվում ստեղծագործական աշխատանքին:

1955 թվականին լույս տեսած նրա «Լեռնցիներ» վեպն արդեն ուշագրավ երեւոյթ էր հայ գրականության մեջ:

Դրանից հետո մեկը մյուսի հետեւից լույս են տեսնում «Խիղճը» (1957), «Տուր ձեռքդ, կյանք» (1959), «Անշեշ կրակների կղզին» (1960), «Բարի առավոտ» (1964) պատմվածքները, վիպակներն ու վեպերը:

1966 թվականին Սուրեն Այվազյանը հրապարակ է հանում իր նշանավոր գործերից մեկը՝ «Ճակատագիրն հայոց» պատմվածքը, որը մեծ հռչակ է բերում հեղինակին: 1971-ին հրատարակվում է «Կա եւ հետմահու կյանք» ինքնատիպ ստեղծագործությունը: 1972 թվականին լույս է տեսնում վարպետ արձակագրի

**Տիկնոջ՝
Հռիփսիմե՝
Կարապետյանի
հետք**

«Գարունս ծյունների տակ» խոհափիլիսոփայական արձակ բանաստեղծությունների ժողովածուն:

1976-ին Այվազյանը հրատարակում

լիքներով՝ ցուցաբերելով նաեւ իր գրական-ստեղծագործական շնորհները: Նա այս եւ հետագա տարիներին (1930-1940) Գորիսի շրջանային «Կարմիր Ջանգել» թերթում տպագրում է մի շարք ոտանավորներ, գրական պատկերներ:

1934-ին ավարտելով մանկավարժական տեխնիկումը՝ Այվազյանն աշխատում է Գորիսի շրջանի Խանածախ եւ Տեղ գյուղերում հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ:

Հատկանշական է, որ մանկության եւ պատանեկության դժվարին տարիներից ստացած տպավորությունները նրան ուղեկցել են ողջ կյանքի ընթացքում: Այդ դժվարին ու տառապալից ժամանակները միշտ էլ տխուր հիշողություններ են արթնացրել գրողի հոգում:

Այդ տպավորությունների արտահայտություններ են նրա «Տուր ձեռքդ, կյանք», «Ասուր, հե՛յ, Ասուր», «Խնձորեսկ» ստեղծագործությունները:

1937 թվականին Սուրեն Այվազյանի մի քանի ուշագրավ պատմվածքներ տպագրվում են «Խորհրդային գրող» եւ «Հոկտեմբերիկ» ամսագրերում:

1937 թվականի աշնանը Սուրեն Այվազյանը մեկնում է Բաքու, ընդունվում Կիրովի անվան պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը եւ 1942 թվականին ավարտելուց անմիջապես հետո զորակոչվում խորհրդային բանակ, մասնակցում Հայրենական մեծ պատերազմին:

Ծանր վիրավորվելուց հետո Այվազյանը վերադառնում է Բաքու եւ ապաքինվելուց հետո աշխատանքի անցնում Բաքվի՝ հայերեն լույս տեսնող «Կոմունիստ» թերթում: Այստեղ էլ ամբողջությամբ նվիրվում է գրական-ստեղծագործական աշխատանքի: Պատմվածքների առաջին հավաքածուն լույս է տեսնում 1947 թվականին՝ «Անավարտ գորգը» խորագրով: 1951 թվականին գրողը տպագրում է իր «Խորածորցիք» վիպակը:

1953 թվականից մշտապես տեղա-



**Սուրեն Այվազյանի որդին՝
Ավետիք Այվազյանը**

է իր նշանավոր «Առավոտ լուսո» վեպը: Հետմահու լույս են տեսնում Այվազյանի «Խնձորեսկ» եւ «Ասուր, հե՛յ, Ասուր» ինքնակենսագրական գրքերը:

Այվազյանն ամուսնացել է երկու անգամ:

Առաջին կնոջից՝ ծագումով արցախցի Մարգոյից, ունեցել է երեք զավակ՝ երկու աղջիկ, մեկ տղա:

Երկրորդ կնոջից՝ թարգմանչուհի Հռիփսիմե Կարապետյանից, ունեցել է մեկ զավակ՝ Ավետիք Այվազյանը:

Այվազյանի գրքերը թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով, այդ թվում՝ ռուսերեն, ուկրաիներեն, պարսկերեն, բուլղարերեն:

Նշանավոր գրող մահացել է 1981 թվականի մայիսի 19-ին: Թաղված է հայրենի գյուղի իր առանձնատուն-թանգարանի բակում:

ԻՄ ՄԵԾ, ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՀՈՐԵՂԲԱՅՐԸ

էջ 19 **Մ**ի ավելի հին եկեղեցի կա, որ կոչվում է Հին եկեղեցի: Գնում ենք այնտեղ: Եկեղեցին փլվել վերածվել էր մի քարայրի: Գրողը երկու հոգու փող էր տվել, որ եկեղեցի-քարանձավը հիմնահատակ մաքրեն: Ճանապարհին հանդիպում ենք գյուղի տարեց մարդկանցից մեկին՝ Կյալունց Արմենակին: Բայց մինչեւ Արմենակին հասնելը հորեղբայրս կռացավ ու ականջիս լրջորեն ասաց.

- Վանիկ, դու Կանտ, Հեգել, Ֆոյերբախ անուններ լսած կա՞ս:

- Հա, իհարկե, հորեղբայր, դրանք հայտնի փիլիսոփաներ են:

- Ահա, այս մարդն էլ, - մտաղ դեպի Արմենակը մեկնելով ասաց գրողը, - թո Կանտից ու Հեգելից պակաս փիլիսոփա չէ:

Գրողն այդպիսի մարդկանց, որ հանդիպում էր, ժամերով խոսքի էր բռնվում նրանց հետ ու չէր կշտանում:

Տասնյակ անգամներ պատահել է, որ հորեղբորս հետ գնացել եմ գյուղի այգիները, գիշերները մնացել այնտեղ: Գրողը մայրն էր այգու ծառերի նուրբացած շարքերին, որոշ ամայացած տարածքների եւ գլուխը բացասաբար շարժում.

- Բա մեր պապերն այսպե՞ս կպահեին մեր այգիները:

Ես հետո կարդացի նրա «Խռոված հողեր» ակնարկների շարքը, հասկացա, թե խոսքն ինչի մասին է եւ որ այդ հարցը հեղինակին մտահոգել է ողջ կյանքի ընթացքում:

Ջարմանալի մարդ էր հորեղբայրս: Երեխայի մեծ պատկառում էր բոլոր իրենից տարիքավորներից, նույնիսկ ամաչում էր հորիցս՝ իրենից ավագ եղբորից:

Միշտ ասում ու կրկնում էր.

- Սերգո, դու ինձանից երջանիկ ես:

Հորեղբայրս երեւի նկատի ուներ իր հոգեկան ապրումներն ու ստեղծագործական տառապանքները:

Գյուղիցստիտուտի երկրորդ կուրսի ընթացիկ քննությունների ժամանակ փիլիսոփայություն առարկայից «երկու» ստացա: Հորեղբայրս իմացել, ջղայնացել էր: Միասին գնացինք ինստիտուտ՝ փիլիսոփայության ամբիոն: Ամբիոնի դասախոսները եկել հավաքվել էին գրողի շուրջը: Այվազյանը դիմեց ոչ թե «երկու» նշանակող դասախոսին, այլ բոլորին.

- Այս երիտասարդը եղբորս՝ իր փիլիսոփա հոր տղան է: Եթե ինձ հաշվի չեք առել, գոնե հաշվի առնե՛ք նրա փիլիսոփա հորը:

Դրանից հետո բոլորն իմացան, որ Այվազյանն իմ հորեղբայրն է, դա քիչ բան չէր ինձ համար:

Սուրեն Բախշի Այվազյան

Հայ նշանավոր արձակագիր Սուրեն Այվազյանը ծնվել է 1915 թվականի հունվարի 9-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում:

Դեռեւս վաղ մանկությունից ապագա գրողը ճաշակում է որբության բոլոր դառնությունները: Նա չորս տարեկան էլ չկար, երբ 1919 թվականին մեռնում է հայրը:


Ընչազուրկ ընտանիքը պահել-պահպանելու ծանր հոգսերն ամբողջությամբ ծանրանում են այրի Բոխչագյուլի ուսերին: Մայրը գյուղի ունեւորների եւ հարուստների տներում հաց է թխում, վրացք է անում, որ խնամի իր երկու որբին՝ Սերգոյին, Սուրենին: Դեռ նոր տառաճանաչ ավագ եղբայրը՝ Սերգոն, շուտով կտրվելով ուսուցումից՝ գնում է գյուղի տավարը պահելու՝ դառնալով մոր հույսն ու ապավենը: Ուսումնասեր մայրը, սակայն, հաղթահարելով կյանքի բոլոր դժվարությունները՝ փոքր որդուն՝ Սուրենին, չի կտրում ուսումից:

Փոքրիկ Սուրենը, հաղթահարելով որբ երեխային բաժին հասած բոլոր տառապանքները, գերազանց առաջադիմությամբ ավարտում է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցը եւ 1930 թվականին ուսումը շարունակում Գորիսի մանկավարժական տեխնիկումում: Ուսումնառության տարիներին Ասուր-Սուրենը փայլում է իր գիտե-

վարպետը, «Գրական թերթ», 2015թ., 10 հուլիսի:
2. Այվազյան Ս., Խնձորեսկ, Երեւան, Սովգրո, 1982:
3. Նույն տեղում:
4. Այվազյան, Բարի առավոտ, Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 397:
5. Ավելի մանրամասն տես՝ Ով ով է. հայեր, կենսագրական հանրագիտարան հ. 1, Երեւան, 2005, Գրական տեղեկատու, Երեւան, 1982:
6. Տես՝ Հայ սովետական գրականության պատմություն, հ. 2, էջ 434:
7. Ավելի մանրամասն տես՝ «Սովետահայ գրականության պատմություն», հ. 2, Երեւան, 1986:
8. Աղաբաբյան Ս., Արդիականություն եւ գրականություն, Երեւան, 1965:
9. «Սովետահայ գրականության պատմություն», էջ 434-436:
10. Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, Երեւան, Սովգրո, 1986, էջ 178-179:

Սուրեն Այվազյանի երկերի ցանկը

- Անավարտ գորգը (պատմվածքներ), Բաքու, «Ազերնեշր», 1947, 126 էջ:
- Խորածորցիք, Բաքու, «Ազերնեշր», 1951, 246 էջ:
- Լեռնցիներ (վեպ), Երեւան, «Հայպետհրատ», 1955, 154 էջ:
- Խիղճը (պատմվածքներ), Երեւան, «Հայպետհրատ», 1957, 267 էջ:
- Տուր ձեռքդ, կյանք (վիպակ, պատմվածքներ), Երեւան, «Հայպետհրատ», 1959, 278 էջ:
- Անշեշ կրակների կղզին (վիպակ, պատմվածքներ, գրույցներ), Երեւան, «Հայպետհրատ», 1960, 160 էջ:
- Տուր ձեռքդ, կյանք, երկրորդ մաս, Երեւան, «Հայպետհրատ», 1961, 280 էջ:
- Նախագահը, Երեւան, «Հայպետհ-



- րատ», 1961, 33 էջ:
- Տուր ձեռքդ, կյանք (վեպ), Երեւան, «Հայպետհրատ», 1962, 326 էջ:
- Հովիվը, Երեւան, «Հայպետհրատ», 1960, 40 էջ:
- Բարի առավոտ (վեպ), Երեւան, «Հայպետհրատ», 1964, 474 էջ:

2. Ջրաղացի ճանապարհին (պատմվածք), Երեւան, «Հայպետհրատ», 1964, 48 էջ:
3. Ճակատագիրն հայոց (վեպ), Երեւան, «Հայաստան», 1966, 800 էջ:
4. Ճակատագիրն հայոց (վեպ), Երեւան, «Հայպետհրատ», 1967, 793 էջ:
5. Բարձունքի վրա, Երեւան, «Հայաստան», 1969, 24 էջ:
6. Կա եւ հետմահու կյանք (վիպակներ, պատմվածքներ, մանրապատումներ), Երեւան, «Հայաստան», 1971, 372 էջ:
7. Գարունս ծյունների տակ (գրական մանրապատումներ), Երեւան, «Հայաստան», 1972, 98 էջ:
8. Առավոտ լուսո (վեպ), Երեւան, «Հայաստան», 1976, 570 էջ:
9. Խնձորեսկ (վեպ), Երեւան, «Խորհրդային գրող», 1982, 493 էջ:
10. Ասուր, հե՛յ, Ասուր (վիպակ), Երեւան, «Խորհրդային գրող», 1985, 213 էջ:
11. Ճակատագիրն հայոց (վեպ), Երեւան, «Խորհրդային գրող», 1989, 954 էջ:

Կյանքի ուղին

Մասնագիտություն

Գեղարվեստական խոսքի սահմաններից դուրս

Սուրեն Այվազյանը պարասխանում է «Սովետական գրականություն» ամսագրի հարցերին

1. Յոթ տարի է անցել Հայաստանի գրողների նախորդ համագումարից: Ձեր կարծիքով ի՞նչ ուշագրավ գործեր են գրվել այդ տարիներին: Ի՞նչ սպասելիքներ ունեք հերթական համագումարից: Ստեղծագործական ի՞նչ հարցերի վրա կուզենայիք, որ համագումարը սրեր ուշադրությունը:
2. Վերջին տարիներին մեր գրականությունը շատացավ նոր անուններով ու նոր գրքերով: Ինչպիսի՞նք եք գտնում երիտասարդական պոեզիան եւ արձակը:
3. Մեր գրականության ավանդներից որո՞նք են հարազատ Ձեր ստեղծագործական նախասիրություններին: Ձեր ամենօրյա կյանքում ինչպիսի՞ նոր երևույթների եք շփվում, որոնք ենթակա են առաջնահերթ գեղարվեստական պատկերման:

Հարգելի խմբագրություն, դուք ինձ հարցնում եք, թե ի՞նչ սպասելիքներ ունեմ Հայաստանի գրողների համագումարից: Եթե այստեղ էլ անկեղծությունն անհրաժեշտություն է, ապա ես պիտի ասեմ, ոչ մի սպասելիքներ: Երբեք համագումարները ոչ գրականություն են ստեղծում, եւ ոչ էլ նպաստում են ստեղծելուն: Եթե իրոք նա մեծ նշանակություն ունենար, յոթ տարի ընդմիջում չէր լինի: Համագումարը ձեռնարկ է: Նա կարող է գրականությունը ղեկավարելու ինչ-որ նոր ուղիներ նշել, որը սակայն ղեկավարների պետք է կլինի: Իսկ ես չեմ ընդունում գրականության ղեկավարումը: Գուցե ես այս եզրակացության եմ եկել Հայաստանի գրականությունը ղեկավարողների արտասովոր ոճից ելնելով... 2օգիտեմ ինչպես է ուրիշ տեղերում...

Համեմայն դեպս ես կցանկանայի, որ այս համագումարն իր ուշադրությունը սրեր գրողներին ավելի մեծ իրավունքներ տալու հարցի վրա: Սովետական Միության բոլոր գրողներին միեւնոյն իրավունքներից օգտվելու հարցի վրա: Հրատարակչությունների եւ հեղինակների միջեւ կնքվող պայմանագրերում հեղինակներին էլ որոշ իրավունքներ տալու հարցի վրա: Գրական կուլտիկների հարցի վրա, որոնք ստեղծվում են մեղ հանգամանքներում... Իսկ Հայաստանի կենտրոնական կոմիտեն խրախուսում է դա:

Ձեր մյուս հարցն է, թե ես ինչպես եմ զնահատում երիտասարդական պոեզիան եւ արձակը:

Անպայման երիտասարդությունը թարմություն է բերում: Դա բնական է: Ցավալիկն նախ այն է, որ լայն ճանապարհ չի տրվում այդ երիտասարդներին: Գրաքննադատությունը նրանց պահում է փակվածության մեջ: Փառանդությունը, որ նման է գայլուկի, միշտ փաթաթվում է մատղաշ ծիլերին եւ պահում սովորի տակ: Իսկ մեզ մոտ փառանդ գրողներ կան եւ, այսպես ասած, քննադատներ:

Ապա ցավալիկն այն է, որ այդ երիտասարդ գրողների մոտ խիստ նկատելի է նորարարության մարմաջը: Եվ այնուամենայնիվ, չկա նորարարություն: Օտար գրականության ձեւեր ընդօրինակելը նորարարությունն է: Նորարարությունը պետք է բխի ազգային ձեւից եւ բովանդակությունից: Այդպիսի անտեղի որոնումներն անխուսափելի կործանման կտանեն երիտասարդ գրողին:

Մեր գրականության մեջ նոր անուններ են հայտնվել: Գրական այդ երիտասարդությունն անշուշտ իր հետ թարմություն է բերում: Ողջունելի է բոլոր այն լավը, որ նրանք բերում են


իրենց հետ: Սակայն նկատելի է, որ այդ երիտասարդներից ոմանք տարված են նորարարության մարմաջով: Տարված են, բայց չկա այդ նորարարությունը: Երբեք էլ նորարարություն չէ այլ ժողովուրդների գրական ձեւերը կրկնելու ճիգերը: Ամեն մի ժողովուրդ ունի իր ազգային ձեւերը, եւ այդ ժողովուրդի ստեղծագործությունը դրանով է գեղեցիկ, դրանով է հետաքրքիր:

Հայկական պատմվածքը մեծ ճանաչում է գտել: Եթե օտար ընթերցողներից հարցնենք, թե ինչն է ձեր ուշադրությունը գրավել հայկական պատմվածքը, նրանք ամենից առաջ կթվեն այն բոլորը, ինչը միայն հայկական է:

Կան նաեւ երիտասարդ գրողներ, ովքեր ընդհանրապես ձեւ չեն ընդունում, ձեւ համարում են անձեռնդրելի: Վերջերս «Գրական թերթ»-ում կարդացել եմ մի ստեղծագործություն, որը ոչ օտար, ոչ հայկական որեւէ ձեւի չէր ենթարկվում: Դրա համար էլ այն պարզապես ռեբուսի տպավորություն էր թողնում, այն տարբերությամբ, որ այնուամենայնիվ ռեբուսը լուծելի է, իսկ սա... Այդտեղ հասկանալի բաներ էլ կային, սակայն մի՞թե գեղարվեստական խոսքի ուժը խիստ դժվար ընթացելիության կամ կռահումներով գտնելու մեջ է: Աշխարհում անուն համաժողովրդ գրողներն ամենից առաջ հայտնի են իրենց պարզությամբ (ոչ պարզունակությամբ) եւ դրա հետ միասին՝ խորիմաստությամբ:

Ցանկալի է, որ գրողների համագումարը շոշափի այս կարեւոր հարցը: Միանգամայն անհրաժեշտ է, որ համագումարը նշի գրականությունը ճիշտ ղեկավարելու ուղիները: Որոշ սնապարծներ փառքի արհեստական աստիճաններ ստեղծելով, ձգտում են այդ արհեստական բարձունքներից արհամարհանքով նայել ստեղծագործական կոլեկտիվի վրա: Բոլոր փառանդներն իրենց ճանապարհը հարթելու անսպառ ուժ են ունենում, եւ երբեմն նրանց հաջողվում է այդ կեղծ տեղաբաշխումներում ոչ միայն իրենց հատկացնել կենդանի կլասիկի պատկազարդ բազկաթոռը, այլեւ հանդես գալ որպես գրականության առաջնորդ:

Մենք ապրում ենք գրական միությունում, ստեղծագործական մի ընտանիքի մեջ եւ չենք կարող չհուզվել այսպիսի արատավոր երեւույթներից:



Թանկագին Գուսան Աշուր

Սուրեն Այվազյանի նամակը Գուսան Աշուրին

Ասում են երաժշտությունն ամենահոգեզմայլն է, ազնվագույնը, ամենասրտագինը, ամենաքանցելիին այն ամենի մեջ, որ ստեղծել է մարդկային հոգին: Դա իրոք այդպես է: Երաժշտության մոզական ուժի մասին բազմաթիվ հեքիաթներ կան հյուսված են լեզուններ: Այդ հեքիաթներում ու լեզուններում երաժշտությունը ոչխարների սանդուղքներով վեր է բարձրացնում, օձը հնայվում, հնազանդվում է մարդուն, քարը ճաքում է, հոսող ջրերը կանգ են առնում, երգում է մահվան դատապարտված, եւ արնախում դահճի սիրտը ճաքում է:

Հիսուն տարի դու, քո հորինած երգերով, երաժշտությամբ շատ սրտեր ես նվաճել: Երաժշտությամբ սրտեր նվաճել նշանակում է նրբացնել, քնքշացնել մարդուն, մարդուն ավելի մարդկայնացնել: Երգը, երաժշտությունը եսամոլից, դաժանից մի քիչ մեղմացնում, մի քիչ մարդամոտ են

դարձնում, մի քիչ չափավորում են ազաի փառանդի կրքերը, իսկ իսկական մարդուն լցնում կյանքով, եռանդով, թեթևացնում նրա հոգսերը, դարձնում նրան ավելի շատ հասարակական մարդ:

Սիրելի Գուսան, քո հորինած երգերն ինքնատիպ լինելով հանդերձ սնունդ են առել մեր հին գուսանական ու ժողովրդական երգակունքներից, դրա համար էլ նրանք երկարակյաց են, հուզող են, դրա համար էլ քո թախիծը թախիծ է, ոչ նվճվող, եւ հոգեպարար է:

Քո երգերը բույրեր ունեն: Դրանք մեր սիրտ ունեցող ժայռերի, քարերի բույրերն են, մեր մտքի մեջ հավետ բանող մեր ջաղացների, ջաղացպանների, աղունավորների բույրերն են: Մեր խմոր հունցող, հաց թխող, սարվոր աղջիկների թոնրաբույրն է, պրաբույրը, կաթնաբույրն է: Մեր կրակ սրտով սիրող տղաների սիրաբույրն է:

Սիրելի Գուսան, քո երգերը մենք ոչ միայն լսում ենք, երգում ենք, նաեւ տեսնում ենք: Տեսնում ենք «Սյունյաց սարերը», որ քաջերի օրորան են, նաղաշյան նախշեր ունեցող նրանց ծաղիկները, նրանց յայլաղների երան դարձած ծխերը եւ կապույտ-կանաչ մշուշների միջից երեսացող այն սարվոր աղջիկներին, որ իրենց հնայքներով վառել են քեզ, մեզ, բոլորին: Տեսնում ենք հովվական օջախների այն կրակները, որ երկնային լուսատուների են մնան, բայց որոնց շուրջը հյուսվում է հողեղեն սիրո հեքիաթը:

ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Հին Խնձորեսկը՝ գեղանկարներում

Հին Խնձորեսկը: Գեղանկարը՝ Այվազյանի: Սարդարյանի:

Սուրեն Այվազյանի հայրական փունջը հին Խնձորեսկում: Գեղանկարը՝ Գ.Պարոնյանի, 1959թ.





ՎԱՆԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ. «Պարասպ եմ Սուրեն Այվազյանի առանձնատունը նվիրաբերել Խնձորեսկի գյուղապետարանին՝ գրողի փուն-թանգարան դարձնելու պայմանով»

Սուրեն Այվազյանին նվիրված թերթային համարի նախապարասպության ընթացքում անհրաժեշտ համարեցինք գրուցել նաև գրողի եղբորորդու՝ Վանիկ Այվազյանի հետ, ով բնակվում է գյուղում և առավել քաջատեղյակ է գրողի փուն ողիսականին: Խոսքը, իհարկե, գրողի հայրական փուն մասին չէ, որտեղ ինքը ծնվել է: Ըստ Արկադի Ծափուրյանի՝ հայրական փունը հին գյուղի թաղամասերից մեկի քարափին էր: Երբ գյուղը փեղափոխվեց վերին փափարակ (ներկայիս փեղք), Սուրեն Այվազյանն էլ ցանկություն ունեցավ հայրենի գյուղում փուն կառուցել: Եվ կառուցեց երկհարկանի հարմարավետ փուն՝ Խնձորեսկի հին փներին հարուկ հարմարություններով: Դեպքում պարզ դարձավ, որ Այվազյանը փունը կառուցել է թանգարան դարձնելու մտադրությամբ. հավաքում է առաջին հարկի սենյակներում պահպանում էր հին իրեր:



Սուրեն Այվազյանի շիրիմը

– Դարգելի Վանիկ, Սուրեն Այվազյանի գրական ժառանգությունը վերաբերելու, նրա հիշատակն ըստ պատշաճի հավերժացնելու, նրա գրական ժառանգությունն աճող սերնդին հասցնելու փոխարեն վերջին տարիներին ավելի շատ քննարկում ենք նրա խնձորեսկյան առանձնատան խնդիրը: Այսօր եղել ենք այդ տանը, այցելել Այվազյանի գերեզման, շրջազայել այգում: Ենթադրելով, կարելի է ասել, ձեռքից գնում է: Անտարբերության ես մի քանի տարի, ես կունենանք փլուզված կամ փլուզման եզրին հասած բնակարան: Կուզենայինք իմանալ այդ առանձնատան ներկայիս կարգավիճակը և դրա հետ կապված Ձեր ծրագրերը: – Նախ՝ Ձեր դիտողության մասին: Այո, անցած տարիներին ավելի շատ պետք է զբաղվեինք Սուրեն Այվազյանի գրական ժառանգության արժեւորմամբ, նրա հի-

շատակի հավերժացմամբ: Դրանով պիտի զբաղվեին, նախեսառաջ, գրական, մշակութային կազմակերպությունները, գրականագիտական շրջանակները, իշխանությունները, բայց... Արկադի Ծափուրյանը հրատարակեց «Մեր Այվազյանը» գիրքը (Երևան, «Գրիգոր Տաթևացի», ԳՊՀ հրատարակչություն, 2012թ.), Մուսկվայում լույս տեսավ «Ճակատագիրը հայոց» վեպի ռուսերեն տարբերակը (Ռոսիա՝ Վոստոկ Վոստոկ, 2008), լույս տեսան հատուկ ներդրումները: ԳՊՀ ԱՄՄ Ա.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ էմմա Նիկոյանը պաշտպանության է ներկայացրել «Սուրեն Այվազյան (կյանքը և ստեղծագործությունը)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը (ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գիլավյան, ում մեր

երախտագիտությունն ենք հայտնում): Ենթադրելով, կառուցվել է 1970-ականներին, շինարարության ավարտից հետո, երբ ներքին հարդարման աշխատանքներ էին կատարվում, հրդեհ բռնկվեց: Կրակի ճարակ դարձավ նաև տան գույքը: Նորից վերաշինվեց տունը: Սուրեն Այվազյանն առանձնատունը կտակել էր որդուն՝ Ավետիսին՝ «Տունն ամբողջությամբ կտակում եմ իմ որդի Ավետիսին, որպես տուն-թանգարան, որը վաճառքի ենթակա չէ»: Կտակը հավանաբար գրվել է մահվանից մեկ տարի առաջ՝ 1980-ին: Այդ կտակի մասին իմացանք մահվանից մի քանի տարի հետո: – Իսկ մինչև կտակի մասին իմանալը... – Մինչև կտակի մասին իմանալը գյուղական սովետը, կարելի է ասել արիեստա-

կանորեն, շենքը գրանցեց իմ անվամբ և որպես իմ սեփականություն: Տարիների ընթացքում ձգտել եմ հնարավորության սահմաններում պահպանել շենքը, տարածքը, նաև Սուրեն Այվազյանի անունն ու շիրիմը: Ավետին չեմ կարողացել անել, նման միջոցներ չեմ ունեցել, հիմա էլ չունեմ: – Ինչպե՞ս արձագանքեց Ավետիսը հոր կտակին, երբ իմացավ այդ մասին: – Ինքն էլ այդ կտակի մասին հետո իմացավ, ինչպես մենք: Նորմալ է վերաբերվում այդ ամենին: Ես խնդիր չունեմ, թող վերցնի... Միայն թե տունը պետք է մնա որպես Այվազյանի տուն... այլ կերպ թույլ չեմ տա: – Զենք կարծում, որ, թեկուզե՞ մտովի, կարելի է քննարկել առանձնատան վաճառքի տարբերակը. չէ՞ որ բակում Սուրեն Այվազյանի գերեզմանն է: – Ճիշտ հարցադրում եք անում, ինչը նշանակում է, որ շենքի վաճառքը բացառվում է: Վաճառել՝ նշանակում է անտես անել նաև գրողի կամքը: Պատրաստ եմ Սուրեն Այվազյանի առանձնատունը նվիրաբերել Խնձորեսկի գյուղապետարանին և դարձնել համայնքային սեփականություն՝ տուն-թանգարան դարձնելու պայմանով: Նրա անունն ընդմիջտ պիտի հիշվի. դա է իմ ձգտումը: Երեւանի բնակարանը տիկին Յուլիանի մահվանից հետո վաճառվեց (Օրբելի փողոցում էր): Գորիսի բնակարանը նրա մահվանից հետո վերցրին, եղած գույքն էլ ամանոթաբար բերեցին և թափեցին մեր բակում: Ես հետ տարա գույքը և նույն կերպ թափեցի գործկոմի բակում... Դա իսկապես անոթալի պատմություն է: Գոնե գյուղի տունը պիտի պահպանվի որպես հիշողություն Սուրեն Այվազյանի մասին, մանավանդ որ շիրիմը շենքի բակում է: – Ի՞նչ ճակատագիր ունեցավ գրողի տան գույքը. չէ՞ որ Այվազյանն այնտեղ հնությունների մեծ հավաքածու ունեցրել է: – Գրադարանը (նաև Գորիսի բնակարանի գրադարանը) տիկին Յուլիանից տեղափոխեց Երևան, որոշ իրեր՝ նույնպես, իսկ թե ինչ ճակատագիր ունեցան նրա մահվանից հետո, չգիտեմ: Գրողի տան գույքը ես հատկապես հնությունները, գեղանկարները տնօրինեց մյուս որդին՝ Նաիրին (առաջին կնոջից ծնված), ով հայ-աղբերջանական վերջին բախումների ժամանակ տեղափոխվել էր Բաքվից և բնակվում էր այդ տանը: Նաիրին հիվանդ էր, մահացավ վաղաժամ, թաղված է գյուղի գերեզմանատանը: – 1981 թվականին Դուք արդեն 30 տարեկան էիք, ես որպես Սուրեն Այվազյանի հարազատ, գերդաստանի ներկայացուցիչ, հավանաբար հիշում եք գրողի թաղման հետ կապված հանգամանքները: Մեզ հատկապես հետաքրքրում է այսպիսի մի հարց. ինչպե՞ս, ո՞ւմ առաջարկությամբ որոշվեց, որ Սուրեն Այվազյանը հողին հանձնվի իր տան բակում: – Ճիշտ է, այդ ժամանակ արդեն կար Պարույր Սեւակին իր առանձնատան բակում հողին հանձնելու նախադեպը, բայց, միևնույն է, Խնձորեսկում ես առհասարակ Գորիսի տարածաշրջանում դա նախօրինակը չունեցող երևույթ էր: – Մահացավ Երևանում, կազմվեց կառավարական հանձնաժողով, երկրի բարձրագույն ղեկավարությունը ցավակցական խոսք հրապարակեց: Սակայն մեզ ասացին, որ աճյունը գյուղ են բերում և գյուղում են հողին հանձնելու՝ հաշվի առնելով նաև նրա կտակը՝ «Գրադարաններ իմ բարի, ուր էլ մեռնեմ աշխարհում, ինձ կթաղեք Ջանգեզուրում»: Բայց թե ում առաջարկությամբ և ինչ հանգամանքների թելադրությամբ այդպիսի որոշում ընդունվեց, չգիտեմ: Իհարկե, կարելի էր ես գյուղի հասարակական գերեզմանատանը հողին հանձնել, ինչը նույնպես նրա պատվիրանի կատարում կնշանակեր: Սուրեն Այվազյանի թաղման ամբողջ արարողությունը ձայնագրվեց ու տեսագրվեց: Ցավոք, ձայնագրությունն ու տեսագրավեցը նույնպես չկան, միգուցե դրանք լսելու-դիտելու ընթացքում գտնեինք ձեր այդ հարցի պատասխանը: Դարգազրույցը՝ ՎԱՐՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ 4 սեպտեմբերի 2015թ., գ. Խնձորեսկ

Մայր հանձորեսկը



ԱՅՎԱԶՅԱՆՆ ԻՐ ՈՒ ԻՐ
ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ

...Ուրեմն ես ծնվել եմ Աստղածորում՝ Բագունց Բախշու երկհարկանի տանը, հայտնի չէ քանի թվականին:

Մայրս ասում է. «Ծնունդից տասն օր հետո «Եղցու ախպուրումը» խաչը ջուրն են գցել: Այդ տարի Ղահրամանին Կտուցը խաչը ջրից հանեց: Դրա համար Նորընծային մի ոսկե տասանոց տվեց: Քահանան օրհնեց Կտուցին ու բուրվառով խուցկի ծխեց նրա առաջ»: Եվ ամեն անգամ իմ աշխարհ գալու մասին, երբ խոսք է բացվում, մայրս միշտ նույն պատմությունն է անում, եւ միշտ Նորընծան բուրվառով Կտուցի առաջ խուցկի ծխելու առթիվ խաչհանում է երեսը: Ու ես չեմ ցանկանում ավելորդ հարցաքննություններով նեղացնել իմ խեղճ, իմ սիրելի մորը: Ասել, որ ամեն տարի էլ Աստղածորում ջրօրհնեք է եղել, ամեն տարի էլ աստվածավախ մեկը մի ոսկե տասանոց տալով խաչը հանել է ջրից:

Ինձ հետ խոսել եմ այդ լեռների ճանփաները, շիրմաքարերն են խոսել եւ ավերակները բերդերի: Սիրո քաղցր շշուկներ են լսել խորհրդավոր այդ ծորերում եւ սիրո դեռ չասված խոսքեր: Ես որդու սիրով եմ սիրել այդ հողը եւ դրա հմայքով եմ ճանաչել հմայքը հողի եւ մարդու:

Այս հանձորեսկը, որ լեռների վրա է,

ծնվել է մի ուրիշ հանձորեսկից, որ լեռների ծոցում, խորախոր ծորերի մեջ է: Նոր հանձորեսկը ոչ մի բանով նման չէ իր ծնողին: Այլ էին նույնիսկ մայր հանձորեսկի ամառներն ու ձմեռները, գարուններն ու աշունները: Այլ էին նրա գիշերներն ու ցերեկները: Կանաչների երկնակամարով անցնող արեւն այն արեւը չէր, որ անցնում էր այս կիսագնդով ու ընկնում մյուս կիսագնդով: Ոչ էլ լուսնայակն էր նույնը: Դրանք միայն հանձորեսկի արեւն ու լուսինն էին, որ դուրս գալով ծախակողմյան ծորերի խորխորատներից, գնում, աջակողմում մտնում էին մթնածորի այրերը:

Չորի երկու կողմերում երկնածորաքերծեր են՝ նման այծենակաճ հագած դուցազունների, որ այդպես թե թեի տված քար են կտրել մի հերոսամարտի ժամանակ:

Բարձր պարսպապատի միջից բարձրանում է երկու, երբեմն երեք հարկանի տունը, ամեն հարկում մի սենյակ՝ լուսամուտով: Այդ բարձր տան շուրջը գլխատունն է, ցախատունը, հացատունը, նորապսակների օթախը, մառանները, ժայռափոր գոմերը եւ այլ օժանդակ շինություններ:

Տափակ, մաքուր աված կտուր, մի

անկյունում կարմիր, կիսած կճուճ, որից պալան-պալան ծուխ է ելնում, կապույտ ծուխ...

Եվ ծխի բույր, եւ չոր խոտի, վառվող աթարի բույր, եւ տաք լավաշի: Կովերի բառաչ, ոչխարների մայուն, աքաղաղների ձիգ-ձգվող կանչ, եւ ձիերի վրձնոց, որից օդն ալիքվում է:

Մարդիկ տան գործած չուխներով՝ կարված այնպես, որ ավելի ընդգծվի քիկունքի լայնությունն ու մեջքերի բարակությունը, ոչխարենու սեւ ու դիք փափախներով, որ ավելի մեծ երեսան իրենք իրենց աչքում եւ իրենց կանանց: Եվ անպայման բեղեր՝ որքան երկար, թավ, այնքան լավ: Սա մեր գյուղն էր:

Տներ երկհարկանի, իրար նման չափած, ձեւած հողակտորներով: Դենը գոմեր իրար նման, խոտի դեզեր իրար նման: Զննիչներ, այլ մեքենաներ...

Դենը կանաչ բլուրներ, դենը տրակտորով վարած հողեր, հնձած արտեր ու չինձած:

Դենը սարեր՝ երկինքը քաշած գլուխներին:

Սա մեր նոր գյուղն է՝ հին գյուղատեղում:

Քո ձեռքերը մայր, քո ձեռքերը: Քո ձեռքերը, մայր, այն առաջին ձեռքերն էին, որ ստեղծեցին կրակը, որոնց մեջ կալվեց առաջին ցորենը, առաջին ցորենը հաց դարձավ:

Դրա համար միշտ տաք էին քո ձեռքերը, եւ կրակի բույր ունեին, եւ ցորենի, եւ հացի...

Դու ինձ համար աշխարհի առաջին տառապալն էիր, դրա համար էլ քո ձեռքերից ծնվեցին աշխարհի առաջին փաղաքշանքները...

Քո ձեռքերը լուռ ճշում էին, լուռ արտասվում, խորհում, թախծում եւ ծիծաղում էին լուռ: Քո ձեռքերը հնարում էին անհնարը եւ օգնում բոլորին: Քո ձեռքերը, քո ձեռքերը:

Մեռնում է հայրս մեր տան մեջ, նրա հետ մեռնում է մեր տան կեսը: Մեռնում է մայրս մեր տան մեջ, նրա մեջ մեռնում է մեր ամբողջ տունը:

Թաղում են մորս, եւ նույն գերեզմանում թաղվում է իմ մանկությունը:

Ես ամբողջ աշխարհն եմ սիրում: Նվիրական ու հարազատ է ինձ համար Տագորի Բենգալիան: Ինձ հարազատ է ամբողջ աշխարհը: Բայց թե մեռնեմ էլ Բոհեմիայի անտառներում, ինձ կթաղեք Ջանգեզուրում:

Ես մարդ եմ, ունեցել եմ ուրախ պահեր, սակայն տառապանքներն ինձ ավելի մոտ են եղել: Լուռ տարել եմ իմ վիշտը, վառվել ուրիշների տառապանքներով:

Մեր սարերի ծաղիկների պես տարբեր հմայք ունեն աշխարհի ժողովուրդները: Աշխարհում իրաշք տեղեր՝ ինչքան ուզեք... բայց թե մեռնեմ էլ Կապրի կղզում, ինձ կթաղեք Ջանգեզուրում:

Ես որդու սիրով եմ սիրել այդ հողը եւ դրա հմայքով եմ ճանաչել հմայքը մի պատառ հողի եւ ամբողջ աշխարհի: Ես ծնվել եմ այդ հողից եւ դառնալով մի բուռ հող, կուզեմ խառնվել այդ հողին, որ չպակասի նրանից մի բուռ հողը աշխարհում:

Դրա համար եմ կտակում, հայրենակիցներ իմ բարի, ուր էլ մեռնեմ աշխարհում, ինձ կթաղեք Ջանգեզուրում:

ԸՍՏ ԱՐԿԱԴԻ ՃԱՏՈՐՅԱՆԻ «ՄԵՐ ԱՅՎԱԶՅԱՆԸ» ԳՐԹԻ ԵՐԵՎԱՆ, 2012

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ԱՅՈՒՆՅԱՆ ԱՇԽԱՐՀ» ԱՄԳՆԱՆԱԲԱԿ ԳՐԱՍՏԱՆԱՆՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Հեռ.՝ Կապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՐՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

ՊՆՆ-ի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Ս 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 6 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 28.09.2015թ.: